ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ.
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

SCIENCE IN SPORT.
MODERN ISSUES



ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ
2023 N 3 (10)
2023 N 3 (10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE
AND SPORT

ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ
И СПОРТА АРМЕНИИ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գիտամեթոդական պարբերական

SCIENCE IN SPORT: MODERN ISSUES

Scientific and methodical journal

НАУКА В СПОРТЕ: СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ

Научно-методический журнал

№ 3 (10)

ԵՐԵՎԱՆ

YEREVAN - 2023

ЕРЕВАН

ISSN 2953-8130

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գրախոսվող գիտամեթոդական պարբերական

Երաշխավորված է տպագրության Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Գիտական խորհրդի որոշմամբ

Պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ–ի գիտական հրատարակությունների ցանկում:

Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ: Գիտամեթոդական պարբերական: Եր.: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, 2023, № 3 (10), 175 էջ:

Պարբերականում ընդգրկված են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի, հանրապետության և այլ երկրների բուհերի դասախոսների և աշխատակիցների գիտահետազոտական ու մեթոդական աշխատանքները: Տեսական և գիտափորձարարական ուսումնասիրությունները նվիրված են ինչպես ֆիզիկական կուլտուրայի, սպորտի, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, ադապտիվ սպորտի բազմաբնույթ հիմնախնդիրներին, այնպես էլ հարակից ոլորտներին: Պարբերականի հոդվածները նախատեսված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի մասնագետների, մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսների, երիտասարդ գիտնականների համար:

Պարբերականի հիմնադիր՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0070, Ալեք Մանուկյան 11

SCIENCE IN SPORTS. CURRENT ISSUES

A Reviewed Scientific Methodical Journal

The publication is guaranteed by the decision of the Scientific Council of Armenian State Institute of Physical Culture and Sport.

The Journal is included in the RA Supreme Certifying Committee (SCC) scientific publication list.

Science in Sports. Current Issues. Yerevan. Armenian State Institute of Physical Culture and Sport, 2023, № 3 (10), page 175.

The journal includes scientific research and methodical works of professors of Armenian State Institute of Physical Culture and Sport, other universities of the republic and other countries. Theoretical and scientific-experimental studies are devoted to physical culture, sports, adaptive physical culture, to the various issues of adaptive sports, as well as to other related fields. The articles of the journal are intended for specialists in the field of physical culture and sports, professors of educational institutions, young scientists.

Founder of the journal, "Armenian State Institute of Physical Culture and Sport" Foundation

11 Alek Manukyan Str., Yerevan 0070, Republic of Armenia
info@sportedu.am

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Խիթարյան Դ. Ս.

մ.գ.թ., պրոֆեսոր (rector@sportedu.am)

Պատասխանատու խմբագիր՝

Չափինյան Ա. Ա.

մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, ashot.chatinyan@sportedu.am)

Խմբագրակազմ

Ղազարյան Ֆ.Գ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, frunz.ghazaryan@sportedu.am)
Հակոբյան Ե. Ս.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, elena.hakobyan@sportedu.am)
Ստեփանյան Լ.Ս.	կ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, lusine.stepanyan@sportedu.am)
Գևորգյան Պ. Հ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՎՊՀ, pargevgevorgyan007@gmail.com)
Մարդոյան Ռ. Ա.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՇՊՀ, mardoyanr@mail.ru)
Թումանյան Հ. Գ.	մ.գ.թ., պրոֆեսոր (Հայաստան, ԵՊՀ, armine.harutyunyan28@mail.ru)
Բաբայան Հ. Ա.	հ.գ.թ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, harutyun.babayan@sportedu.am)
Տեր–Մարգարյան Ն. Գ.	մ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, nune.ter-margaryan@sportedu.am)
Պետրոսյան Տ. Ռ.	կ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, tigran.petrosyan@sportedu.am)
Սիմոնյան Ե. Վ.	լեզվաբան–խմբագիր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, eranuhi.simonyan@sportedu.am)

Միջազգային խմբագրակազմ՝

Սեյրանով Ս. Գ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան, ՌՍՀ «ԳՑՈԼԻՖԿ», rectorat@gtsolifk.ru)
Բուլատովա Մ. Մ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Ուկրաինա, ՈՒՖԿՍԱՀ, dr.bulatova@gmail.com)
Սադովսկի Ե.Վ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Լեհաստան, ՎՖԿՀ, rektorat@awf-bp.edu.pl)
Զոտովա Ֆ. Ռ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան, ՊՖԿՍՏՊԱ, Zfr-nauka@mail.ru)
Զագանիա Ջ. Գ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան, ՎՖԿՍՊՈՒՀ, jemal.dzagania@gmail.com)

SCIENCE IN SPORT: MODERN ISSUES

SCIENTIFIC METHODICAL JOURNAL

Chief editor

D. S. Khitaryan - PhD of Pedagogy, Professor

Responsible Editor

Chatinyan A. A.

Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS, ashot.chatinyan@sportedu.am*)*

Editiorial staff

Ghazaryan F. G.	*Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS,* frunz.ghazaryan@sportedu.am*)*
Hakobyan Y. S.	*Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS,* elena.hakobyan@sportedu.am)
Stepanyan L. S.	*PhD of Biology, Associate Professor (Armenia, ASIPCS,* lusine.stepanyan@sportedu.am*)*
Gevorgyan P.H.	Doctor of Pedagogy, Professor (Armenia, VSU, pargevgevorgyan007@gmail.com)
Mardoyan R.A.	Doctor of Pedagogy, Professor (Armenia, SUSH, mardoyanr@mail.ru)
Tumanyan H. G.	*PhD of Pedagogy, Professor (Armenia, YSU, armine.harutyunyan28@mail.ru)*

Babayan H. A. *PhD of psychology, Associate Professor (Armenia, ASIPCS, harutyun.babayan@sportedu.am)*

Ter-Margaryan N. G. *PhD of Pedagogy, Associate Professor (Armenia, ASIPCS,* nune.ter-margaryan@sportedu.am*)*

Petrosyan T.R. PhD of Biology, Associate Professor (Armenia, ASIPCS, tigran.petrosyan@sportedu.am)

Simonyan E. V. *editor (Armenia, ASIPCS, eranuhi. simonyan@sportedu.am)*

International editorial board:

Seyranov S.G. Doctor of Pedagogy, Professor (Russia, MSAPC, rectorat@rgufk.ru)

Bulatova M. M. Doctor of Pedagogy, Professor (Ukraine, NUUPES, *dr.bulatova@gmail.com*)

Sadowski E. B. Doctor of Pedagogy, Professor (Poland, AWF, rektorat@awf-bp.edu.pl)

Zotova F. R. Doctor of Pedagogy, Professor (Russia, VRSAPCST, *Zfr-nauka@mail.ru*)

Dzagania G. G. Doctor of Pedagogy, Professor (Georgia, GSTUPES, *jemal.dzagania@gmail.com*)

НАУКА В СПОРТЕ: СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ

НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ

Главный редактор

Хитарян Д. С.

к.п.н., профессор, rector@sportedu.am

Ответственный редактор

Чатинян А. А.

д.п.н., профессор (Армения, ГИФКСА, ashot.chatinyan@sportedu.am)

Редакционный совет

Казарян Ф.Г д.п.н., профессор (Армения, ГИФКСА, frunz.ghazaryan@sportedu.am)

Акопян Е. С. д.п.н., профессор (Армения, ГИФКСА, elena.hakobyan@sportedu.am)

Степанян Л. С. к.б.н., доцент (Армения, ГИФКСА, lusine.stepanyan@sportedu.am)

Геворгян П. О. д.п.н., профессор (Армения, ВПУ, pargevgevorgyan007@gmail.com)

Мардоян Р. А. д.п.н., профессор (Армения, ШГУ, mardoyanr@mail.ru)

Туманян Г. Г. к.п.н., профессор (Армения, ЕГУ, armine.harutyunyan28@mail.ru)

Бабаян А. А. к. псих. наук, профессор (Армения, ГИФКСА, harutyun.babayan@sportedu.am)

Тер-Маркарян Н. Г. к.п.н., доцент (Армения, ГИФКСА, nune.ter-margaryan@sportedu.am)

Петросян Т. Р. к.б.н., доцент (Армения, ГИФКСА, tigran.petrosyan@sportedu.am)

Симонян Е. В. редактор (Армения, ГИФКСА, eranuhi.simonyan@sportedu.am)

Международный редакционный совет

Сейранов С.Г. д.п.н., профессор (Россия, РУС, rectorat@gtsolifk.ru)

Булатова М. М. д.п.н., профессор (Украина, УНУФКС, dr.bulatova@gmail.com)

Садовски Е. В. д.п.н., профессор (Польша, ВУФК, rektorat@awf-bp.edu.pl)

Зотова Ф. Р. д.п.н., профессор (Россия, ПГАФКСиТ, Zfr-nauka@mail.ru)

Дзагания Г. Г. д.п.н., профессор (Грузия, ГГУУФКС, jemal.dzagania@gmail.com)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՍՊՈՐՏ. ՕԼԻՄՊԻԶՄԸ, ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՊՈՐՏՈՒՄ	12
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԹԱԼԻՍՄԱՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՊԸ ՕԼԻՄՊԻԶՄԻ ՀԵՏ *Յու. Գ. Գրիգորյան, Ա.Վ.Ավետիսյան*	12
ԲԱԺԻՆ 2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	22
ՈՒՍԵՐԻ ՎՐԱՅԻՑ ՏԱՐԲԵՐ ԲՌՆՎԱԾՔՆԵՐՈՎ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՍԱՄԲՈՅՈՒՄ *Ի. Լ. Բաղդասարյան*	22
ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱՑԱԾ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԱՎԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ *Հ. Ս. Գասպարյան, Ն. Վ. Սելումյան, Ա. Տ. Պետրոսյան*	34
ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՄԲՇԱՄԱՐՏՈՒՄ *Ա. Հ. Մարտիրոսյան*	45
ԱՖՐԻԿՅԱՆ ՎԱԶՈՐԴՆԵՐԻ ՖԵՆՈՄԵՆԸ *Է. Զ. Մարտիրոսյան*	57
ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԳԱՅՈՒՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ *Ա. Տ. Պետրոսյան*	69
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՍՏԻԿԱ. ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ *Ե. Ս. Հակոբյան, Ա. Ա. Կովալյովա*	79
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ–ՄԱՐԶԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ–ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ *Ֆ. Գ. Ղազարյան, Ա. Գ. Ստեփանյան*	93

ԲԱԺԻՆ 3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	103
ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *Ա.Գ. Ստեփանյան, Ա.Գ.Սինանյան*	103
ԲԱԺԻՆ 4.ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ	112
ԳԼԽՈՒՂԵՂԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՄԻՋԿԻՍՖԵՐԱՅԻՆ ԱՍԻՄԵՏՐԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ *Թ. Յու. Ազատյան*	112
ԲԱԺԻՆ 5. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՊՈՐՏՈՒՄ	122
ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏՈՒՄ *Մ.Ս. Բարբարյան, Ն. Է. Գևորգյան*	122
ԲԱԺԻՆ 6. ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԻՎ ՍՊՈՐՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ	134
ՄԿԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՍԱՅԼԱԿՈՎ ԲԱՍԿԵՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄՈՏ *Ե. Լ. Դավթյան, Մ. Ռ. Ասատրյան, Մ. Ռ. Սարգսյան*	134
ԲԱԺԻՆ 7. ՍՊՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ	143
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ «ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ» ԲԱԺՆՈՒՄ *Ս. Գ. Խաչատրյան, Ա. Գ. Ստեփանյան*	143
ՖՈՒՏԲՈԼ ՄԱՐԶԱՁԵՎՈՒՄ GPS ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ *Լ. Ա. Մեծոյան, Մ. Ս. Պողոսյան*	153

CONTENT

SECTION 1. OLYMPIC SPORT: OLYMPISM, OLYMPIC EDUCATION AND LEGACY IN THE MODERN SPORT	12
THE SIGNIFICANCE OF THE PERCEPTION OF THE MASCOTS OF THE YOUTH OLYMPIC GAMES FOR NATIONS AND THEIR CONNECTION WITH OLYMPISM *Yu.G.Grigoryan, A.V.Avetisyan*	12
SECTION 2. PEDAGOGICAL ISSUES OF PHYSICAL CULTURE AND SPORT	22
METHODOLOGY FOR IMPROVING TRICKS PERFORMED WITH DIFFERENT GRIPS FROM THE SHOULDERS IN SAMBO *I. L. Baghdasaryan*	22
REASONS OF YOUNG GYMNASTS' SPORTS CAREER TERMINATION H. S. Gasparyan, N. V. Selumyan, A. T. Petrosyan	34
ANALYSIS OF THEORETICAL APPROACHES TO SPORTS ORIENTATION AND SELECTION IN WRESTLING *A.H. Martirosyan*	45
THE PHENOMENON OF AFRICAN RUNNERS E. Z. Martirosyan	57
STUDY OF SENSITIVE PERIODS OF PRIMARY SCHOOLCHILDREN MOTOR ABILITY DEVELOPMENT *A. T. Petrosyan*	69
PLASTIC MOVEMENTS: THE ESSENCE AND APPROACHES TO THE STUDY *E. S. Hakobyan, A. A. Kovalyova*	79
ADDITIONAL PHYSICAL EDUCATION , SPORT AND WELLNESS CLASSES IN THE SYSTEM O SCHOOL PHYSICAL EDUCATION *F. G. Ghazaryan, A. G. Stepanyan*	93

SECTION 3. PSYCHOLOGICAL ISSUES OF PHYSICAL CULTURE AND SPORT	103
FEATURES OF IMPROVING THE PROCESS OF PSYCHOLOGICAL SUPPORT IN SPORTS ACTIVITIES *G. Stepanyan, A. H. Sinanyan*	103
SECTION 4. MEDICAL BIOLOGICAL ASPECTS OF SPORT ACTIVITY AND HEALTHY LIFE STYLE	112
MODERN ASPECTS OF BRAIN FUNCTIONAL INTERHEMISPHERIC ASYMMETRY STUDY *T. Y. Azatyan*	112
SECTION 5. ISSUES OF PHYSICAL REHABILITATION IN SPORT	122
METHODOLOGICAL APPROACHES TO INJURY PREVENTION IN FREESTYLE WRESTLING *M. S. Barbaryan, N. E. Gevorgyan*	122
SECTION 6. ADAPTIVE PHYSICAL CULTURE AND ADAPTIVE SPORTS IN THE MODERN WORLD	134
STUDY OF MUSCLE SYSTEM TENSION OF WHEELCHAIR BASKETBALL PLAYERS *E.L. Davtyan, M.R. Asatryan, M.R. Sargsyan*	134
SECTION 7. INNOVATIVE TECHNOLOGIES IN THE PROCESS OF SPORT MANAGEMENT	143
FEATURES OF THE USE OF MODERN TECHNOLOGIES IN THE SECTION "HEALTHY LIFESTYLE" IN PUBLIC SCHOOLS AT "PHYSICAL CULTURE" *S. G. Khachatryan, A. G. Stepanyan*	143
GLOBAL EXPERIENCE OF GPS SYSTEM APPLICATION EFFICIENCY IN FOOTBALL *L. A. Metsoyan, M. S. Poghosyan*	153

ԲԱԺԻՆ 1. ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՍՊՈՐՏ. ՕԼԻՄՊԻԶՄԸ, ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՊՈՐՏՈՒՄ

UDC 796.032 **DOI: 10.53068/25792997-2023.3.10-12**

THE SIGNIFICANCE OF THE PERCEPTION OF THE MASCOTS OF THE YOUTH OLYMPIC GAMES FOR NATIONS AND THEIR CONNECTION WITH OLYMPISM

Yu. G. Grigoryan, A. V. Avetisyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

Key words: Olympic Games, mascot, Olympic flag, culture, animal.

Research relevance: The Olympic Games is undoubtedly the world's greatest sporting competition and visual exhibition and is, perhaps, the most important international event with considerable social, cultural, and economic implications [2].

The mascot, torch, and medals serve as highly effective tools for expressing the visual design concept associated with these items. Through careful observation of the ideas showcased in each Olympic Games, one can discern the host country's sport spirit and cultural characteristics [7].

The Olympic mascots serve as representatives of the host city for a period of three years leading up to and during the Games. In this significant role, mascots are considered icons, representing and symbolizing something beyond themselves. Therefore, the mascots themselves become icons of the city that is hosting the Games [4].

According to the International Olympic Committee, the Olympic mascots are referred to as "the ambassadors of the Olympic and Paralympic Games." They symbolize the essence of the Olympics and fulfill a crucial function by warmly welcoming athletes and visitors to the Games [1]. They are important carriers of Olympic culture. They embody the Olympic spirit and also convey the concept of hosting the Olympic Games, the history, culture and humanistic spirit of the host city [6].

In the history of the Olympic Games, mascots first appeared in 1972, at the Munich Summer Olympics. Then the mascots became mandatory in the Olympic Games. They are one of the best ways to get youth in the Olympic spirit and to get kids involved, with the visible face and popularity of the Olympic Games. In this direction, the

use of mascots for advertising and popularization of the Olympic Games has become inevitable.

Young athletes (even child athletes) have always participated in the Olympic Games, but the holding of the Youth Olympic Games (YOG) is a new step in the systematic dissemination of elite sports among the child population [5].

As stated by Jacques Rogge, President of the International Olympic Committee from 2001-2013, "The vision of the Youth Olympic Games is to inspire young people around the world to play sports, to be part of sports, and to teach the traditional values of the Olympic Games, which are the pursuit of excellence, friendship and mutual respect, and also respect for social values such as the environment. It is important that young people learn about important issues such as the benefits of a healthy lifestyle, the dangers of doping and the role of acting as sports ambassadors in their communities" [12].

Research aim: The aim of the of the research was to reveal the significance of the mascots of the Youth Olympic Games for the nations from the point of view of perception and their connection with the Olympic ideas and values.

Research methods and organization: During the research, 7 mascots of the Youth Olympic Games were studied. The method of studying and analyzing literature sources was applied.

Research result analysis: The mission of Youth Olympic Games is to “Organize an event to educate, engage and influence young athletes inspiring them to have an active role in their communities” [15].

The format of the Youth Olympic Games is every four years with the first inaugural Games in Summer 2010 and in Winter 2012 [3].

In 2010, The Youth Olympic Games took place in Singapore. The mascots of the games were Lyo (pronounced Leo) and Merlin. Lyon is short for "Lion of the Youth Olympics" (Picture 1-a). In their roles as mascots for Singapore 2010, Lyo, a lion cub, represents the values of Excellence and Friendship, while Merly, a merlion, embodies the values of Excellence and Respect. Through their engaging deeds and captivating narratives, they will actively promote the Olympic Values of Excellence, Friendship, and Respect [19].

a

b

c

d

e

f

g

Picture 1. Youth Olympic Games mascots

According to the SYOGOC [13], “Lyo is short for ‘Lion of the Youth Olympics’. A sports lover, he is fun-loving and hopes to inspire young people to keep fit and enjoy sport for life. He symbolizes young people’s boundless energy, their determination to live life to the fullest and zeal to strive for excellence”. The second mascot, “Merly, got her name from ‘mer’ (meaning the sea) and ‘ly’ stands for liveliness and youthfulness. A passionate advocate of environmental protection, Merly believes that everyone has

unique a role in striving towards a sustainable future. She also wants to encourage young people to play an active role in their communities and promote respect for one another".

Yoggl (Picture 1-b) was the Innsbruck 2012's mascot and it was presented to the public at the opening of the Youth Olympic Games Snow Festival in the center of Innsbruck. The name Yoggl is based on the rustic nickname "Joggl" for Jakob, which is a traditional and very common Tyrolean name, adjusted with a "Y" at the beginning. The name contains the abbreviation "YOG", making the mascot part of the Youth Olympic Games. Yoggl's sporty appearance reflects the athletic aspect of the Games, and his youthful character sparked the enthusiasm of young people from all over the world for the first Winter Youth Olympic Games as well as the Olympic values of friendship, respect and excellence [16].

The 2014 Summer Youth Games took place in Nanjing, where the mascot was Nanjinglele (Picture 1-c). In its written form, the name is made up of two identical Chinese characters: 砺砺. The one on the left represents the rain flower stone, while the one on the right is the symbolic name of Nanjing ("the City of the Stone"). "Lele" refers to the noise Yuhua stones make when they come into contact with each other and is pronounced in the same way as the Chinese word meaning "happiness" or "joy" [10].

Nanjing is famous for its Yuhua stones, which lie on the bed of the Yangtze River and are slowly polished smooth by action of the water. Known as "rain flower stones", these alluring, translucent pebbles come in shades of red, pink, yellow, white and green. Nanjinglele wears the colour red as a sign of enthusiasm, blue to signify kindness and selflessness; yellow to symbolise motivation and initiative and green to adhere to vitality and a peace-loving spirit. As we can see, Nanjinglele represents four colors of the Olympic flag [20].

In 2016, Norwegian Lillihammer hosted the Winter Youth Olympic Games. The mascot was Sjogg (Picture 1-d), a sporty-looking lynx whose clothing illustrates the look of the Winter Youth Olympic Games Lillehammer 2016 [8].

In 2018, and for the first time ever, the YOGs were held outside Eurasia and in the southern hemisphere [14]. The mascot, #Pandi (Picture 1-e), is inspired by the jaguar. The name combines its scientific name (Onca panther) with the acronym "di", because of its high digital profile. The mascot will seek that youth embrace sports as a tool to build a better world, and to raise awareness about the current dangers faced

by jaguars in order to survive. Olympic mascots are ambassadors of the Games and have a fundamental role in spreading the values of friendship, respect and excellence [9].

Yodli, the mascot of the 2020 Lausanne Youth Winter Olympic Games,is a hybrid animal, composed of several emblematically Swiss animals that live in the Swiss mountains: a cow, a goat and, of course, a St. Bernard dog (Picture 1-f). Their different characteristics and relationships with the environment are embodied in Yodli, who signifies the diversity of the participants of the Winter Youth Olympic Games Lausanne 2020 [17].

Yodli's name was suggested by a group of children (10-12 years old) who attended a workshop to help the Organizing Committee with their search. The name was inspired by yodelling, a singing technique performed in Switzerland and part of France, the two countries that hosted the Games [11].

The Dakar Youth Olympic Games were originally scheduled to be held from October 22 to November 9, 2022, but due to the COVID-19 pandemic, the event was postponed until 2026.

The 2024 Winter Youth Olympic Games will be held in Gangwon. The Organizing Committee of the 2024 Winter Youth Olympic Games in Gangwon (YOGOC) unveiled the mascot "Moongcho". Moongcho comes from the Korean word "Moongchida", which means to bring together various thoughts and powers. The mascot is a snowball emanating from a fight between Soohorang and Bandabi, the mascots of the Pyeong Chang 2018 Olympic and Paralympic Winter Games [18].

Conclusion: Studying the mascots of the Youth Olympic Games, we can note that they are mostly presented in the form of animals. It is noteworthy that the mascots express some element of national culture, or, in other words, express the culture of the city or country representing the Games. Here it is necessary to emphasize that mascots are an excellent way to present the culture and history of a country or city to the whole world thanks to the Games.

The mascots of the Youth Olympic Games express the fundamental values of Olympism, carry the colors of the Olympic flag, are a source of inspiration and striving for excellence among young people, and are a call to all mankind to make the world better, cleaner and peaceful.

🕮 REFERENCES

1. Chiabaut, I. (2021). Tokyo 2020 official mascots and their contribution to the promotion of Japan's culture and legacy. Diagoras: International Academic Journal on Olympic Studies, 5, 89-100.
2. Freeman, I., Knight, P. and O'Reilly, N. (2007) 'Symbolism and the effectiveness of Olympic mascots', Int. J. Sport Management and Marketing, Vol. 2, Nos. 1/2, pp.41–58.
3. Georgiadis, K. (2008). The Youth Olympic Games. In 8th International Session for Educators and Officials of Higher Institutes of Physical Education (1st ed.). Ancient Olympia: International Olympic Academy
4. Gerald Griggs , Ina Freeman , Peter Knight & Norman O'Reilly (2012): A visionof London in the twenty-first century or just terrifying monsters: a semiotic analysis of the officialmascots for the London 2012 Olympic and Paralympic Games, Leisure Studies, 31:3, 339-354
5. Jim Parry. The Youth Olympic Games – Some Ethical Issues. Sport, Ethics and Philosophy 6, no. 2 (2012): 138–54 ант
6. Jing Yang. Discussion on Olympic Mascots and Economic Value. Modernization of Shopping Malls (502), 2007. pp. 368-369.:
7. J. Zhang, "A study on the visual image design of the Rio Olympic Games 2016," 2017 International Conference on Applied System Innovation (ICASI), Sapporo, Japan, 2017, pp. 970-972, doi: 10.1109/ICASI.2017.7988614
8. Lillehammer Youth Olympic Games Organising Committee (2016). Magne Vikøren. 07 Media AS – Aurskog, 2016, 133p. Retrieved from https://stillmed. olympic. org/media/Document%20Library/OlympicOrg/Olympic-Studies-Centre/List-of-Resources/Official-Publications/Official-Reports-YOG/Lillehammer-2016-Official-Report.pdf
9. Media guide: Buenos Aires 2018 Youth Olympic Games / Buenos Aires Youth Olympic Games Organising Committee Summer Youth Olympic Games. Organizing Committee. 3, Buenos Aires, 2018. Retrieved from https://library. olympics.com /Default/doc/SYRACUSE/176462/media-guide-buenos-aires-2018-youth-olympic-games-buenos-aires-youth-olympic-games-organising-commit?_lg=en-GB

10. Official report of the 2nd Summer Youth Olympic Games : Nanjing 2014 : share the games, share our dreams / Nanjing Youth Olympic Games organising committee. 2015, 142p. Retrieved from https://library. olympics.com/Default/doc/ SYRACUSE/ 38856/official-report-of-the-2nd-summer-youth-olympic-games-nanjing-2014-share-the-games-share-our-dreams-?_lg=en-GB
11. Official report: Lausanne 2020 : Winter Youth Olympic Games / Lausanne 2020 Winter Youth Olympic Games. Organizing Committee. 3, Lausanne, 2020. Retrieved from https://library.olympics.com/Default/doc/SYRACUSE/ 470908/ official-report-lausanne-2020-winter-youth-olympic-games-lausanne-2020?_lg=en-GB
12. Rogge, J. (2009). Interview with IOC President Jacques Rogge. Olympic Review, vol. 71, pp. 33–35.
13. Singapore Youth Olympic Games Organising Committee. (2010). Singapore 2010 Youth Olympic Games official report: Blazing the trail. Singapore: Singapore Youth Olympic Games Organising Committee, p. 24. Retrieved from https://stillmed. olympic.org/Documents/YOG/2010/Singapore_2010-Official_Report.pdf
14. Steffen K, Soligard T, Mountjoy M, et al. How do the new Olympic sports compare with the traditional Olympic sports? Injury and illness at the 2018 Youth Olympic Summer Games in Buenos Aires, Argentina. Br J Sports Med. 2020;54(3):168-175. doi:10.1136/bjsports-2019-101040
15. https://olympic.ca/2010/05/26/coc-announces-chief-medical-officer-and-young-ambassador-for-singapore-2010/
16. https://olympics.com/en/olympic-games/innsbruck-2012/mascot
17. https://olympics.com/en/olympic-games/lausanne-2020/mascot
18. https://www.hangzhou2022.cn/En/presscenter/globalevents/202301/t20230120_55529.shtml
19. https://www.triathlon.org/news/article/introducing_lyo_and_merly_-_mascots_for_the_first_youth_olympic_games
20. https://olympics.com/en/olympic-games/nanjing-2014/mascot

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԹԱԼԻՍՄԱՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՊԸ ՕԼԻՄՊԻԶՄԻ ՀԵՏ

Յու. Գ. Գրիգորյան, Ա. Վ. Ավետիսյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Առանցքային բառեր: Օլիմպիական խաղեր, թալիսման, օլիմպիական դրոշ, մշակույթ, կենդանի:

Հետազոտության արդիականություն: Օլիմպիական խաղերի պատմության մեջ թալիսմաններն առաջին անգամ ի հայտ եկան 1972 թվականին՝ Մյունխենի ամառային օլիմպիական խաղերում: Այնուհետև օլիմպիական խաղերում թալիսմանները պարտադիր դարձան: Թալիսմանը, ջահը և մեդալները ծառայում են որպես այս իրերի հետ կապված տեսողական դիզայնի հայեցակարգն արտահայտելու շատ արդյունավետ գործիքներ: Ուշադիր դիտարկելով յուրաքանչյուր օլիմպիական խաղերում ցուցադրվող գաղափարները՝ կարելի է տարբերել ընդունող երկրի մարզական հոգին և մշակութային առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը: Բացահայտել Պատանեկան օլիմպիական խաղերի թալիսմանների նշանակությունը ժողովուրդների համար ընկալման և օլիմպիական գաղափարների ու արժեքների հետ կապի տեսանկյունից:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են Պատանեկան օլիմպիական խաղերի 7 թալիսմաններ: Կիրառվել է գրականության աղբյուրների ուսումնասիրության և վերլուծության մեթոդը:

Ստացված արդյունքների վերլուծություն: Պատանեկան օլիմպիական խաղերի առաքելությունն է՝ «կազմակերպել միջոցառում՝ կրթելու, ներգրավելու և ազդելու երիտասարդ մարզիկների վրա՝ ոգեշնչելով նրանց ակտիվ դերակատարում ունենալ իրենց համայնքներում»: Ուսումնասիրելով պատանեկան օլիմպիական խաղերի թալիսմանները՝ կարող ենք նշել, որ դրանք հիմնականում ներկայացված են կենդանիների տեսքով: Հատկանշական է, որ թալիսմաններն արտահայտում են ազգային մշակույթի ինչ-որ տարր, կամ, այլ կերպ ասած, արտահայտում են խաղերը ներկայացնող քաղաքի կամ երկրի մշակույթը:

Համառոտ եզրակացություն: Պատանեկան օլիմպիական խաղերի թալիս-մաններն արտահայտում են օլիմպիզմի հիմնարար արժեքները, կրում են օլիմպիական դրոշի գույները, ոգեշնչման աղբյուր և գերազանցության ձգտում են երիտասարդների շրջանում և աշխարհին ավելի լավը, ավելի մաքուր և ավելի խաղաղ դարձնելու կոչ են համայն մարդկությանը:

ЗНАЧЕНИЕ ВОСПРИЯТИЯ ТАЛИСМАНОВ ЮНОШЕСКИХ ОЛИМПИЙСКИХ ИГР ДЛЯ НАРОДОВ И ИХ СВЯЗЬ С ОЛИМПИЗМОМ

Ю. Г. Григорян, А. В. Аветисян
Государственный институт физической культуры и спорта Армении Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: Олимпийские игры, талисман, олимпийский флаг, культура, животные.

Актуальность исследования. В истории Олимпийских игр талисманы впервые появились в 1972 году на летних Олимпийских играх в Мюнхене. Потом талисманы стали обязательными на Олимпийских играх. Талисман, факел и медали служат очень эффективными инструментами для выражения концепции визуального дизайна, связанного с этими предметами. Присмотревшись к идеям, демонстрируемым на каждой Олимпиаде, можно различить спортивный дух и культурные особенности принимающей страны.

Цель исследования. Выявить значимость талисманов Юношеских Олимпийских игр для народов с точки зрения восприятия и связи с олимпийскими идеями и ценностями.

Методы и организация исследования. В ходе исследования были изучены 7 талисманов Юношеских Олимпийских игр. Был использован метод изучения и анализа литературных источников.

Анализ полученных результатов. Миссия юношеских Олимпийских игр состоит в том, чтобы «организовать мероприятие для обучения, вовлечения и влияния на молодых спортсменов, вдохновляя их на активную роль в своих сообществах». Изучая талисманы Юношеских Олимпийских игр, можно отметить, что в основном они представлены в виде животных. Примечательно, что талисманы выражают какой-то

элемент национальной культуры, или, другими словами, выражают культуру города или страны, представляющей игры.

Краткие выводы. Талисманы юношеских Олимпийских игр выражают фундаментальные ценности олимпизма, несут цвета олимпийского флага, являются источником вдохновения и стремления к совершенству у молодежи, призывом ко всему человечеству сделать мир лучше, чище и миролюбивее.

Տեղեկություններ հեղինակների մասին

Յուրա Գրիգորի Գրիգորյան՝ ՖԴՏ, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, Email: yura.grigoryan@sportedu.am

Արման Վաչագանի Ավետիսյան՝ ՖԴՏ, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի ասպիրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, Email: arman.avetisyan@sportedu.am, ORCID 0000-0002-0303-3612

Information about the authors

Yura Grigor Grigoryan, Associate Professor of the Chair of Physical Education and Methodology, and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, Email: yura.grigoryan@sportedu.am

Arman Vachagan Avetisyan, Ph.D. student of the Chair of Physical Education and Methodology, and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, Email: arman.avetisyan@sportedu.am, ORCID 0000-0002-0303-3612

Հոդվածն ընդունվել է 25.08.2023–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 26.08.2023–ին:
Գրախոս՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ. Բաբայան

ԲԱԺԻՆ 2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՏԴ 796.8 DOI: 10.53068/25792997-2023.3.10-22

ՈՒՍԵՐԻ ՎՐԱՅԻՑ ՏԱՐԲԵՐ ԲՌՆՎԱԾՔՆԵՐՈՎ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՍԱՄԲՈՅՈՒՄ

Ի. Լ. Բաղդասարյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Սամբո, բռնվածք, հնարքների տեխնիկա, պատանի սամբիստներ, վարժություններ, մարզիչ:

Հետազոտության արդիականություն: Սամբոն մի խումբ մասնագետների ստեղծագործական մտահաղացումների և միասնական աշխատանքի արդյունք է, որը ձևավորվել է աշխարհի ժողովուրդների ազգային ըմբշամարտի ձևերի տեխնիկական հնարքներից ընտրված լավագույն տարրերի հիման վրա (ջիուջիցու, չիդաոբա, կոխ, տրնտի, գուլաշ և այլն) [1]:

Սամբոյով այսօր աշխարհի տարբեր երկրներում մարզվում են շատ պատանիներ և աղջիկներ, կանոնավոր կերպով անցկացվում են Եվրոպայի, աշխարհի առաջնություններ և միջազգային մրցաշարեր:

Սամբոյում գոյություն ունեն շատ տեխնիկական հնարքներ, որոնց ուսուցման մեթոդիկան և դրա օպտիմալացումը դարձել են մարզման գործընթացի կազմակերպման կարևոր խնդիր: Սամբոյում տեխնիկական գործողությունը պետք է կատարվի մեծ կորագծով և հստակ, միաժամանակ պետք է ապահովվի մրցակցի անվնաս ընկնումը գորգին: Այստեղ կարևոր նշանակություն ունի ինչպես ամբողջական տեխնիկայի առանձին տարրերին տիրապետումը, այնպես էլ այդ տարրերի ուսուցման և կատարելագործման գործընթացում համապատասխան մեթոդիկայի ընտրությունը:

Առանց սկզբնական ուսուցման համակարգի կատարելագործման, անհնար է սամբոյում հասնել մեծ նվաճումների, քանի որ հենց այստեղ են դրվում տեխնիկատակտիկական գործողությունների ճիշտ կատարման հիմքերը: Այս բոլոր վկայում են այն մասին, որ սամբոյում շատ կարևոր նշանակություն ունեն հնարքների ուսուցման մեթոդիկայի օպտիմալացումը [2]:

Ուսերի վրայից տարբեր բռնվածքներով հնարքի կայացման կարևոր տարր պետք է համարել նաև մրցակցին պտտելը, որի դեպքում նա պետք է թիակներով ընկնի գորգի վրա այնպես, որ չկարողանա ընտրել հարմար պաշտպանություն, կամ ընդունել կամուրջ դրություն: Դրա համար գրոհողը պետք է իր մրցակցին ամուր բռնի և կտրի գորգից, որպեսզի նա իր մարմնի որևէ մասով չկարողանա հենվել գորգին և պաշտպանվել:

Նման հետազոտություններ անցկացվել են Բ.Մ. Ռիբալկոյի կողմից (1972թ), որի տվյալների հետ մեր արդյունքները գրեթե համընկնում են, բացառությամբ կրծքի մեծ մկանի, ինչպես գործունեության, այնպես էլ նրա լայնույթի (ամպլիտուդ) բնութագրման առումով: Մեր տվյալներով այն գրեթե հավասարվում է ստորին վերջույթների ամպլիտուդային մեծությանը [6]:

Այսպիսով՝ ուսերի վրայից գցումներն ավելի արդյունավետ են ստացվում, եթե կատարվում են մրցակցին գորգից արագ կտրելու հաշվին, ինչպես նաև իրանի, ոտքերի և մյուս մկանախմբերի համատեղ աշխատանքի շնորհիվ. կան բոլոր հիմքերը համարելու, որ յուրաքանչյուր մկանախմբի զարգացում ուսերի վրայից գցումներում զգալիորեն բարձրացնում է տեխնիկական գործողության կատարման արդյունավետությունը:

Հետազոտության նպատակը: Մշակել և գիտափորձով ուսումնասիրել սամբոյում ուսերի վրայից տարբեր բռնվածքներով հնարքների կատարելագործման մեթոդիկայի արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակի իրականացումը նախատեսում է մի շարք խնդիրների լուծում.

1. Բացահայտել ուսերի վրայից տարբեր բռնվածքներով (ոտքի, ձեռքի, գլխի և պարանոցի) կատարվող գցումների տեխնիկայի ուսուցման մեթոդիկաները:

2. Ընտրել պատանի սամբիստների հատուկ ուժային և արագաուժային պատրաստության վարժություններ և գիտափորձում հիմնավորել ուսերի վրայից հնարքների ուսուցման մեթոդիկայի արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպում: Հետազոտության խնդիրների լուծման համար օգտագործել ենք հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրական աղբյուրների ուսումնասիրություն և վերլուծություն, սոցիոլոգիական հարցում, մանկավարժական դիտումներ, գիտափորձ և թեստավորում, մաթեմատիկական վիճակագրություն

Մանկավարժական դիտումները կազմակերպվել են Երևան և Աբովյան

քաղաքների սամբոյի մարզադպրոցներում՝ 10-12 տարեկան 20 պատանի սամբիստների հետ, որը տևել է 3 ամիս, կազմակերպվել է սոցիոլոգիական հարցում՝ 15 մարզիչների և նույնքան կարգային սամբիստների հետ: Պատանի սամբիստների ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստության վարժությունները կատարել ենք հատուկ ուժաչափ սարքի միջոցով: Ուսերի վրայից տարբեր բռնվածքով հնարքների կատարման որակը գնահատվել է փորձագետների կողմից 10 միավորանոց սանդղակով: Որպես փորձագետ՝ ներգրավվել էին սամբոյի 15 փորձառու մարզիչներ, որոնց մարզչական ստաժը կազմում էր միջինը 15-25 տարի:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Սամբոյում գոյություն ունեն ուսերի վրայից գցումներ, որոնք դասվում են առավել արդյունավետ հնարքների շարքին: Այդ պատճառով էլ դրանց ուսուցման գործընթացում մասնագետները միանման մոտեցում չեն ցուցաբերում: Մասնագետների մի մասը գտնում է, որ ուսերի վրայից կատարվող գցումները մեծ ֆիզիկական ուժ պահանջվող հնարքներ են, ուստի դրանց տիրապետելու համար սամբիստներից պահանջվում է ընդհանուր և հատուկ ֆիզիկական լավ պատրաստվածություն: Շատ մարզիչներ այդ հնարքների ուսուցման գործընթացը գտնում են, որ հնարքը դասվում է բարդ հնարքների շարքին և մարզման 3-6 ամիսներից հետո կարելի է ուսուցանել: Թե մեկ, և թե մյուս տեսակետի կողմնակիցները դեմ չեն, որպեսզի ուսերի վրայից գցումների ուսուցման գործում ցուցաբերվի անհատական մոտեցում, քանի որ սկզբնական շրջանում մարզադահլիճ եկած պատանիները միևնույն ֆիզիկական պատրաստականություն չեն ունենում:

Մեր հետազոտությունում որպես հիմք հաշվի է առնվել սույն հիմնահարցի մասին մասնագետների երկու խմբերի կարծիքները հավասարապես:

Սամբոյի մասնագետները՝ ուսերի վրայից հնարքի կատարման համար, իր մարզչական գործունեության ընթացքում մի շարք վարժությունների տարբերակներ են մշակել: Սակայն մենք դրանից առաջնությունը տվել ենք այն տարբերակին, որի ժամանակ մրցակիցը գտնվում է ճակատային բարձր և միջին կանգնվածքում, այսինքն՝ երբ սկզբնական փուլում սամբիստների ոտքերը դրվում են նույն գծի վրա 1-1.5 քայլ իրարից հեռու [3,5]:

Պարանոցի բռնվածքով ուսերի վրայից գցումների ուսուցման ընթացքում, որոշ մարզիչներ մարզման գործընթացում թույլ են տալիս բավականին լուրջ սխալներ: Այդ սխալները մասամբ վերագրվում են սամբիստների ֆիզիկական ցածր պատրաստականությանը և անբավարար

տեխնիկային, այդ պատճառով խորհուրդ է տարվում սկզբնական շրջանում հնարքը փորձել կատարել թեթևքաշային սամբիստի հետ, աստիճանաբար այն կատարել ավելի ծանրքաշային սամբիստի հետ, սկզբում հնարքը կատարել առանց դիմադրության, այնուհետև փորձել դիմադրությունը շարունակաբար ավելացնել [4]:

Մրցակցական գոտեմարտերում պատանի սամբիստներին մարզիչը կարող է թույլատրել այդ հնարքը կատարել միայն այն դեպքում, եթե նա համոզված է, որ իր սաներն ամբողջությամբ տիրապետում են ազդրի և պարանոցի բռնվածքով ուսերի վրայից ճիշտ գցելու տեխնիկային: Ուսերի վրայից տարբեր բռնվածքներով հնարքների կիրառության դինամիկայի բացահայտման նպատակով նշված տարիքի հանրապետական մրցումներում լրացուցիչ կատարվել է մրցակցական տեխնիկայի հետազոտություն: Հետազոտվել է ուսերի վրայից գցումների քանակը և որակը, ինչպես նաև կատարվել է արդյունքների ամփոփում: Հետազոտությունները մեզ հնարավորություն տվեցին հաստատել, որ սամբոյի պատանի սամբիստների կողմից մրցումների և ուսումնամարզական պարապմունքների ժամանակ պատանի սամբիստները հաճախակի են կիրառել նաև տարբեր բռնվածքներով ուսերի վրայից կատարվող հետևյալ հնարքները՝ բռնած մրցակցի գլուխը և ոտքը (բռնած մրցակցի պարանոցը և ոտքը, բռնած մրցակցի մարզահագուստի դարսածալը, ոտքը, օձիքը և այլն):

Ուսերի վրայից տարբեր բռնվածքներով հնարքների տեխնիկայի ուսուցումը նախատեսվել է իրականացնել մի քանի փուլերով:

Հետազոտության խնդրի լուծման նպատակով կազմակերպվել է սոցիոլոգիական հարցում, որում նպատակ է դրվել բացահայտել պատանի սամբիստների կողմից տարբեր բռնվածքներով ուսերի վրայից կատարվող գցումների ուսուցման ընթացում մարզիչների կողմից կիրառվող մեթոդները և մոտեցումները: Սոցիոլոգիական հարցման մասնակցել են Հայաստանի Հանրապետության սամբոյի 15 մարզիչներ և նույնքան կարգային սամբիստներ: Հարցման մասնակցած մարզիչների մարզական ստաժը կազմել է 12-25 տարի:

Սոցոլոգիական հարցման համար մշակվել է հատուկ հարցաթերթիկ, որը բաղկացած է եղել 14 բաց և փակ հարցերից: Մարզիչների 25,0% այն կարծիքին է, որ ուսերի վրայից գցումները պետք է ուսուցանել մարզման առաջին կիսամյակում, նրանց մի մասը ճիշտ է համարում ուսուցումը սկսել ուսումնամարզական տարվա երկրորդ կիսամյակում՝ 20.0%, մարզիչների մեկ այլ խումբ՝ 40.0% համա-

րում են, որ այդ հնարքները պատանիների համար վնասվածքներ կարող են առաջացնել, հետևաբար անհրաժեշտ է ուսուցանել ուշ՝ այսինքն 5-6 ամիս հետո, երբ որ սկսնակ սամբիստները ֆիզիկապես կամրապնդվեն և ինքնաապահովումներին լավ կտիրապետեն:

Հարցվողների մեջ նաև կային այնպիսի մարզիչներ, որոնց խորհուրդ են տալիս ուսերի վրայից գցումներն ուսուցանել ծրագրային նյութի հետ ամբողջությամբ կամ մասնակի ծանոթացնելուց հետո, այդպիսի կարծիք են արտահայտել մարզիչների 15,0%: Սամբոյում տարբեր բռնվածքներով ուսերի վրայից կատարվող գցումների ուսուցման գործընթացի օպտիմալացման նպատակով ընտրվել են մի խումբ ընդհանուր և հատուկ վարժություններ:

Կազմակերպել է մանկավաժական գիտափորձ, որում ընգրկվել են 10-12 տարեկան 20 պատանի սամբիստներ: Գիտափորձում ընդգրկված պատանի սամբիստների համար ընտրվել է ֆիզիկական պատրաստության հատուկ վարժություններ մեջքի, պարանոցի, ազդրի, սրունքի ծալիչ և տարածիչ մկանների համար՝ պոկում կշռաքարով և ծանրաձողը կրծքին կքանստելով, կամուրջ արտակորումով, ինչպես նաև ուսագոտու և հատկապես ձեռքի մկանախմբերի զարգացման մեկ տասնյակից ավելի ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստության վարժություններ:

Սամբոյում ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության բավարար մակարդակն առաջին հերթին կայուն հիմք է ստեղծում սամբիստի հատուկ ֆիզիկական պատրաստության համար, նպաստում է սամբիստի տեխնիկական գործողությունների ուսուցման գործընթացի օպտիմալացմանը և այն դարձնում է առավել դյուրին: Հատուկ ֆիզիկական պատրաստության վարժությունների ընտրության գլխավոր իմաստը կայանում է նրանում, որպեսզի դրանք նպաստեն ուսուցանվող հնարքների մասնագիտական շարժողական ընդունակությունների զարգացմանը, որոնք կարող են առավել արդյունավետորեն նպաստել ուսերի վրայից գցումների ուսուցմանը:

Երաշխավորված վարժությունների ցանկը բաղկացած է արագային, արագաուժային ճկունության ուղղվածության, որտեղ առաջնային է համարվում ծանրություններով կքանստած տեղից կտրուկ վերկանգերը:

Փորձնական մեկամյա աշխատանքների ընթացքում փորձարարական և ստուգողական խմբերում կազմակերպվել և իրականացվել են ուսումնամարզական 77 պարապմունք: Յուրաքանչյուր պարապմունքի տևողությունը կազմել է 2

ժամ: Փորձարարական խմբերում մարզումները կազմակերպվել և անցկացվել են սույն հետազոտության հեղինակի կողմից, իսկ ստուգողական խմբերում պարապմունքներն ընթացել են սամբոյի մարզադպրոցների համար գործող պետական ծրագրին համապատասխան:

Պատանի սամբիստների օրգանիզմի վրա թողած ազդեցությունը վերահսկվել է սպորտային բժիշկների կողմից: Այսպես՝ հատուկ վարժությունների և դրանց համալիրների կատարման դեպքում բեռնվածությունը վերսկսվել է անոթազարկերով, որը տատանվել է րոպեում 130-150 զարկ: Մինչ մանկավարժական գիտափորձը և դրանից հետո, կազմակերպվել է պատանի սամբիստների բժշկական զննում, ինչպես նաև նախնական մանկավարժական թեստավորում՝ կապված պատանի սամբիստների ֆիզիկական զարգացման, շարժողական և տեխնիկական պատրաստվածության ցուցանիշների հետազոտման հետ:

Աղյուսակ 1.

10-12 տարեկան պատանի սամբիստների ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության շարժընթացն ուսումնամարզական տարվա ընթացքում

Ժամկետները	30 սաս. ուժ, կգ	3կգ սաս. ուժ, կգ	մեջքի տարած. մկ. ուժը կգ	աջքի տարած. մկ. ուժը կգ	ձեռքի տարածիչ ուժը կգ	վերջգումներ անգամ	սեղմումներ անգամ	ինտեգրալ ցկությունը սմ
	x ± m	x ± m	x ± m	x ± m	x ± m	x ± m	x ± m	x ± m
Մինչ գիտափորձ	16.67 ± 1.1	14.33 ± 0.87	68.33 ± 2.22	50.5 ± 1.8	27.4 ± 1.4	2.38 ± 0.63	15.33 ± 1.66	2.75 ± 1.97
Գիտափոր–ձից հետո	21.5 ± 0.8	17.67 ± 2.42	77.83 ± 2.42	58.8 ± 2.0	32.5 ± 1.31	4.8 ± 0.85	27.42 ± 1.29	10.2 ± 1.65
t	3.55	2.65	2.89	3.08	2.66	2.3	3.5	2.91
P %	>99	>55	>99	>99	>95	>95	>99	>99

Աղյուսակ 2.

10-12 տարեկան պատանի սամբիստների ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության գիտափորձի արդյունքը ստուգողական խմբերում

Ժամկետները	աջ դաստ. ուժը, կգ	ձախ դաստ. ուժ, կգ	մեջքի տարածմ. ուժը կգ	ազդրի տարածմ. ուժը, կգ	ձկնամկ. տարածիչ ուժը, կգ	վերձգումներ անգամ	սեղմում-ներ անգամ	ինտեգրալ ճկունութ. սմ
	x ± m	x ± m	x ± m	x ± m	x ± m	x ± m	x ± m	x ± m
Մինչ գիտափորձ	17.27 ± 1.25	13.91 ± 1.42	66.36 ± 2.18	51.2 ± 1.57	26.2 ± 1.23	1.5 ± 0.93	19.45 ± 1.56	2.18 ± 1.58
Գիտափոր-ձից հետո	19.18 ± 1.51	16.25 ± 1.2	70.45 ± 2.63	53.2 ± 1.48	28.5 ± 1.36	2.1 ± 0.8	22.34 ±1.1	3.68 ± 1.38
t	0.97	1.26	1.19	0.92	1.26	0.49	1.51	0.71
P %	<95	<95	<95	<95	<95	<95	<95	<95

Գիտափորձերի ընթացքում փորձարարական խմբերի պատանի սամբիստների մոտ նկատվել է մեջքի և ազդրի տարածիչ մկանների ուժի աճ, համեմատաբար պակաս՝ դաստակների ուժի ցուցանիշներում (աղյուսակ 1): Ստուգողական խմբերում ընդգրկված սամբիստների ցուցանիշներում նույնպես աճ է նկատվել, սակայն քիչ (աղյուսակ 2):

Տվյալ դեպքում վերլուծման են ենթարկվել հինգ հիմնական ցուցանիշներ՝ մեջքի տարածիչ մկանների բացարձակ (առավելագույն) ուժը (կգ), նույն մկանախմբերի պայթուցիկ ուժը (մլվ), ստատիկ դիմացկունություն (վրկ.), ինչպես նաև՝ մինչև վերջ (անգամ) կքանիստները և ուսագոտու ճկունությունը (սմ):

Եթե բորոր ուսումնասիրվող ցուցանիշներում փորձարարական խմբերում տարբերություններն էական են, ապա ստուգողականում համեմատվող արդյունքների աճ միայն մեկում է տեղի ունեցել՝ նկատվել է սեղմումների քանակի ավելացում: Այսպես, օրինակ՝ 10-12 տարեկան մարզիկների փոձարարական խմբերում ստուգողականի համեմատ 2.2-

4.3 անգամ բարելավվել են տարբեր մկանախմբերի՝ դաստակների, մեջքի տարածիչ մկանների ուժային ցուցանիշները: Բոլոր հոդերում նկատելի տեղաշարժեր են կատարվել նաև ինտեգրալ (ամբողջական) ճկունության ցուցանիշում: Ստացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ ընտրված ընդհանուր և հատուկ միջոցները, որոնք օգտագործվել են պատանի սամբիստների մանկավարժական գիտափորձի ընթացքում, նպաստել են նրանց ընդհանուր ֆիզիկական զարգացմանը, որն իր հերթին նախադրյալ է հանդիսացել հատուկ ֆիզիկական պատրաստության համար: Գիտափորձի ընթացքում ուսերի վրայից տարբեր բռնվածքով կատարվող տեխնիկական հնարքը՝ ըստ փորձագետների, բերվել է 10 միավորանոց սանդղակով: Փաստորեն ներգրավված վարժությունները դրական են ներգործել սամբիստների մկանային ուժի տարբեր դրսևորումների վրա, նպաստել նաև տեխնիկական հնարքների կատարման որակի բարելավմանը:

Եզրակացություն: Հանրապետության սամբոյի մարզիչների և պատանի սամբիստների հետ կազմակերպված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների, և գիտամեթոդական գրական աղբյուրների ուսումնասիրության արդյունքների վերլուծություններից հանգում ենք հետևյալ եզրակացության.

1. Մարզիչների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքում բացահատվեց, որ նրանց 40% այն կարծիքին են, որ ուսերի վրայից տարբեր բռնվածքներով հնարքի ուսուցումը սկսնակ սամբիստները պետք է սկսեն մարզումներից միայն 5-6 ամիս հետո:

2. Մանկավարժական գիտափորձի արդյունքում բացահայտվել է փորձարարական խմբի պատանի սամբիստների ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածության դրական տեղաշարժեր, սամբիստների մոտ ուսուցանվող հնարքի ցուցանիշների արդյունքները բարելավել են 1,7-4,4-ով, ինչը վկայում է ճիշտ բռնվածքների և գցումների կատարելագործման մասին:

3. Հետազոտության ընթացքում բացահայտվել են նաև այն սամբիստները, որոնք հաճախ են կատարում ուսերի վրայից տարբեր գցումներ, նրանց մոտ նկատվում է մկանների առավել մեծ ակտիվություն: Նման փաստերը մեզ հիմք են տալիս ընտրել այնպիսի վարժություններ, որոնք առավելապես կատարվում են շարժման ընթացքում:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Հայրապետյան Լ.Մ., Սամբո կյանքիս ճանապարհը, Երևան, 2018, էջ 15-17:
2. Ղազարյան Գ.Ֆ., Սպորտային պատրաստության տեսություն և մեթոդիկա, Դասախոսությունների դասընթաց, Երևան, 2011, 41 էջ:
3. Авилов В.И., Харахордин С.Е., Новые возможности в технике борьбы самбо. Специальные подготовительные упражнения. Учебник. Боевые искусства, 2021.- 208 с.
4. Гулевич Д.И., Звягинцев Г.Н., Борьба самбо, Методические пособие, М, Книга по Требованию, 2013. - 154 с.
5. Пасмуров Г.И., Е.В.Фазлеева., Ф.Х.Чемоданова., Техника борьбы самбо, на этапе начальной подготовки. Учебно-методические пособие: КФУ, 2015. 60с.
6. Рыбалко Б.М. «Силовая подготовка борца» М. Физкультура и спорт. 1972 г. 16 с.

METHODOLOGY FOR IMPROVING TRICKS PERFORMED WITH DIFFERENT GRIPS FROM THE SHOULDERS IN SAMBO

I. L. Baghdasaryan

Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Sambo, grip, technique of tricks, junior sambo athletes, exercises, coach.

Research relevance: Sambo is the result of creative thinking and joint work of a group of specialists formed on the basis of the best elements selected from the technical tricks of the national wrestling forms of the peoples of the world [1].

Research aim: The purpose of the research is to study the tricks performed in sambo with different grips over the shoulders, to develop an effective method of teaching tricks to young sambo athletes.

Research methods and organization. To solve research problems, we used the following methods: study and analysis of scientific-methodical literary sources, sociological survey, pedagogical observations, scientific experiment and testing, mathematical statistics. Pedagogical observations were organized in sambo sports schools of Yerevan and

Anna Hamlet Martirosyan - PhD student, lecturer of the Chair of Physical Rehabilitation, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia;
E-mail:anna.martirosyan@sportedu.am, ORCID:0000-0002-2599-510X

Հոդվածն ընդունվել է 21.10.2023–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 23.10.2023–ին:
Գրախոս՝ մ.գ.դ, պրոֆեսոր Ե. Հակոբյան

ՀԴՏ 796.422.16 DOI: 10.53068/25792997-2023.3.10-57

ԱՖՐԻԿՅԱՆ ՎԱԶՈՐԴՆԵՐԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Է. Զ. Մարտիրոսյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Դիմացկունություն, աշխարհամաս, դոմինանտություն, ֆենոմեն, միջնավազք, հեռավազք, գենետիկա, ապրելակերպ:

Հետազոտության արդիականություն: Աթլետիկական վազքային դասական մրցաձևերում, հատկապես՝ միջնավազքում, հեռավազքում և մարաթոնյան վազքում ակնհայտ է «սև» մայրցամաքը ներկայացնող մարզիկների առավելությունը: Քառորդ դար է ինչ աթլետիկական համաշխարհային խոշոր ստուգատեսներում աֆրիկյան վազորդները ստեղծել են «անպարտելիության մթնոլորտ», քանի որ նվաճում են գրեթե բոլոր մեդալները:

Աֆրիկացի վազորդների ֆենոմենն իսկապես զարմացրել է սպորտային գիտությամբ զբաղվող մասնագետներին: Նախորդ դարի վերջերից աֆրիկյան աշխարհամասի վազորդների հաղթարշավը ոլորտի մասնագետներին ստիպեց ուսումնասիրել և հետազոտել աֆրիկացիների առեղծվածային հաջողության գաղտնիքը [5, 6]: Բազմաթիվ գիտական հետազոտություններում փորձեր են արվել պարզել, թե որն է աֆրիկյան վազորդների ֆենոմենը՝ աթլետիկական դիմացկունության մրցաձևերում: Գիտական հետազոտությունները հիմնականում ուղղված էին գենետիկական տվյալների, ապրելակերպի, աշխարհագրական և բնակլիմայական պայմանների, ինչպես նաև մարզումային գործընթացի ուսումնասիրմանը [1, 3, 4, 8]:

Հետազոտողները նշում են, որ աֆրիկացիներն ունեն բոլորովին այլ մկանային կառուցվածք, քան մյուս աշխարհամասի բնակիչները, ավելին, նրանք ունեն ավելի երկար ու բարակ ոտքեր, կարճ իրան, կրունկի երկար ոսկորներ, համեմատաբար երկար Աքիլլեսյան ջիլ, ենթամաշկային ճարպի քիչ պարունակություն, ինչպես նաև թոքերի կենսական տարողության բարձր ցուցանիշ: Այս գենետիկ տվյալները միասին զգալի առավելություն են տալիս աֆրիկացի վազորդներին [1, 3, 4, 7, 8]:

Շատ գիտնականներ նշում են, որ աֆրիկացի վազորդների ֆենոմենը կապված է նաև նրանց բնակլիմայական և աշ-

խարհագրական պայմանների առանձնահատկությունների հետ: Ժամանակի մեծ մասն անցկացնելով և մարզվելով ծովի մակարդակից մոտ 2000-2500 մետր բարձրության վրա՝ վազորդներն ունենում են թոքերի կենսական տարողության բարձր ցուցանիշ, ինչպես նաև արյան մեջ հեմոգլոբինի և հեմատոկրիտի բարձր մակարդակ: Վերջինս իր հերթին հանգեցնում է աշխատող մկաններին թթվածին տեղափոխելու ունակության բարձրացմանը [2, 5, 6, 7]: Պակաս տարածված չէ այն տեսությունը, որ աֆրիկացիների հաղթանակները բացատրվում են նրանց ապրելակերպով: Գիտնականները նշում են, որ Աֆրիկա մայրցամաքի ներկայացուցիչները միայն դպրոց գնալու և առօրյա գործերն իրականացնելու համար երբեմն ստիպված են լինում հաղթահարել տասնյակ կիլոմետրեր: Ըստ այդ տեսակետի՝ տրամաբանական է, որ այդ դեպքում աթլետիկական դիմացկունության մրցաձևերը նրանց համար մարտահրավեր կամ մարդկային հնարավորությունների փորձություն չեն [3, 6, 8]:

Մյուս հավանական տեսությունը դժվար և բարդ մարզումներն են, քանի որ աֆրիկացիների հաղթանակները չեն կարող բացատրվել միայն գենետիկ, բնակլիմայական կամ աշխարհագրական դիրքի առավելությամբ: Նրանցից շատերի համար վազքը գոյատևելու, աղքատությունից խուսափելու և հայտնի դառնալու միակ միջոցն է: Այդ պատճառով շատ մարզվել և ազգային հավաքական ընդգրկվելը գրեթե բոլորի երազանքն է: Աֆրիկյան վազորդների մարզման գործընթացի հիմնական առանձնահատկությունները մեծ հաշվով հասանելի չեն այլ երկրների ներկայացուցիչներին: Այդ մասին առաջին անգամ բարձրաձայնվել է 2000-ական թվականների սկզբին: Ըստ որոշ տեղեկատվական աղբյուրների՝ աֆրիկյան երկրներում գործում են սպորտային ճամբարներ, որտեղ մարզվողները կատարում են մեծ ծավալի և բարձր ինտենսիվությամբ վազքային աշխատանքներ [1, 2, 3, 8]:

Բացի վերը նշված գործոններից, աֆրիկացի վազորդների մարզական հաջողության մեջ մեծ կարևորություն ունի նաև սնունդը: Նրանք իրենց կալորիաների 86%-ը ստանում են բուսական սննդից, իսկ 14%-ը՝ կենդանական սնունդից, շատ են օգտագործում կաթով կամ շաքարով թեյ, հատկապես՝ մարզումներից հետո [3, 5]:

Չնայած այն հանգամանքին, որ Աֆրիկա աշխարհամասի վազորդների հաղթանակի գրավականը համարվող այս բոլոր տեսությունները բավականին համոզիչ են թվում, սակայն դրանցից ոչ մեկը դեռ պաշտոնական ճանաչում չի ստացել:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել աֆրիկյան երկրների ուժեղագույն միջնավազորդների, հեռավազորդների և մարաթոնյան վազորդների դոմինանտությունը մյուս աշխարհամասերի վազորդների նկատմամբ:

Հետազոտության խնդիրները: 1. Ուսումնասիրել աֆրիկյան վազորդների առանձնահատկությունները դիմացկունության մրցաձևերում: 2. Ուսումնասիրել և վերլուծել աշխարհի ուժեղագույն վազորդների տոկոսային համամասնությունն ըստ աշխարհամասերի:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ 1. մասնագիտական գրականության, տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրում և վերլուծում, 2. մաթեմատիկական վիճակագրական վերլուծություն: Վիճակագրական վերլուծության արդյունքներն ըստ աշխարհամասերի հաշվարկվել և ներկայացվել են տոկոսային հարաբերությամբ:

Ուսումնասիրվել է Համաշխարհային աթլետիկայի (World Athletics) պաշտոնական էջում [9, 10, 11, 12, 13] ներկայացված աշխարհի 2013-2022 թվականների յուրաքանչյուր տարվա 100 լավագույն մարզիկների տվյալներն ըստ աշխարհամասերի և երկրների: Ըստ մրցաձևերի՝ ուսունասիրվել են 800 մ, 1500 մ, 5000 մ, 10 000 մ և մարաթոնյան վազքի ընդհանուր առմամբ 10.000 մարզիկ-մարզուհիների տվյալներ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ տղամարդկանց 800 մ վազքում վերջին տասը տարիների 2013-22 թթ. աշխարհի 1000 լավագույն արդյունքի 34,8 տոկոսը բաժին է հասնում Աֆրիկա աշխարհամասը ներկայացնող մարզիկներին (Տրգ. 1): Եվրոպական աշխարհամասի ներկայացուցիչները 33,6 տոկոս են: Հյուսիսային Ամերիկայի մարզիկների քանակը կազմել է 193 մարզիկ կամ 19,3 տոկոս: Կենտրոնական և Հարավային Ամերիկայի մարզիկների քանակը 3,5 տոկոս է, ասիացիները՝ 4,7 տոկոս, իսկ Ավստրալիան և Օվկիանիան ներկայացնող մարզիկների քանակը կազմել է 4,1 տոկոս: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին նաև, որ առաջատար համարվող աֆրիկյան մայրցամաքի մարզիկների կեսից ավելին՝ 18,9 տոկոսն Արևելյան Աֆրիկան ներկայացնող Քենիայի և Եթովպիայի մարզիկներն են:

Կանանց 800 մ վազքում տասը տարիների 1000 լավագույն արդյունքների 42,9 տոկոսը բաժին է հասնում Եվրոպա աշխարհամասը ներկայացնող մարզուհիներին: Հյուսիսային Ամերիկան ներկայացնող մարզուհիները կազմել են 31,1 տոկոս: 16,8 տոկոսը Աֆրիկյա աշխարհամասը ներկայացնող մարզուհիներն են,

որոնցից 10,3 տոկոսը քենիացիներ՝ 6,1 տոկոս և եթովպացիներ՝ 4,2 տոկոս են:

Կենտրոնական և Հարավային Ամերիկան ներկայացնող մարզուհիների քանակը՝ 2,9 տոկոս է, Ասիան՝ 2,3 տոկոս, Ավստրալիան և Օվկիանիան՝ 4,0 տոկոս:



Տրամագիր 1. Միջնավազքի մրցաձևերում մարզիկների ընդգրկվածության տոկոսային հարաբերակցությունն ըստ աշխարհամասերի

Չնայած այն հանգամանքին, որ այս մրցաձևում Եվրոպա աշխարհամասը ներկայացնող մարզուհիների քանակը (ի հաշիվ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի) 26,1 տոկոսով ավել է, քան Աֆրիկա աշխարհամասինը, այնուամենայնիվ, հարկ է նշել նաև, որ Մեծ Բրիտանիայի մարզիկ-մարզուհիների գրեթե 57,8 տոկոսը սևամորթ են և ունեն աֆրիկյան ծագում [9]: Աթլետիկայի միջազգային ֆեդերացիայի պաշտոնական տվյալների համաձայն՝ տարեկան 20-25 մարզիկ Աֆրիկա աշխարհամասից ներգաղթում են տարբեր երկրներ՝ հիմնականում Եվրոպա [1, 3]:

Ինչ վերաբերում է 1500 մ վազքին, ապա ուսումնասիրված տարիների 1000 լավագույն մարզիկների 34,6 տոկոսը ներկայացնում են Եվրոպա աշխարհամասը: Աֆրիկան ներկայացնող մարզիկները, թեև քիչ, բայց զիջում են եվրոպացիներին՝ 33,7 տոկոս: Հյուսիսային Ամերիկայի ներկայացուցիչները կազմել են 20,9 տոկոսը, 6,6 տոկոսը բաժին է հասել Ավստրալիա և Օվկիանիայի, 2,6 տոկոսը՝ Ասիա աշխարհամասի և ամենաքիչ՝ 1,6 տոկոսը Կենտրոնական և Հարավային Ամերիկայի մարզիկներին: Այս մրցաձևում Եվրոպան ներկայացնող մարզուհիների մասնակցությունը կազմում է 38,6 տոկոս, ընդգրկվածության համամասնությամբ երկրորդ տեղը՝ 28,5 տոկոսով զբաղեցնում են Հյուսիսային Ամերիկա աշխարհամասի մարզուհիները: Աֆրիկյան երկրների մարզուհիների քանակը այս մրցաձևում կազմել է 24,6 տոկոս, Ավստրալիա և Օվկիանիայի, Ասիայի, Կենտրոնական և Հարավային Ամերիկայի մարզուհիների մասնակցությունը կազմել է համապատասխանաբար 4,7 տոկոս, 2,7 տոկոս և 0,9 տոկոս [10]:

Հետաքրքիր փաստ է, որ Համաշխարհային աթլետիկայի պատմության ընթացքում տղամարդկանց 1500 մ վազքի աշխարհի 10 լավագույն արդյունքներից ութը ցույց են տվել «սև» մայրցամաքը ներկայացնող մարզիկները, աշխարհի ռեկորդները նույնպես 38 տարի է սահմանում են աֆրիկյան երկրների ներկայացուցիչները: Կանանց 1500 մ մրցատարածության լավագույն տասնյակում, որքան էլ տարօրինակ է, ընդգրկված է աֆրիկյան երկու մարզուհի, իսկ տասը լավագույն արդյունքներից հինգը պատկանում է չինուհիներին:

5000 մ հեռավազքում ակնհայտ է Աֆրիկա աշխարհամասի մարզիկների առավելությունն իրենց մրցակիցների նկատմամբ՝ 59,1 տոկոս: Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա աշխարհամասը ներկայացնող հեռավազորդ տղամարդկանց քանակը 3,5 անգամ զիջում է աֆրիկացիներին՝ 16,2 և 15,7 տոկոսով: Մյուս աշ-

խարհամասերը ներկայացնող մարզիկների ընդգրկվածությանը 1000 լավագույների շարքում հետևյալն է՝ Ավստրալիա և Օվկիանիա՝ 5 տոկոս, Ասիա՝ 2,9 տոկոս, Կենտրոնական և Հարավային Ամերիկա՝ 1,1 տոկոս (Տրգ. 2):

Ինչ վերաբերվում է այս մրցաձևում կանանց մասնակցությանը, այստեղ ևս առավելությունը «սև» աշխարհամասը ներկայացնող մարզուհիներինն է՝ 38,7 տոկոս: Հաջորդիվ հյուսիսամերիկացի մարզուհիներն են՝ 22,0 տոկոսով, որից հետո եվրոպացիները՝ 19,6 տոկոսով, ասիացիները՝ 14,1 տոկոսով, Ավստրալիայի և Օվկիանիայի մարզուհիները՝ 4,6 տոկոսով: Վեցնյակը եզրափակում են Կենտրոնական և Հարավային Ամերիկայի մարզուհիները՝ 1,0 տոկոսով:

10000 մ վազքատարածությունում ուսումնասիրված տարիների 1000 լավագույնների ցանկում, ինչպես սպասելի էր, գերակշռող դերը զբաղեցնում են աֆրիկյան վազորդները՝ 59,8 տոկոսով: Ասիան ներկայացնող մարզիկները կազմել են 16,4 տոկոս, Հյուսիսային Ամերիկան՝ 10,6 տոկոս: Որքան որ զարմանալի է Եվրոպա աշխարհամասը ներկայացնող վազորդները բավականին զիջում են իրենց մրցակիցներին և 9,8 տոկոսով գտնվում են չորրորդ տեղում: Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասի մարզիկների ընդգրկվածությունը լավագույն հազարյակում կազմել է 2,7 տոկոս, իսկ ամենաքիչ՝ 0,7 տոկոս մասնակցություն ունեցել են Կենտրոնական և Հարավային Ամերիկայի ներկայացուցիչները (Տրգ. 2):







Տրամագիր 2. Հեռավազքի մրցաձևերում մարզիկների ընդգրկվածության տոկոսային հարաբերակցությունն ըստ աշխարհամասերի

Նույն մրցաձևում ամենաշատ մասնակցություն ցուցաբերել են Ասիա աշխարհամասը ներկայացնող մարզուհիները՝ 30,8 տոկոս, որից գերակշռող մասը՝ 26,3 տոկոսը ճապոնուհիներն են: Աֆրիկացի մարզուհիները 25,8 տոկոսով, իսկ Հյուսիսային Ամերիկա աշխարհամասի մարզուհիները 21,0 տոկոսով համապատասխանաբար զբաղեցնում են երկրորդ և երրորդ տեղերը: Անսպասելի էր Եվրոպա աշխարհամասի մարզուհիների քիչ ընգրկվածությունը՝ ընդամենը 17,2 տոկոս: Ավստրալիա և Օվկիանիայի մարզուհիները կազմել են 2,9 տոկոս, իսկ վերջին տեղում են Կենտրոնական և Հարավային Ամերիկան ներկայացնող մարզուհիները, որոնց ընդգրկվածությունը լավագույն 1000 վազորդների ցանկում կազմել է 2,3 տոկոս:

Աթլետիկական ամենաերկար, դասական վազքային մրցաձևի՝ մարաթոնյան վազքի, վերլուծությունից պարզվեց, որ Աֆրիկա աշխարհամասի մարզիկները շատ քիչ հնարավորություն են թողել մյուս աշխարհամասի ներկայացուցիչներին (Տրգ. 3): Ուսումնասիրված տարիների 1000 լավագույն մարաթոնյան վազորդների 87,8 տոկոսը կազմել են աֆրիկացի

մարզիկները, Ասիան ներկայացնող մարզիկները 7,4 տոկոսով, երկրորդ, իսկ Եվրոպայի մարզիկները՝ 4,1 տոկոսով՝ երրորդ տեղում են: Հյուսիսային Ամերիկայի վազորդները՝ 0,4 տոկոսով, իսկ Կենտրոնական և Հարավային Ամերիկայի վազորդները՝ 0,3 տոկոսով, չորրորդ և հինգերորդ տեղում են: Տասը տարիների ընթացքում Ավստրալիայի և Օվկիանիա աշխարամասը ներկայացնող ոչ մի մարզիկ չի ընդգրկվել այս կազմում: Ավստրալիա և Օվկիանայի մարաթոնյան վազորդները վերջին տասը տարիների լավագույն հազարյակում մասնակցություն չեն ունեցել:



Տրամագիր 3. Մարաթոնյան վազքում մարզիկների ընդգրկվածության տոկոսային հարաբերակցությունն ըստ աշխարհամասերի

Գրեթե նույն պատկերն է մարաթոնյան վազքի կանանց մրցապայքարում: Աֆրիկացի մարզուհիների ստվար խումբը կազմել է 70,1 տոկոս, Ասիայի ներկայացուցիչները՝ 14,7 տոկոս, եվրոպացիները՝ 8,2 տոկոս, հյուսիսամերիկացիները՝ 4,8 տոկոս, Ավստրալիա և Օվկիանիայի մարզուհիները՝ 1,4 տոկոս, իսկ կենտրոնական և հարավամերիկյան մարզուհիները՝ 0,8 տոկոս:

Հետազոտության արդյունքներից ստացված թվական տվյալները ցույց են տալիս, որ, որքան երկարում է մրցատարածությունը, այնքան ավելանում է աֆրիկյան վազորդների գերակայությունը:

Եթե միջնավազքում եվրոպացի և հյուսիսամերիկացի մարզիկ-մարզուհիներն ունեն որոշակի առավելություն, ապա հեռավազքի մրցաձևերում այդ հնարավորությունը գնալով նվազում է:

Հարկ է նշել նաև, որ աֆրիկյան վազորդների զգալի մասը ներկայացնում են Քենիան և Եթովպիան: Այս երկրների մարզիկները միասին ժամանակակից օլիմպիական խաղերում նվաճել են 171 մեդալ (Քենիա 113, Եթովպիա 58): Վերջին տարիներին նրանց են միացել նաև Հարավ Աֆրիկյան Հանրապետության, Ուգանդայի, Էրիթրեայի, Մարոկկոյի, Ալժիրի, մարզիկները [1, 3, 5]:

Եզրակացություն: 1. Ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց տվեցին, որ աֆրիկյան երկրների վազորդներն ունենալով գենետիկական, բնակլիմայական, աշխարհագրական դիրքի և ապրելակերպի որոշակի առավելություններ, մարզման համեմատաբար կարճ ժամանակահատվածում դիմացկունության մրցաձևերում հասնում են մարզական բարձր նվաճումների: 2. Ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ աֆրիկյան երկրների մարզիկների վերը նշված առավելությունները դեռևս գիտականորեն հիմնավորված և պաշտոնապես ճանաչված չեն: 3. Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ մարզիկ-մարզուհիների տոկոսային ընդգրկվածությունը դիմացկունության բոլոր մրցաձևերում՝ ըստ աշխարհամասերի ունի հետևյալ պատկերը, տղամարդիկ՝ Աֆրիկա՝ 55,16, Եվրոպա՝ 19,66, Հյուսիսային Ամերիկա՝ 13,38, Ասիա՝ 6,8, Կենտրոնական և Հարավային Ամերիկա՝ 1,44, Ավստրալիա և Օվկիանիա՝ 3,56 տոկոս, կանայք՝ Աֆրիկա՝ 35,2, Եվրոպա՝ 25,3, Հյուսիսային Ամերիկա՝ 21,48, Ասիա՝ 12,92, Կենտրոնական և Հարավային Ամերիկա՝ 1,58, Ավստրալիա և Օվկիանիա՝ 3,52 տոկոս: Սակայն հարկ է նշել, որ Աֆրիկա աշխարհամասի բարձր տոկոսային հարաբերությունը պայմանավորված է Արևելյան Աֆրիկայի՝ մասնավորապես Քենիայի և Եթովպիայի մարզիկ-մարզուհիների քանակով:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 Антони Ла Торе, Франко Импеллизеро, Антонио Дотти, Енрико Анселли, // Легкоатлетический вестник ИААФ, Должны ли спортсмены европейской расы уходить в отставку под давлением африканцев в беге на средние и длинные дистанции? 2005 №4 С. 39-49

2. Джек Д., От 800 метров до марафона. Проверенные методы и программы подготовки для успеха в беге на выносливость / Джек Дэниелс; пер. с англ. Натальи

Беловой; [под ред. Ивана Нечаева]. - 3-е изд., перераб. - М.: Манн, Иванов и Фербер, 2019. - 304 с.

3. Зеличенок В., «Легкая атлетика» // Кенийский феномен - легенды и реальность. М.: 2001, № 1-2, С. 31-33

4. Hamilton B., East African running dominance: what is behind, it? Br J Sports Med: first published as 10.1136/bjsm.34.5.391 on 1 October 2000

5. Hoberman J. Darwin's athletes. How sport has damaged black america and preserved the myth of race. 1st ed. New York: Houghton Mifflin Company, 1997.

6. Hurst M. Running: Not a black and white issue. Fun Runner 1995:24–6

7. http://surl.li/mtjhi [մուտք 02-05. 09. 2023, 09-11. 09. 2023]

8. http://surl.li/mtjlt [մուտք 23-28. 08. 2023, 04-06. 09. 2023]

9. http://surl.li/mtjfa [մուտք՝ 02-08. 04. 2023]

10. http://surl.li/mtjjp [մուտք՝ 15-21. 04. 2023]

11. http://surl.li/mtjkb [մուտք՝ 01-06. 05. 2023]

12. http://surl.li/mtjki [մուտք՝ 14-23. 06. 2023]

13. http://surl.li/mtjli [մուտք՝ 03-11. 07. 2023]

THE PHENOMENON OF AFRICAN RUNNERS

E. Z. Martirosyan

Armenian State Institute of Physical Culture and Sport,

Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: endurance, continent, dominance, phenomenon, middle-distance running, long-distance running, marathon running, genetics, lifestyle.

Research relevance: The advantage of athletes representing the "black" continent is obvious in track and field running competitions, especially in middle-distance, long-distance and marathon running. A quarter of a century has passed since African runners created an "atmosphere of invincibility" at international sports competitions.

In many scientific studies, attempts to identify the phenomenon of the results of African runners in running competitions at various distances have been made.

Research aim: The purpose of the study is to identify the dominance of the strongest middle-distance and long-distance runners and marathon runners from African countries over runners from other regions of the world.

Research methods and organization: Study and analysis of specialized literature, various sources of information, statistical analysis.

Research result analysis: The results of the research show that more than half of the world's 1000 top results in all types of endurance running over the past ten years have been achieved by athletes representing the African continent. It has been established that while European and North American athletes have a certain advantage over Africans in middle-distance running,African runners demonstrate obvious dominance in long-distance running and marathon.

Conclusion: The research results have reveal that the participation of runners of both sexes in all endurance competitions in all regions over the world has the following picture in percentages:

a) men: Africa - 55.16, Europe - 19.66, North America - 13.38, Asia - 6.8, Central and South America - 1.44, Australia and Oceania - 3.56;

b) Women: Africa - 35.2, Europe - 25.3, North America - 21.48, Asia - 12.92, Central and South America - 1.58, Australia and Oceania - 3.52.

ФЕНОМЕН АФРИКАНСКИХ БЕГУНОВ

Э. З. Мартиросян

Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: выносливость, континент, доминантность, феномен, бег на средние дистанции, бег на длинные дистанции, марафонский бег, генетика, образ жизни.

Актуальность исследования. Преимущество спортсменов, представляющих «черный» континент, очевидно в соревнованиях по легкоатлетическому бегу, особенно в беге на средние дистанции, длинные дистанции и марафоне. Прошло четверть века с тех пор, как африканские бегуны создали «атмосферу непобедимости» на спортивных соревнованиях международного масштаба.

Во многих научных исследованиях сделаны попытки выявить феномен результатов африканских бегунов в соревнованиях по бегу на различные дистанции.

Цель исследования - выявить доминирование сильнейших бегунов на средние и длинные дистанции, и марафонцев из стран Африки над бегунами из других регионов мира.

Задачи исследования. Изучить особенности феномена африканских бегунов в соревнованиях на выносливость и проанализировать процент сильнейших бегунов мира по континентам.

Методы и организация исследования. Изучение и анализ специальной литературы, различных источников информации, статистический анализ.

Анализ результатов исследования. Результаты исследования показывают, что более половины из 1000 лучших мировых результатов во всех видах бега на выносливость за последние десять лет достигнуты спортсменами, представляющими африканский континент. Установлено, что если европейские и североамериканские спортсмены имеют определенное преимущество перед африканцами в беге на средние дистанции, то в беге на длинные дистанции и марафоне явно выражено доминирование африканских бегунов.

Краткое заключение: В итоге проведенного исследования установлено, что участие бегунов обоего пола на всех соревнованиях на выносливость по регионам мира имеет следующую картину в процентах: а) мужчины: Африка - 55,16, Европа - 19,66, Северная Америка - 13,38, Азия - 6,8, Центральная и Южная Америка - 1,44, Австралия и Океания - 3,56; б) женщины: Африка - 35,2, Европа - 25,3, Северная Америка - 21,48, Азия - 12,92, Центральная и Южная Америка - 1,58, Австралия и Океания - 3,52.

Տեղեկություններ հեղինակի մասին

Էրիկ Զավենի Մարտիրոսյան՝ մ.գ.թ., Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: erik.martirosyan@sportedu.am, ORSID: 0009-0002-5171-1761

Information about the author

Eric Zaven Martirosyan, Ph.D. in Pedagogy, Associate Professor of the Department of Cyclic Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: erik.martirosyan@sportedu.am, ORSID. 0009-0002-5171-1761

Հոդվածն ընդունվել է 01.12.2023–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 03.12.2023–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 796.01 DOI: 10.53068/25792997-2023.3.10-69

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԳԱՅՈՒՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

Ա. Տ. Պետրոսյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Շարժողական ընդունակություններ, զգայուն շրջաններ, կրտսեր դպրոցական տարիք, գրականության վերլուծություն:

Հետազոտության արդիականություն: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են այն մասին, որ երեխաների և պատանիների տարիքային զագացման ընթացքում գոյություն ունեն զգայուն շրջաններ (լատիներեն՝ sensitivus – զգայուն) [11]: Զգայուն շրջանները համարվում են ամենաբարենպաստ ժամանակահատվածները կենսագործունեության տարբեր ուղղություններում երեխաների, դեռահասների և պատանիների ինքնադրսևորման համար [11]: Անգլերեն գրականությունում շարժողական ընդունակությունների զգայուն շրջաններն անվանում են նաև <<հնարավորության պատուհաններ>> (“windows of opportunity”) [13, 15]: Ըստ Ֆ.Գ.Ղազարյանի (2007)՝ դպրոցում ֆիզիկական կուլտուրայի դասերին նպատակահարմար է հատուկ ուշադրություն դարձնել շարժողական այն ընդունակություններին, որոնք այս կամ այն կոնկրետ տարիքում ունեն աճի առավել ինտենսիվ տեմպեր [3, էջ 60]: Այս փուլերը պետք է դիտել որպես կրիտիկական շրջաններ, քանի որ շարժողական ընդունակությունների ընտրովի մշակումն այդ շրջաններում տալիս է մանկավարժական առավել մեծ արդյունք [3, էջ 60]: Ներկայումս մասնագիտական գրականությունում և գիտական տարբեր հոդվածներում աշխարհի տարբեր երկրների գիտնականների կողմից ներկայացված են երեխաների շարժողական ընդունակությունների զգայուն շրջանների մասին տվյալներ, սակայն այդ տվյալները հաճախ հակասում են միմյանց [12] և թույլ չեն տալիս ընթերցողին հստակ պատկերացում կազմել երեխաների շարժողական ընդունակությունների զգայուն շրջանների մասին: Հատկապես կրտսեր դպրոցական տարիքի երեխաների օրգանիզմը գտնվում է ակտիվ աճի շրջանում և տարբեր օրգանիամակարգեր դեռ ամբողջովին ձևավորված չեն, հետևաբար՝

շարժողական ընդունակությունների մշակման գործընթացում ոչ ռացիոնալ բեռնվածությունները կարող են վնաս հասցնել վերը նշված տարիքի երեխաների օրգանիզմին: Այսպիսով՝ պահանջ է նկատվում վերլուծության միջոցով հստակեցնել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների շարժողական ընդունակությունների զգայուն շրջանները:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների շարժողական ընդունակությունների տարիքային զարգացման զգայուն շրջանները:

Հետազոտության խնդիրներն են՝ 1. Վերլուծել վերջին տասնամյակներում տարբեր հեղինակների հետազոտական տվյալները: 2. Ի հայտ բերել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների շարժողական ընդունակությունների զգայուն շրջաններին վերաբերող տվյալներում առկա հակասություններն ու ընդհանրությունները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, վերլուծություն, ընդհանրացում: Ուսումնասիրվել է թեմային առնչվող 50-ից ավելի աղբյուր:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հայտնի է, որ ֆիզիկական դաստիարակությունը համարվում է դաստիարակության գործընթացի ձև, որի յուրահատկությունը դրսևորվում է շարժողական գործողությունների ուսուցման և շարժողական ընդունակությունների զարգացման ու կատարելագործման ղեկավարմամբ [5, էջ 5]: Որոշ մանկավարժ-գիտնականների կարծիքով՝ ֆիզիկական դաստիարակության համակարգում չկա այնպիսի մի օղակ, որտեղ կարելի է շրջանցել շարժողական ընդունակությունների մշակումը [12]: Այս առումով ֆիզիկական դաստիաակության կարևորագույն խնդիրներից է համարվում շարժողական ընդունակությունների օպտիմալ կատարելագործումը [7,10,12]: Ըստ Ֆ.Գ.-Ղազարյանի տվյալների (2015)՝ շարժողական ընդունակությունների տեսությունը գիտական հիմնավորում սկսեց ստանալ 19-րդ դարի վերջերից, և այդ գործընթացը շարունակվեց 20-րդ դարում (В. Ухов, Ф. Лагранж, Г. Демени, А. Д. Новиков, Б.М. Зациорский, Ф. Г. Казарян և շատ ուրիշներ) [4, էջ 13]: Այսօր էլ հետազոտություններն այս բնագավառում շարունակվում են: Հատկապես վերջին 50 տարիներին կատարվեցին զգալի աշխատանքներ դպրոցականների շարժողական ընդունակությունների զգայուն շրջանների բացահայտման ուղղությամբ [3,7,8,12,14,15]: Զգայուն շրջանների տեսության զարգացման գործում մեծ է Վ.Ս.Ֆարֆելի, Զ.Ի.Կուզնեցովայի, Ա.Ա.-

Գուժալովսկիի, Ս.Պ.Լյովուշկինի ներդրումը: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ հեղինակները հիմնականում հետազոտել են դպրոցականների հետևյալ շարժողական ընդունակությունների զգայուն շրջանները՝ ուժ, արագաշարժություն դիմացկունություն, ճկունություն, ճարպկություն, հավասարակշռություն, ցատկունակություն, կոորդինացիա [3,12,14,15]: Հարկ է նշել, որ վերը թվարկած շարժողական ընդունակությունները դպրոցական երեխաների և ընդհարապես անհատի շարժողական ընդունակությունների մի մասն են: Հայտնի է, որ դեռ 1967-ին տարբերում էին 15 շարժողական ընդունակություն [4, էջ 14]: Այս մասին մանրամասն խոսվում է Ֆ.Գ.Ղազարյանի <<Շարժողական ընդունակությունների բանաձևը>> մենագրությունում [4]: Դպրոցականների շրջանում առավել սպեցեֆիկ շարժողական ընդունակությունների (ռիթմայնություն, ճիգերի բաշխում, բարդ ռեակցիա, կողմնորոշման ընդունակություն և այլն) զգայուն շրջանների մասին տեղեկություններ քիչ են հանդիպում: Դրանց ուսումնասիրմամբ առավել շատ զբաղվում են այն մարզաձևերի մասնագետները (I.Balyi, D.Trépanier, M. Toulouse, С.Г. Дубовой, Г.И. Анисимов и др.), որտեղ դրանց նշանակությունը մեծ է (բռնցքամարտ, սպորտային պարեր, թենիս և այլն):

Ս. Պ. Լյովուշկինը (2006), հետազոտելով 7-17 տարեկան արական սեռի 1763 երեխաների շարժողական ընդունակությունների տարիքային ցուցանիշները, պարզել է, որ անկախ մարմնակազմվածքի առանձնահատկություններից, համեմատաբար մեծ տեմպով աճում են կրտսեր դպրոցական տարիքի երեխաների և 13-15 տարեկան դեռահասների շարժողական ընդունակությունները: Ընդ որում՝ բնական զարգացման ընթացքում առավել մեծ աճ նկատվել է հատկապես 7-10 տարեկանում [7]:

Վ. Ի. Տխորևը և Ս.Պ.Արշինիկը (2015) տարբեր հետազոտությունների (А. А. Гужаловский, 1978; А. П. Матвеев, 1990; В. К. Бальсевич, 2000; Л. В. Волков, 2002; В. И. Ковалько, 2005 и др.) ուսումնասիրության արդյունքում նկատել են, որ գիտնականների մեծ մասի տվյալների համաձայն՝ կրտսեր դպրոցական տարիքը զգայուն շրջան է արագային ընդունակությունների, ճկունության, ճարպկության և դիմացկունության համար [12], ընդ որում՝ այդ տվյալները վերաբերում են և՛ տղաներին, և՛ աղջիկների: Հեղինակների մեծ մասը, վերոհիշյալ շարժողական ընդունակությունների զգայուն շրջանները բնութագրելիս, ընդգծել է հատկապես 8-9 և 9-10 տարեկան հասակը: Հարկ է նշել, որ նշված տվյալները ամբողջությամբ չեն

համապատասխանում հայ և ռուս որոշ հեղինակների տվյալներին: Մասնավորապես, Ֆ.Գ.Ղազարյանի [3, էջ 61] և Վ.Գ.Նիկիտյուշկինի [9, էջ 51] աշխատանքներում դիմացկունության զգայուն շրջան է նշվում միջին դպրոցական և բարձր տարիքը: Այս տվյալները չեն կարող արժանահավատ չլինել, քանի որ հատկապես դիմացկունությունն էականորեն պայմանավորված է ֆիզիկական զարգացման, տարբեր օրգանհամակարգերի զարգացման և ձևավորման մակարդակով: Այլ կերպ ասած՝ կրտսեր դպրոցական տարիքում նպատակահարմար չէ շեշտադրված մշակել դիմացկունությունը, քանի որ այս տարիքի երեխաների մոտ ցածր է արտաշնչման և ներշնչման խնայողությունը, արտաքին շնչառությունը մակերեսային է և չունի կայուն ռիթմ: Շնչառության հաճախականությունը բարձր է՝ րոպեում 20-22 անգամ: Ֆիզիկական բեռնվածությունը բերում է զարկերի արագ աճին, մինչև 140-170 զարկ րոպեում: Մեծ բեռնվածությունների ժամանակ, կապված մեծ քանակությամբ էներգիայի ծախսման հետ, երեխաների մոտ բոլոր վերականգնողական գործընթացները դանդաղում են [2, էջ 177]:

Ի տարբերություն դիմացկունության, կրտսեր դպրոցականների օրգանզմի առանձնահատկությունները դրական նախադրյալ են ստեղծում հատկապես ճկունության և կոորդինացիոն ընդունակությունների մշակման համար: Երեխաների հոդերը կրտսեր դպրոցական տարիքում շատ անկայուն են, ջլերը առաձգական են, կմախքը պարունակում է մեծ քանակությամբ կոճիկային հյուսվածքներ [2, էջ 175-176]: Ողնաշարը մեծ ճկունություն է պահպանում մինչև 5-9 տարեկանը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարրական դպրոցական տարիքը բարենպաստ է համարվում բոլոր հոդերի աճի և ճկունության համար [2, էջ 175-176]: Իհարկե, կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ իրականացվող մարզումներում պետք է հատուկ ուշադրություն դարձնել ողնասյան և ուսահոդերի շարժունակության կատարելագործմանն ուղղված աշխատանքներին: 7-10 տարեկանների հենաշարժական ապարատի նշված օղակները դեռ շատ նուրբ են և հեշտությամբ կարող են վնասվել [1, էջ 41-42]: Ի դեպ, երեխաների ճկունության զգայուն շրջանների վերաբերյալ նույնպես կան որոշակի հակասություններ: Որոշ հեղինակներ հարաբերականորեն առավել զգայուն են համարում 7-10 և 13-14 տարեկան հասակը [9, էջ 51], որոշներն ընդգծում են նաև 10-14 տարկան ժամանակահատվածը և այլն [1, էջ 42]: Հայ գրականությունում առկա տվյալներով՝ տղաների համար ճկունության մշակման զգայուն շրջան է համարվում 12-13, 15-16,

իսկ աղջիկների համար՝ 11-12, 13-14, 14-15 տարեկանը [3, էջ 61]: Երբեմն առանձնացնում են ակտիվ և պասիվ ճկունության զգայուն շրջաններ: Որոշ տվյալներով պասիվ ճկունության մշակման ամենաբարենպաստ ու արդյունավետ ժամանակաշրջանը 9-10 տարեկանն է, իսկ ակտիվինը՝ 10-14 [6]:

Որոշակի տարբերություններ են նկատվում նաև արագաշարժության մշակման տարիքային ցուցանիշներում: Որոշ աղբյուրներում տղաների արագաշարժության մշակման համար զգայուն շրջան է համարվում 7-9 և 13-16 տարեկան հասակը [15], մյուսներում՝ 7-9 և 15-16 տարեկանը [3, էջ 61]: Շարժումների տեմպի, շարժողական ռեակցիայի և մեկնարկի շարժման արագության զգայուն շրջան է համարվում նաև 9-12 տարեկան հասակը [9, էջ 51]:

Ըստ Վ. Ի. Լյախի (2006) տվյալների՝ դպրոցում սովորելու տարիներին երեխաների կոորդինացիոն ընդունակությունների տարիքային աճը տեղի է ունենում հետերոխրոն [8]: Երեխաների որոշ կոորդինացիոն ընդունակություններ դպրոցն ավարտելու պահին, առաջին դասարանում գրանցված ցուցանիշների հետ համեմատած, ավելանում են մոտ 20-30%-ով, որոշներն էլ՝ 600-1000%–ով: Այդուհանդերձ, առավել մեծ աճ նկատվում է 7-9 և 9-11/12 տարեկան հասակում [8, էջ 20-21]: Նմանատիպ տվյալներ ներկայացված են նաև Պ. Հիրցի և Վ. Ստարոստայի հետազոտությունում [14]: Վերջիններիս տվյալներով կոորդինացիոն ընդունակությունները կարելի է բավականին լավ մարզել (մշակել) մինչև սեռական հասունացման շրջանը: Այսպիսով՝ կրտսեր դպրոցական շրջանը կարելի է համարել զգայուն շրջան երեխաների կոորդինացիայի զարգացման առումով:

Հարկ է նշել, որ որոշ հեղինակներ, երեխաների շարժողական ընդունակությունների զգայուն շրջանների, մարզումների ընթացքում ադապտացիոն հնարավորությունների մասին խոսելիս, բացի անձնագրային տարիքից առաջարկում են հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ մարմնակազմվածքի տիպաբանական առանձնահատկությունները [7] և կենսաբանական տարիքը [13]: Ուշագրավ է, որ որոշ հեղինակներ բավականին քննադատական են վերաբերում շարժողական ընդունակությունների զգայուն շրջանների տեսությանը: Այսպիսի դիրքորոշում գրանցվեց վերջին տարիներին [15]:

Եզրակացություն: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփելով՝ կատարվել են հետևյալ եզրահանգումները.

1. Գիտամեթոդական գրականությունում կրտսեր դպրոցական տարիքի ե-

րեխաների շարժողական ընդունակությունների զգայուն շրջանների մասին տեղեկություններում կան որոշ հակասություններ: Դրանք վերաբերում են արագաշարժության ու հատկապես դիմացկունության տարիքային ցուցանիշներին:

2. Հետազոտությունների մեծ մասի համաձայն՝ կրտսեր դպրոցական տարիքը զգայուն շրջան է ճկունության և կոորդինացիոն ընդունակությունների համար:

3. Երեխաների շարժողական ընդունակությունների զգայուն շրջանները գնահատելիս՝ բացի անձնագրային տարիքից, նպատակահարմար է հաշվի առնել նաև մարմնակազմվածքի տիպաբանական առանձնահատկություններն ու կենսաբանական հասունացման ցուցանիշները:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Հ.Ս., Մարգարյան Մ.Ժ., Ճկունության մշակումը սպորտային մարմնամարզությունում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, Հեղ. հրատ., 2017, 112 էջ:
2. Հարությունյան Ա.Ա. և համահեղ., Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդական հիմունքները հանրակրթական դպրոցում, Ուսումնական ձեռնարկ, Մաս 1, Երևան, 2015, 218 էջ:
3. Ղազարյան Ֆ.Գ., Մարդու ֆիզիկական վիճակի մոնիտորինգը, Դասագիրք, Երևան, Հեղինակային հրատ., 2007, 215 էջ:
4. Ղազարյան Ֆ.Գ., Շարժողական ընդունակությունների բանաձևը, Մենագրություն, Երևան, ՖԿՀՊԻ, 2015, 99 էջ:
5. Евсеев Ю. И., Физическая культура. Серия «Учебники, учебные пособия». Ростов-н/Д: Феникс, 2003. — 384 с. https://elar.urfu.ru/bitstream/ 10995/1308/1/ evseev physical_culture.pdf. [Մուտք՝ 20.06.23].
6. Калмыков С.А., Пятахин А.М., Особенности развития гибкости обучающихся в процессе занятий физической культурой// Вестник Тамбовского университета. Серия Гуманитарные науки. Т. 22. Вып. 4 (168), Тамбов, 2017. с. 110-116. https://cyberleninka.ru/article/n/osobennosti-razvitiya-gibkosti-obuchayuschihsya-v-protsesse-zanyatiy-fizicheskoy-kulturoy [Մուտք՝ 24.06.23].
7. Левушкин С. П., Сенситивные периоды в развитии физических качеств школьников 7–17 лет с разными типами телосложения // Физическая культура: воспитание, образование, тренировка. – 2006. – № 6. – с. 2–5. http://sportlib.info/Press/FKVOT/2006N6/p2-5.htm [Մուտք՝ 22.06.23].

8. Лях В. И., Координационные способности: диагностика и развитие. - М.: ТВТ Дивизион, 2006. – 290 с. https://pculture.ru/wp-content/files/koordinacionnye_sposobnosti_diagnostika_i_razvitie .pdf [Մուտք՝ 22.06.23].
9. Никитушкин В. Г., Современная подготовка юных спортсменов. Методическое пособие. М., 2009.- 112 с. http://xn--4-8sbic5ausfu1cwd.xn--p1ai/sites/default/files/sovremennaya_podgotovka yunyh_sportsmenov.pdf [Մուտք՝ 22.06.23].
10. Сорокин А. В., Качурин А. С., К истории развития и становления физического воспитания и культуры. Вопросы науки и образования, 2018, с. 173- 177. https://cyberleninka.ru/article/n/k-istorii-razvitiya-i-stanovleniya-fizicheskogo-vospitaniya-i-kultury [Մուտք՝ 24.06.23]
11. Титов Б. А., Сенситивные периоды развития природных задатков детей, подростков и юношества. Теория и практика общественного развития, 2015. -с. 205-209. http://teoria-practica.ru/rus/files/arhiv_zhurnala/2015/7/pedagogics/titov.pdf [Մուտք՝ 24.06.23]
12. Тхорев В. И., Аршинник С. П., Сенситивные периоды развития двигательных способностей учащихся школьного возраста. Физическая культура, спорт - наука и практика, №1, 2010. -с. 40-45. https://cyberleninka.ru/article/n/sensitivnye-periody-razvitiya-dvigatelnyh-sposobnostey-uchaschihsya-shkolnogo-vozrasta [Մուտք՝ 20.06.23].
13. Ford P. et al., The Long-Term Athlete Development model: Physiological evidence and application. Journal of Sports Sciences, , 29(4), 2011, pp. 389-402. https://www.researchgate.net/publication/49778283 [Մուտք՝ 23.06.23].
14. Hirtz P., & Starosta W. , Sensitive and critical periods of motor co-ordination development and its relation to motor learning. Journal of Human Kinetics, 7, 2002, pp. 19-28. https://www.researchgate.net/publication/237659581 [Մուտք՝ 22.06.23].
15. Van Hooren B., De Ste Croix M., Sensitive Periods to Train General Motor Abilities in Children and Adolescents: Do They Exist? A Critical Appraisal. Strength and Conditioning Journal, 42(8), 2020; pp. 7-14. https://www.researchgate.net/publication/339907782 [Մուտք՝ 22.06.23].

STUDY OF SENSITIVE PERIODS OF PRIMARY SCHOOLCHILDREN MOTOR ABILITY DEVELOPMENT

A. T. Petrosyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: motor abilities, sensitive periods, primary school age, literature analysis.

Research relevance: In the scientific and methodological literature, there are certain contradictions in the data related to the sensitive period of primary schoolchildren motor abilities. Thus, there is a need to clarify the sensitive periods of motor abilities of primary school age children with the help of analysis.

Research aim: The aim of the research is to study the sensitive periods of age-related development of primary schoolchildren motor abilities.

Research methods: Study, analysis, generalization of scientific and methodological literature. More than 50 literary sources related to the topic were analyzed.

Research result analysis: During the study, it turned out that over the past 50 years, many Armenian, Russian and European scientists have been studying the sensitive periods of children's motor abilities. During the analysis of the presented data, it turned out that there are certain contradictions in the data, and in the sensitive periods of some motor abilities, the contradictory data are expressed quite sharply. The contradiction mainly relates to age-related indicators of speed and especially endurance. It turned out that there are a number of similarities in the researchers' data, which are summarized in the conclusions. Differences in research data are mainly due to the peculiarities of research methods and interpretation.

Conclusion: Summarizing the results of the study, the following conclusions were made.

1. There are certain contradictions in the information about the sensitive periods of primary schoolchildren motor abilities in the scientific and methodological literature.

2. According to most authors, primary school age is a sensitive period for the development of flexibility and coordination abilities.

3. When assessing the sensitive periods of the children's motor abilities, except for passport age, it is advisable to take into account the features of the somatotype and indicators of biological maturation.

ИЗУЧЕНИЕ СЕНСИТИВНЫХ ПЕРИОДОВ РАЗВИТИЯ ДВИГАТЕЛЬНЫХ СПОСОБНОСТЕЙ ДЕТЕЙ МЛАДШЕГО ШКОЛЬНОГО ВОЗРАСТА

А. Т. Петросян

Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: двигательные способности, сенситивные периоды, младший школьный возраст, анализ литературы.

Актуальность исследования. В научно-методической литературе есть определенные противоречия в данных, относящихся к сенситивным периодом двигательных способностей детей младшего школьникого возраста. Таким образом, есть необходимость с помощью анализа уточнить сенситивные периоды двигательных способностей детей младшего школьного возраста.

Цель исследования. Изучить сенситивные периоды возрастного развития двигательных способностей детей младшего школьного возраста:

Методы и организация исследования. Изучение, анализ, обобщение научно-методической литературы. Было проанализировано более 50 литературных источников, связанных с темой.

Анализ полученных результатов. В ходе исследования выяснилось, что за последние 50 лет к изучению сенситивных периодов двигательных способностей детей занимались многие армянские, российские и европейские ученые. В ходе анализа представленных ими данных выяснилось, что есть определенные противоречия, причем в сенситивных периодах некоторых двигательных способностей противоречивые данные выражены достаточно остро. Противоречия в основном относятся к возрастным показателям быстроты и особенно выносливости. Оказалось, что в данных исследователей есть ряд сходств, которые кратко изложены в выводах. Различия в исследовательских данных обусловлены в основном особенностями методов исследования и интерпретации.

Краткие выводы. Обобщая результаты исследования, были сделаны следующие выводы: 1. В научно-методической литературе имеются определенные противоречия в сведениях о сенситивных периодах двигательных способностей детей младшего школьного возраста; 2. По данным большинства авторов младший школьный возраст -

сенситивный период для развития гибкости и координационных способностей; 3. При оценке сенситивных периодов двигательных способностей детей, кроме паспортного возраста, целесообразно учитывать типологические особенности телосложения и показатели биологического созревания.

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն Տիգրանի Պետրոսյան՝ ասպիրանտ, Հ. Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոն, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail.: aapetrosyan1994@gmail.com

Information about the author

Armen Tigran Petrosyan, Postgraduate student, Department of Gymnastics, Sport Dances, Figure Skating and Chess after H. Shahinyan, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E. mail.: aapetrosyan1994@gmail.com

Հոդվածն ընդունվել է 01.08.2023–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 03.08.2023–ին:
Գրախոս՝ կ.գ.թ., դոցենտ Տ. Պետրոսյան

УДК 796.01 DOI: 10.53068/25792997-2023.3.10-79

ПЛАСТИКА ДВИЖЕНИЙ: СУЩНОСТЬ И ПОДХОДЫ К ИЗУЧЕНИЮ

Е. С. Акопян, А. А. Ковалева
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

Ключевые слова: пластика движения, физическое воспитание, спорт, координационные способности, критерии оценки.

Актуальность исследования. Анализ научно-методической литературы позволил констатировать возросший интерес специалистов к изучению качественных сторон двигательной деятельности, среди которых выделяют пластику движения [1,6,9,14,22]. Первым на это качество указал Н. А. Бернштейн, описывая его как движение человеческого тела в соответствии с определенным рисунком и ритмом, отражающее его духовный и внутренний мир [1]. Изучая двигательные способности человека, ученый выделил такие свойства движений как грациозность, гармоничность, пластическая красота [2, с. 268].

Естественное состояние пластичности развивается у человека в процессе его индивидуальной жизни, в зависимости от определенных условий. Б.Н. Курысь Р.В. Гзирьян, С. В. Денисенко (2016) определяют пластику как согласованность, соразмерность движений и жестов, их общую гармонию. Пластичные движения характеризуются непрерывностью, слитностью, плавностью, выполнением движений без пауз. Пластичность, характеризуя качественную сторону двигательной деятельности, отражает уровень двигательной подготовленности, а ее целенаправленное развитие позволяет решать целый ряд задач физического, эстетического, интеллектуального совершенствования человека. [11]

Неоспоримо, что вопросы совершенствования качества выполнения разнообразных движений, и в частности, их пластики, актуальны в физическом воспитании и особенно важны во многих видах спорта. Разнообразные бытовые и трудовые движения также требуют проявления пластичности [16].

Пластичность имеет разнообразные проявления и разновидности, недостаточное внимание к развитию которых не позволяет в полной мере реализовывать возможности эстетического воздействия на человека с целью его всестороннего и гармоничного развития.

Цель исследования. На основе теоретического анализа представить существующие подходы к изучению пластики движения.

Методы исследования: теоретический анализ научно-методической литературы по изучаемой проблеме.

Анализ результатов исследования. По всеобщему признанию Леонардо да Винчи (1452-1519) является родоначальником научной теории соматического движения. В изучении пропорций человеческого тела он впервые включил движение. В своем творчестве Леонардо да Винчи телесное движение отражает как своеобразное соединение субъективного и объективного, в котором воспроизведение действительности включает в себя эмоционально-личностную оценку. Художественный метод передачи анатомического знания, который он разработал, получил название «пластическая анатомия»[5].

Следует отметить, что еще в античный период древнегреческий скульптор, теоретик искусства (V век до н.э.) Поликлет, создатель канона об эстетике, был первым, кто придал статуе движение. Воплощение канона отражено в скульптуре Дорифор. В основе этой композиции лежит перекрестный ритм движения тела: правая сторона (опорная нога и опущенная рука) напряжена, но статична, левая сторона (рука с копьем и отставленная назад нога) в движении, но расслаблена [19,с.13].

В середине XIX в. Франсуа Делькарт систематизировал все телодвижения человека и расположил их по шкале, устанавливающей соответствие каждого возможного соотношения разных частей тела с определенным выразительным значением этого соотношения. Его система охватывала умение владеть жестами, мимикой, движением и позами, поэтому она получила название выразительной гимнастики [3].

М. Фельденкрайз, изучая проблему гармонии души и тела с психологического ракурса, пришел к пониманию того, что телесная пластика индивида является не только индикатором психосоматической деструкции, но и эффективным инструментарием ее коррекции [23].

С.Л Рубинштейн не раскрывая сущности пластики движений, пишет: "основными свойствами движений являются: I) скорость (быстрота прохождения траекторий); 2) сила; 3) темп (количество движений за определенный промежуток времени, зависящий не только от скорости, но и от интервалов между движениями); 4) ритм (временной, пространственный и силовой); 5) координированность; 6) точность и меткость; 7) пластичность и ловкость" [18, с. 449].

Как отмечает Л.Н.Сляднева, тело человека, его движения- это отражение его эмоционально-чувственной сферы; чувства и переживания, воплощающиеся в движении, становятся настоящим зеркалом, отражающим внутренние и душевные состояния индивида. На этой важной психофизиологической закономерности основана огромная убеждающая сила искусства, которая как специфическая форма невербальной коммуникации является средством эстетического воспитания [19, с. 183]. Эстетический компонент движений – может служить одним из мощных стимулов для регулярных занятий физическими упражнениями с целью самосовершенствования. [10].

Высокий спортивный результат немыслим без достижения определенного уровня красоты и пластичности. Движения мастеров фигурного катания, гимнастики, синхронного плавания, прыгунов в воду, поражают высокой степенью выразительности, грациозности. Это является свидетельством достижения высочайшей внутренней согласованности работы крупных и мелких мышц, пластичностью и ритмичностью каждого двигательного действия. Выразительность телодвижений: поворотов, наклонов, вращений, приседаний - в каждом виде спорта имеет свои особенности.

Американский ученый Бенджамин Лоу (1984) в своей книге «Красота спорта» обращает внимание на такое двигательное качество спортсмена, как плавность, грациозность, изящество. Согласно его мнению, плавность возникает благодаря динамической форме и создает впечатление повышенного контроля, равновесия, чувства времени [13].

В каждом виде спорта пластика движений имеет свои особенности. Так, движения копьеметателя не похожи на действия прыгуна с шестом или боксера, но каждый высококлассный мастер отличается высоким уровнем пластичности.

Пластичность движений рук в зависимости от вида спорта решает разные задачи. Так, дальность полета диска, гранаты, ядра в значительной степени зависят от финального усилия, в котором проявляется высокий уровень не только скоростно-силовых качеств, но и координационных среди которых немаловажное значение имеет пластичность [15].

В фигурном катании, гимнастике, акробатике, синхронном плавании движением руки можно подчеркнуть красоту, легкость, завершенность двигательного акта или показать переход к другому действию. Движениями рук спортсмен может передать свое внутреннее состояние: широко разведенные, раскрытые

Conclusion: The analysis of the sources of the literature under study allows us to draw the following conclusions: prevention of sports injuries involves a number of organizational and methodological measures: continuous improvement of material and technical support, improvement of the conditions of training sessions and competitions, systematic professional development of sports doctors and coaches, compliance with the rules of medical control, improvement of physical, technical and tactical training, moral qualities of athletes, health promotion.From a pedagogical and methodological point of view, it is necessary to introduce into the training process special training on injury prevention at all stages of long-term training aimed at achieving and maintaining an optimal level of flexibility and targeted strengthening of the musculoskeletal system.The optimal level of flexibility is characterized by the fact that the available momentum of specific movements is slightly larger than the width of competitive exercises - the so-called "flexibility reserve", which minimizes the resistance to stretched muscles, so that the exercise is performed without excessive tension and reduces the possibility of injury in similar positions in competitive wrestling. For targeted

strengthening of the musculoskeletal system, it is advisable to apply measures aimed at strengthening different parts of the spine, shoulder girdle, knee, tibiofemoral joints and increasing the elasticity of muscles and ligaments.The sets of exercises compiled for these purposes should be used throughout the entire sport career, including them in pre-training, the final part of the lesson, as well as in specialized and individual classes

🕮 REFERENCES

1. Батукаев А.А., Методика специальной физической тренировки юных борцов вольного стиля с целью профилактики травматизма, Научно-теоретический журнал «Ученые записки», № 11(45) – 2008, с.5-10
   (Batukaev A.A., Methods of Special Physical Training of Young Freestyle Wrestlers for the Purpose of Injury Prevention, Scientific and Theoretical Journal "Scientific Notes", № 11(45) – 2008, p.5-10)
2. Батукаев А.А., Профилактика травматизма в процессе специальной физической подготовки юных борцов вольного стиля, Автореф. дис. … к.п.н. Санкт-Петербург, 2010–25 с.
   (Batukaev A.A., Injury Prevention in the Process of Special Physical Training of Young Freestyle Wrestlers, Abstract … PhD St. Petersburg, 2010-25 p.)
3. Башкиров В.Ф., Профилактика травм у спортсменов-М.: Физкультура и спорт, 1987- 76 с., ил.
   (Bashkirov V.F., Prevention of Injuries of Athletes-M.: Physical Culture and Sport, 1987, p. 76)
4. Дубровская А.В., Дубровский В.И., Средства профилактики травм и заболеваний опорно-двигательного аппарата у спортсменов: Теория и практика физической культуры, №3, 2007, –С. 47–49
   Dubrovskaya A.V., Dubrovsky V.I., Means of Preventing Injuries and Diseases of the Musculoskeletal System of Athletes: Theory and Practice of Physical Culture, No. 3, 2007, pp. 47-49
5. Клименко А.А., Кабанов Р.А., Соболь Ю.В., Анализ травматизма при занятиях борьбой вольным стилем, Современные концепции научных исследований // Сборник научных работ 36й Международной научной конференции Евразийского Научного Объединения-Москва: ЕНО, 2018.-С.180-182

(Klimenko A.A., Kabanov R.A., Sobol Yu.V., Analysis of Injuries in Freestyle Wrestling, Modern Concepts of Scientific Research // Collection of Scientific Papers of the 36th International Scientific Conference of the Eurasian Scientific Association-Moscow: Moscow, 2018. pp.180-182)

6. Кривошапкин П.И., Подвижность суставов как резерв повышения устойчивости борца/ П.И. Кривошапкин, Б.А.Подливаев// Актуальные проблемы спортивной тренировки: сб. науч.-метод. статей-М.: СпортУниверПресс, 2003.- С.29-32.
Krivoshapkin P.I., Joint Mobility as a Reserve for Increasing the Stability of a Wrestler/ P.I. Krivoshapkin, B.A.Podlivaev// Actual Problems of Sports Training: Collection of Scientific Method. articles-M.: SportUniverPress, 2003. pp.29-32.
7. Матиенко Е.Н., Профилактика травматизма в вольной борьбе: Метод, рекомендации/ Е.Н. Матиенко. Красноярск: Кларетианум, 2002. - 28 с.
(Matienko E.H., Injury Prevention in Freestyle Wrestling: Method, Recommendations/ E.H. Matienko. Krasnoyarsk: Claretianum, 2002. 28 p.)
8. Платонов В.Н., Система подготовки спортсменов в олимпийском спорте. Общая теория и ее практические приложения. Киев: Олимпийская литература, 2004.– 820 с
(Platonov V.N., The System of Training Athletes in Olympic Sports. General Theory and its Practical Applications. Kiev: Olympic Literature, 2004. 820 p)
9. Платонов В.Н., Травматизм в спорте: проблемы и перспективы развития / В.Н. Платонов // Спортивная медицина. – 2006. – №1. – С. 54–77.
(Platonov V.N., Injuries in Sports: Problems and Prospects of Development / V.N. Platonov // Sports Medicine. 2006. No.1, pp. 54-77.)
10. Планида Е.В. Эффективность систематического использования стретчинга с целью профилактики травматизма// Научные труды НИИ физической культуры и спорта Республики Беларусь: Сб. науч. Тр. – Мн., 2005.– Вып. 6. –С. 239–242
(Planida E.V. Efficiency of Systematic Use of Stretching for the Purpose of Injury Prevention// Scientific Works of the Research Institute of Physical Culture and Sports of the Republic of Belarus: Collection of scientific works, 2005. – Issue 6. – pp. 239-242)
11. Платонов, В.Н., Обшая теория подготовки спортсменов в олимпийском спорте-Киев: Олимпийская литература, 1997.–584с.,

(Platonov, V.N., The General Theory of Training Athletes in Olympic Sports. Kiev: Olympic Literature, 1997.584p)

12. Рокитянский В.И., Повреждения и ортопедические заболевания при занятиях физкультурой и спортом, Медицина, 1964.- 236 с.
(Rokityansky V.I., Injuries and Orthopedic Diseases during Physical Education and Sports, Medicine, 1964. 236 p.)

13. Харькова В.А., К вопросу о профилактике травматизма в единоборствах, Спортивный травматизм: состояние вопроса, инновационные формы профилактики и практический опыт реабилитации, Научно-практический семинар, Минск, 2021. - с. 10-17
(V.A. Kharkova, On the Issue of Injury Prevention in Martial Arts, Sports Injury: the State of the Issue, Innovative Forms of Prevention and Practical Experience of Rehabilitation, Scientific and Practical Seminar, Minsk, 2021.pp. 10-17)

14. Шихов А.В., Семёнова Г.И., Медико-педагогические аспекты спортивного травматизма: учебное пособие, Мин-во науки и высшего образования РФ.— Екатеринбург : Изд-во Урал. ун-та, 2020.— 128 с.
(Shikhov A.V., Semenova G.I., Medical and Pedagogical Aspects of Sports Injuries: textbook, Ministry of Science and Higher Education of the Russian Federation. Yekaterinburg : Ural University Publishing House, 2020.128 p.)

15. Щербаков Ю. В., Предупреждение травматизма при занятиях борьбой/ Ю.В. Щербаков// Физкультура в школе.1989.- № 8.- С.71-73.
(Shcherbakov Yu. V., Injury Prevention During Wrestling/ Yu.V. Shcherbakov// Physical education at school. 1989.- No. 8. pp.71-73)

16. Brzezińska P, Mieszkowski J, Waldziński T et al. Musculoskeletal injuries in freestyle wrestling – sport specification. Arch Budo 2022; 18: 241-250

17. Talpey Scott W., Siesmaa Emma J.,Sports Injury Prevention: The Role of the Conditioning Coach, Strength and Conditioning Journal, May 2017, Vol. 39, Num. 3, p. 14-19

18. Seshadri D. R., Wearable devices for sports: new integrated technologies allow coaches, physicians, and trainers to better understand the physical demands of athletes in real time / D. R. Seshadri [et al.] // IEEE pulse. – 2017. – Т. 8. – №. 1. – С. 38–43.

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏՈՒՄ

Մ.Ս. Բարբարյան, Ն. Է. Գևորգյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

ԱՄՓՈՓՈԳԻՐ

Առանցքային բառեր: Ազատ ոճի ըմբշամարտ, վնասվածք, վնասվածքների կանխարգելում, մեթոդական մոտեցումներ:

Հետազոտության արդիականություն: Սպորտին բնորոշ են հաճախակի վնասվածքները, տարաբնույթ մասնագիտական հիվանդությունները, հիվանդագին վիճակները, որոնք վտանգ են ներկայացնում մարզիկի առողջությանը, ազդում նրա մարզման և մրցակցական գործունեության արդյունավետության վրա: Այս տեսանկյունից սպորտի զարգացման կարևոր և արդիական խնդիրներից են վնասվածքների առաջացման պատճառները, դրանց բնույթի ուսումնասիրումը, կանխարգելման միջոցառումների իրականացումը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել վնասվածքների կանխարգելման մեթոդական մոտեցումներն ազատ ոճի ըմբշամարտում:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, վերլուծում և ընդհանրացում: Հետազոտությունն իրականացվել է մագիստրոսական թեզի պատրաստման ընթացքում՝ 2022-2023 ուստարում:

Ստացված արդյունքների վերլուծություն: Հոդվածում հասանելի աղբյուրների ուսումնասիրության հիման վրա ներկայացված են ազատ ոճի ըմբշամարտում վնասվածքների առաջացման պատճառներն ու բնույթը և դրանց կանխարգելման մոտեցումները:

Մասնագետներն ազատ ոճի ըմբիշների վնասվածքների կանխարգելման՝ որպես առաջնային միջոց նշում են ողնաշարի, հատկապես պարանոցային հատվածի, ուսագոտու, ծնկան և սրունքվեգային հոդերի մկանակապանային ապարատի սիստեմատիկ ամրապնդումը, տարբեր հոդերի շարժունակության և ընդհանուր ճկունության մակարդակի բարձրացումը, մարզումից և մրցումից առաջ ռացիոնալ կառուցված նախավարժանքը՝ հատուկ վարժությունների ներգարվմամբ և ըմբիշների կողմից ինքնաապահովման հնարքների տիրապետումը:

Վնասվածքների կանխարգելման գործընթացում կարևոր ուղղություններ են նաև ռացիոնալ պլանավորված պարապմունքների, միկրոցիկլերի և մեզոցիկլերի կառուցվածքը, մարզիկների տեխնիկական պատրաստվածության և մրցավարական գիտելիքների մակարդակի անընդհատ բարձրացումը, մրցականների կատարելագործումը, սթրեսակայունության և հոգեբանական կայունության ձևավորումը, դաստիարակչական աշխատանքների սիստեմատիկ անցկացումը, բարոյակամային որակների դաստիարակումը, մարզվողների տարիքային և սեռային առանձնահատկությունների, ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածության մակարդակի հաշվառումը:

Վնասվածքների կանխարգելման գործընթացում մասնագետներին օգնության են գալիս նաև ժամանակակից տարբեր էլեկտրոնային կրելի սարքավորումները:

Համառոտ եզրակացություն: Ընդհանրացնելով տարբեր աղբյուրներում առկա մոտեցումները՝ կարելի է նշել, որ մանկավարժական-մեթոդական տեսանկյունից անհրաժեշտ է մարզման գործընթաց ներդնել վնասվածքների կանխարգելման հատուկ մարզումներ՝ բազմամյա մարզման բոլոր փուլերում, որոնք ուղղված կլինեն ճկունության օպտիմալ մակարդակի ձեռքբերմանն ու պահպանմանը և մկանակապանային համակարգի նպատակաուղղված ամրապնդմանը:

МЕТОДИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ПРОФИЛАКТИКЕ ТРАВМАТИЗМА В ВОЛЬНОЙ БОРЬБЕ

М. С. Барбарян, Н. Э. Геворгян
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: вольная борьба, травма, профилактика травматизма, методические подходы:

Актуальность исследования. Спорт высших достижений – это область деятельности человека, для которой характерны травматизм, различные профессиональные заболевания, патологические состояния, которые создают угрозу здоровью спортсмена, влияют на эффективность тренировочной и соревновательной деятельности.

Результаты многочисленных исследований доказывают, что использование специальных комплексов упражнений или различных методов специальной физической

подготовки, разработанные с целью профилактики травматизма, направленные на повышение уровня подвижности различных суставов и уровня общей гибкости, на укрепление отдельных групп мышц и связок, существенно снижают частоту травм и вероятность получения травм в дальнейшей спортивной карьере.

Цель исследования. Изучить методические подходы профилактики травматизма в вольной борьбе.

Методы и организация исследования. Изучение, анализ и обобщение научно-методической литературы. Исследование проводилось в ходе подготовки магистерской диссертации в 2022-2023 году.

Анализ результатов исследования. Особое место профилактики травм борцов вольного стиля отводится рациональной разминке перед тренировками и соревнованиями с применением специальных упражнений и овладение борцами приемами страховки.

Важными направлениями в процессе профилактики травм являются также рациональное планирование занятия, структура микроциклов и мезоциклов, постоянное повышение уровня технической подготовки и судейских знаний спортсменов, совершенствование правил соревнований, формирование стрессоустойчивости и психологической устойчивости, систематическое проведение воспитательных работ, воспитание нравственно-волевых качеств, учет возрастных и половых особенностей тренирующихся, уровня физической и технической подготовки, систематические комплексное обследование спортсменов.

Краткие выводы. С методической точки зрения подходы профилактики травматизма в вольной борьбе вытекают из вопросов первичной профилактики: осуществления систематического медицинского наблюдения, эффективного планирования тренировочного процесса, обеспечение соответствующего уровня гибкости и силовых возможностей, целенаправленного укрепления мышечно-связочного аппарата и соответствующая и рациональная разминка перед тренировкой и соревнований.

Տեղեկություններ հեղինակների մասին

Մեսրոպ Սամվելի Բարբարյան՝ մ.գ.թ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: mesrop.barbaryan@sportedu.am,

Նատալյա Էդուարդի Գևորգյան՝ հ.գ.թ., Ա. Լալայանի անվան սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: natalya. gevorgyan@sportedu.am

Information about the authors

Mesrop Samvel Barbaryan, Candidate of Pedagogical Sciences, Lecturer of the Chair of Theory of Physical Education, Methodology and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia.

E.mail: mesrop.barbaryan@sportedu.am

Natalya Eduard Gevorgyan, Candidate of Psychological Sciences, Associate Professor at the Department of Sports Pedagogy and Psychology after Lalayan, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: natalya. gevorgyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 08.09.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 09.09.2023–ին:

Գրախոս՝ մ.գ.թ., դոցենտ Ն. Տեր–Մարգարյան

ԲԱԺԻՆ 6. ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԻՎ ՍՊՈՐՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

UDC 796.01 **DOI: 10.53068/25792997-2023.3.10-134**

STUDY OF MUSCLE SYSTEM TENSION OF WHEELCHAIR BASKETBALL PLAYERS

E.L. Davtyan, M.R. Asatryan, M.R. Sargsyan
Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia

Keywords: Parasport, wheelchair, basketball, muscle tension, training, athletes, sport, muscle groups.

Research Relevance: According to 2018 World Health Organization data, "Every tenth inhabitant of the country is disabled: annually 20 million people are injured and 10 million people become disabled because of accidents". And the number of people with disabilities registered in the RA in 2022, July 1, for men groups at the age of over 40 is 74,097 [7]. As a result, functions aimed at solving problems of rehabilitation of people with disabilities become more urgent and relevant. During recent years, Parasports have become more widespread particularly in Armenia. This problem has become even more relevant especially after the war of 2020, when the number of athletes without limbs increased.A lot of work is currently being done to improve the quality of life of these people. Studies of literature revealed that researches are more focused on the health problems of the disabled, their socio-psychological aspects of body rehabilitation [1,2], practical and active state of athletes with locomotor problems, and the features of heart function regulation. [6]:

Taking into consideration the events of the last years, it became inevitable to carry out research in this field as well, particularly paying special attention to the physical activity and muscular development of disabled athletes. Musculoskeletal system disorders lead to changes in the work of the human body entire system. The organization of physical education in Parasports, particularly among athletes with locomotor problems, is a level of improvement of coordination capabilities of the latter ones [3]. Studies of literary sources have shown that by examining various muscle groups of basketball players during trainings, the authors came to the conclusion that at the end of the

game, muscle functional abilities decrease to a certain extent, which is expressed by the decrease in difference between the indicators of the muscles' tense and relaxed states [4]. The author notes that the decrease in the amplitude of muscle tense and relaxed states during the game is in the result of exhaustion. Basketball, considered as a situational sport, requires athletes to take a complex approach to the body physical improvement, which is aimed, in particular, at boosting speed, strength and coordination qualities.

Research aim: The aim of the research is to study the athletic effectiveness of wheelchair basketball players, considering neuromuscular system functional condition,associated with changes in the tension of arm biceps and quadriceps muscles, thigh quadriceps muscle and large pectoral muscles.

Research methods and organization: The research was carried out in the period of April-May 2022, it was held in the former MIKA stadium. Wheelchair basketball players, 9 athletes from the Central Sports Club of the Army"CSKA" and 9 athletes from the Ministry of Emergency Situations "MES" participated in the research. The maximum muscle tension and relaxation are an important indicator of the functional capabilities of skeletal muscles. These indicators are determined by measuring muscle tone using a myotonometer.

To examine muscle tone, we used spring myotonometers (Sirman's myotonometer), which allows to determine the resistance demonstrated by the muscle when the device probe is immersed into the muscle. It is expressed in conventional units, myotons.The tone of both muscles was measured at symmetric points on the right and left limbs. We recorded quantitative indicators during the period of isotonic contraction and relaxation of the corresponding muscle before and after exercise. The measurement of the tension of the quadriceps femoral muscle was carried out in a sitting position at the same point. The amplitude of the tone was calculated from the difference in the amount of muscle tone in a tense and relaxed condition.

Muscle tone was measured in 4 muscle groups:

- biceps and quadriceps of the arm,
- quadriceps femoral muscle
- large pectoral muscles

Muscle tone was determined first at maximum relaxation of the muscles during rest. If a low tone is recorded, this indicates the ability to contract rapidly. Thenit was determined at maximum tension. Afterwards the difference between these indicators

(amplitude) is calculated, the latter characterizes muscle performance and the speed of recovery processes.The difference between these values is one of the functional indicators that increases along with the fitness indicator. The organization of trainings supposes a complex of therapeutic exercises aimed at developing joint agility, muscle tone, intermuscular coordination, special motor skills and preventing repeated injuries in disabled basketball players., The amplitude of muscle tone increases with the improvement of the neuromuscular system functional condition, and in the case of local exhaustion,it decreases.The myotonetry topography indicators is related to characteristic features of the sport and the athlete's functional condition. The accuracy of the method increases with dynamic observations: The stress or tension index of each muscle was determined by its following formula:

ТН – ТП = К

ТН - muscle tense state

ТП - muscle weak state

К - muscle tone contraction / the difference between the two states /

The obtained data were processed by the mathematical statistics program SPSS. The following indicators were calculated: arithmetic mean (M); standard deviation (±δ); mean error (±m). The Student(t) test was used to determine the reliability of differences in results.

Research result analysis: Of a greater interest are the data characterizing the correltion of indicators of the tone of tense and weakened muscles, since these indicators characterize the muscular system contractility. The greater the difference between the muscle tone under tension and the muscle tone under relaxation, the greater the muscle's ability to relax and tense, and consequently the higher the ability contractility. In one of foreign literature sources it is noted [5] that muscle symmetry is mainly present, especially among healthy athletes when measuring muscle tension,however, our data indicate that athletes in wheelchairs lack symmetry of muscle tension between the right and left segments (Table 1). According to Table 1, if we consider the indicators of the wheelchair athletes of the CSKA and the MES, we will record a 30.62% increase in the biceps muscle tension of the right arm only. In all other muscle groups, high muscle tension differences were recorded in the CSKA wheelchair athletes, 35% on average.

Based on the abovementioned, it becomes clear that with the maximum difference, the indicators of muscle tension were higher among CSKA basketball players, which indicates their high muscle contractility (Table 1).

The training process of the latter was carried out taking into account a complex approach developing speed qualities. Meanwhile, in the process of training MES athletes the training game methodology was implemented.



Diagram 1

Table 1

	Biceps of the Arm		Triceps of the Arm		Large Pectoral (Chest) Muscles		Quadriceps Femoral Muscles	
	Right	**Left**	**Right**	**Left**	**Right**	**Left**	**Right**	**Left**
MES n=9	258	115	196	159	175	173	119	136
CSKA n=9	179	214	206	183	244	257	167	157
Percentage Difference	30,62%	86%	5,1%	15%	39%	48%	40%	15%
Reliability	P=0,057	P=0,14	P=0,782	P=0,506	P=0,117	P=0,044	P=0,200	P=0,464

Conclusion: The use of the myotonometry method to determine the functional capabilities of the athletes' limb muscles is necessary not only as an addition to the clinical picture, but also as an important stage for assessing sports criteria. The results obtained make it possible to determine muscle local exhaustion and take appropriate measures (change the training regime, prescribe appropriate recovery procedures, etc.), which helps to avoid an ineffective training course.The information content of myotonometry increases with dynamic observations. Special attention should be paid to the description of individual indicators of the muscle tone amplitude as an integrative indicator of the functional state of basketball players neuromuscular system.

🕮 REFERENCES

1. <<Администрация города Владимира ООО «Независимое агентство региональных исследований» социологическое исследование по оценке инвалидами отношения населения города Владимира к проблемам инвалидов>> 2020 г., с. 44.
   ("Administration of the city of Vladimir LLC "Independent Agency for Regional Researches" a sociological study on the assessment of the attitude of the population of the city of Vladimir to the problems of disabled people by the disabled" 2020, page 44.)
2. Давтян Е.Л., Исследование взаимосвязи специальной выносливости и показателелей функционального состояния зрительной сенсорнойсистеемы у баскетболистов 15-16 лет Ленинград, 1978; стр.61-66.
   (Davtyan E.L.; Investigation of the correlation between special endurance and indicators of the functional state of the visual sensory system of basketball players at the age of 15-16, Leningrad, 1978; pp.61-66.)
3. Добровольская Т.А., Шабалина Н.Б., Социально-психологические особенности взаимоотношений инвалидов и здоровых, 1993г., с. 62.
   (Dobrovolskaya T.A., Shabalina N.B., Socio-psychological features of the relationship between the disabled and the healthy, 1993, page 62.)
4. Дудкин Г. В.; «Медико-социальный потенциал адаптивного спорта» Волгоград; 2006г. с. 29.

(Dudkin G. V.; "Doctors-the social potential of adaptive sports" Volgograd; 2006, p. 29.)

5. Matthew D. DeLang, SPT, Melodie Kondratek, PT, DScPT, OMPT, Lorenzo J. DiPace, SPT, and Tamara Hew-Butler, Collegiate male soccer players exhibit between-limb symmetry in body composition, muscle strength, and range of motion, doi: 10.26603/ijspt20171087 2017.
6. Степанян Л.С., Саркисян М.Р., Научные и образовательные основы в физической культуре и спорте, показатели ВСР у баскетболистов-колясочников под влиянием тренировочной нагрузки, Том9, N1, Нстр. 2023г.; стр. 52-58. (Stepanyan L.S., Sarkisyan M.R., Scientific and educational foundations in physical culture and sport, HRV indicators among wheelchair basketball players under the influence of training load, Vol. 9, N1, 2023; pp. 52-58.)
7. file:///C:/Users/User/Downloads/2022թ..pdf

ՄԿԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՍԱՅԼԱԿՈՎ ԲԱՍԿԵՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄՈՏ

Ե. Լ. Դավթյան, Մ. Ռ. Ասատրյան, Մ. Ռ. Սարգսյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Առանցքային բառեր: Հաշմանդամային սպորտ, անվասայլակ, բասկետբոլ, մկանային լարվածություն, մարզումներ, մարզիկներ, մարզաձև, մկանախմբեր:

Հետազոտության արդիականություն: Ներկայումս մարզական կատարողականության մակարդակն անվասայլակներով բասկետբոլիստների մոտ մեծապես կախված է ոչ միայն իրենց ֆունկցիոնալ համակարգի զարգացման մակարդակից, այլև մկանային համակարգի զարգացվածությունից: Հետևաբար, մկանային համակարգի զարգացվածության աստիճանի ուսումնասիրությունը կհանգեցնի մարզական գործունեության նոր տեխնիկական հնարների որոնման, վերջինս էլ կբարելավի մարզումային գործընթացը: Անվասայլակներով բասկետբոլ մարզաձևով զբաղվող մարզիկների պարապմունքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միայն մանկավարժական դիտարկումները բավարար արդյունք չեն տալիս: Հոդվածում ներկայաց-

ված է անվասայլակով բասկետբոլիստների մկանային համակարգի լարվածության աստիճանը համապատասխան մկանախմբերում՝ բազկի երկգլուխ և քառագլուխ, ազդրի քառագլուխ, կրծքի մեծ մկաններ:

Հետազոտության նպատակ: Հաշմանդամ բասկետբոլիստների մոտ ուսումնասիրել մարզումների արդյունավետությունը՝ հաշվի առնելով մկանային լարվածության ցուցանիշները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտությանը մասնակցել են 18 անվասայլակով բասկետբոլիստներ, վերջիններս եղել են Բանակի կենտրոնական մարզական ակումբի ‹‹ԲԿՄԱ›› և Արտակարգ իրավիճակների նախարարության ‹‹ԱԻՆ›› թիմերի անդամներ: Մկանային լարվածությունը հետազոտելու համար օգտագործել ենք զսպանակային միոտոնոմետրեր (Sirman's myotonometer): Մկանային լարվածությունը չափել ենք 4 մկանախմբերում՝ բազկի երկգլուխ և քառագլուխ, ազդրի քառագլուխ և և կրծքի մեծ մկաններ:

Ստացված արդյունքների վերլուծություն: Հետազոտության արդյունքում ստացված ցուցանիշները ցույց տվեցին, որ անվասայլակով ‹‹ԲԿՄԱ››-ի բասկետբոլիստների մոտ ինչպես բեռնվածությունից առաջ, այնպես էլ բեռնվածությունից հետո (աջ և ձախ վերջույթներում) արդյունքները, համեմատ ‹ԱԻՆ›-ի բասկետբոլիստների, բարձր են, թեպետ հայտնաբերվել էիր անհամաչափ զարգացվածություն: Վերը նշվածը բացատրվում է նրանով, որ ‹ԱԻՆ›-ի բասկետբոլիստների մարզման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել մարզման խաղային մեթոդին, իսկ ‹‹ԲԿՄԱ››-ի բասկետբոլիստների մոտ մեծ ծավալով օգտագործվել է արագաուժային որակներ զարգացնող վարժություններ, որոնք նպաստել են մկանների տոնուսի բարելավմանը:

Համառոտ եզրակացություն: Անվասայլակով բասկետբոլիստների մոտ մկանային համակարգի ֆունկցիաների փոփոխությունները կախված են մարզման ընթացքում բասկետբոլիստների կողմից կատարած մասնագիտական բեռնվածության բնույթից: Ստացված տվյալները կարող են օգտագործվել հաշմանդամ մարզիկների մարզումային ցիկլի տարբեր ժամանակահատվածներում՝ նյարդամկանային համակարգի վիճակը գնահատելու համար:

ИЗУЧЕНИЕ НАПРЯЖЕНИЯ МЫШЕЧНОЙ СИСТЕМЫ У БАСКЕТБОЛИСТОВ КОЛЯСОЧНИКОВ

Е. Л. Давтян, М. Р. Асатрян, М. Р. Саргсян
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: Спорт инвалидов, инвалидная коляска, баскетбол, мышечное напряжение, тренировка, спортсмены, спорт, группы мышц.

Актуальность исследования. В настоящее время уровень спортивных результатов баскетболистов-колясочников во многом зависит не только от уровня развития их функционального аппарата, но и от степени развития мышечного аппарата. Следовательно, изучение развития мышечной системы приведет к поиску новых технических навыков спортивной деятельности, а это позволит улучшить тренировочный процесс. Сами по себе педагогические наблюдения недостаточны для повышения эффективности занятий баскетболистов-колясочников. В статье представлена степень напряжения мышечного аппарата баскетболистов-колясочников в соответствующих группах мышц: двуглавой и четырехглавой мышцах руки, четырехглавой мышце бедра, крупных мышцах груди.

Цель исследования. Изучить эффективность тренировок баскетболистов- колясочников с учетом показателей мышечного напряжения.

Методы и организация исследования. В исследовании приняли участие 18 баскетболистов-колясочников, последние входили в состав команд Центрального спортивного клуба армии «ЦСКА» и команды «МЧС». Для исследования мышечного напряжения использовали пружинные миотонометры (миотонометр Сирмана). Измеряли мышечное напряжение в 4 группах мышц: бицепсах и квадрицепсах руки, квадрицепсах бедра и крупных мышцах груди.

Анализ полученных результатов. Полученные в результате исследования данные показали, что результаты баскетболистов-колясочников «ЦСКА» как до, так и после нагрузки (в правой и левой конечностях) были выше, чем у баскетболистов «АИН», несмотря на наличие непропорционального развития конечностей. Вышеизложенное объясняется тем, что при подготовке баскетболистов «МЧС» большое внимание уделялось игровому методу тренировки, а у баскетболистов «ЦСКА» применялось

большое количество упражнений на развитие скоростных качеств, что способствовало улучшению мышечного тонуса.

Краткое заключение. Изменения функций мышечного аппарата у баскетболистов-колясочников зависят от характера профессиональной нагрузки, выполняемой баскетболистами во время тренировки. Полученные данные могут быть использованы для оценки состояния нервно-мышечной системы в разные периоды тренировочного цикла спортсменов-инвалидов.

Տեղեկություններ հեղինակների մասին

Եղիշ Լևոնի Դավթյան՝ մ.գ.թ., Մարզախաղերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: yeghish.davtyan@sportedu.am

Մարինե Ռոլանդի Ասատրյան՝ Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: marina.asatryan@sportedu.am

Մարգարիտա Ռուբիկի Սարգսյան՝ Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, ORCID: 0000-0003-2930-4801

E.mail: margarita.sargsyan@sportedu.am

Information about the authors

Eghish Levon Davtyan, Associate Professor of the Department of Sport Games, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: coachdavtyan@yahoo.com

Marine Roland Asatryan, Associate Professor, Department of Biomedical Sciences, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: marina.asatryan@sportedu.am

Margarita Rubik Sargsyan, Lecturer of Biomedical Sciences, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, ORCID 0000-0003-2930-4801,

E-mail: margarita.sargsyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 10.09.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 11.09.2023–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ.Ղազարյան

ԲԱԺԻՆ 7. ՍՊՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

ՀԴՏ 371.321.3 DOI: 10.53068/25792997-2023.3.10-143

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ «ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ» ԲԱԺՆՈՒՄ

Ս. Գ. Խաչատրյան, Ա. Գ. Ստեփանյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Առողջ ապրելակերպ, ժամանակակից տեխնոլոգիաներ, ծրագիր, աշակերտներ, ուսուցիչներ:

Հետազոտության արդիականություն: Վերջին ժամանակներում գնալով դժվարանում է բնակչության առողջության և առողջ ապրելակերպի հարցերի կառավարումն ու վերահսկումը: Այն այսօր պահանջում է առավել համակարգված և նպատակաուղղված գործունեություն ո՛չ միայն բուժաշխատողների, այլև մանկավարժների կողմից [1, 2, 3, 4, 5]:

Հարկ է նշել, որ դպրոցականների առողջական վիճակի և ֆիզիկական պատրաստվածության բարելավման ուղղությամբ տարբեր երկրներում ստեղծվում են այլընտրանքային ուսումնական ծրագրեր, առավել նպատակաուղղված է պլանավորվում ֆիզիկական դաստիարակության ուսումնական գործընթացը, կատարելագործվում են դրա արդյունավետության բարձրացման ուղիները [8, 10, 11]:

Նման օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում նաև մեր երկրում գոյություն ունեցող մանկավարժական տեսությունների և հայեցակարգերի, ինչպես նաև նոր կամ ավանդական մոտեցումների կատարելագործման ուղղությամբ [5, 6, 7, 9]:

Ինչպես վկայում են մասնագետները, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների թափանցումը կրթության ոլորտ մանկավարժներին հնարավորություն է տալիս որակապես փոխել ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու կազմակերպման ձևերը [7, 9]:

Այս տեսանկյունից բազմաթիվ հետազոտությունների և մշակումների արդյունքում հիմնավորվել և փորձարարությամբ ստուգվել են նոր մոտեցումներ, պա-

ռապմունքների հետաքրքիր մեթոդիկաներ ու ձևեր, ինչը հանգեցրել է մարդու կյանքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի դերի ու նշանակության իմաստավորմանն ու ամրապնդմանը [4, 6, 9]:

Ուստի, անհրաժեշտություն է առաջանում կատարել հետազոտություններ Հայաստանի հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի շրջանակում «Առողջ ապրելակերպ» բաժնի գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հետազոտության նպատակը: Որոշել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունն աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել առողջ ապրելակերպի դասավանդման գործընթացը հանրակրթական դպրոցում:

2. Որոշել ժամանակակից տեխնոլոգիաներով «Առողջ ապրելակերպ» բաժնի դասավանդման արդյունավետ պայմանները:

3. Մշակել 8-11-րդ դասարանների համար ժամանակակից տեխնոլոգիաներով առողջ ապրելակերպի դասընթացների ծրագիր:

4. Գիտափորձով ստուգել մշակված ծրագրի արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության իրականացման համար օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության վերլուծություն, մանկավարժական դիտում, սոցիոլոգիական հարցում, մանկավարժական գիտափորձ, մանկավարժական թեստավորում, մաթեմատիկական վիճակագրություն:

Հետազոտությունը կատարվել է 2021-2022 ուսումնական տարվա նոյեմբերից մարտ ամիսներին Դավիթ Հովսեփյանի անվան 191 հիմնական և Գալուստ Գյուլբեկյանի անվան 190 ավագ դպրոցների՝ շուրջ 207 աշակերտների (55՝ 8-րդ դասարանցիներ, 56՝ 9-րդ, 49՝ 10-րդ և 47՝ 11-րդ) և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում վերապատրաստվող ֆիզիկական կուլտուրայի 82 ուսուցիչների շրջանում (աշխատանքային միջին ստաժը 23 տարի է):

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հիմնախնդրի լուծման համար կատարվել է մանկավարժական դիտում 8-11-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդման ժամանակ: Յուրաքանչյուր դասարանում ուսումնասիրվել է երկու դաս: Միաժամանակ անցկացվել է սոցիոլոգիական հարցում աշակերտների և ուսուցիչների շրջանում: Մանկավարժական դիտումնե-

րի և սոցիոլոգիական հարցումների վերլուծության արդյունքում պարզաբանվել են հետևյալ հենքային հարցերը, որոնք համակարգվել են երեք հիմնական բլոկներում.

Առաջին. առողջ ապրելակերպի դասավանդման գործընթացում ուսուցիչների միայն 21.3%–ն է կիրառում ցուցադրական նյութեր, իսկ ժամանակակից տեխնոլոգիաներով դասն անցկացնում է 9.4%–ը: Մնացած դեպքերում դասը կազմակերպվում է ավանդական մեթոդներով:

Երկրորդ. դասերի ընթացքում չի կատարվում աշակերտների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ գնահատում: Ըստ 89.6% ուսուցիչների՝ առանց գնահատման կայուն ցուցանիշների դժվար է հասկանալ և համարժեք որոշել աշակերտների կողմից նյութերի ընկալման մակարդակը:

Երորրդ. աշակերտների 66.8%–ը ցանկություն են հայտնել դասերին դիտել տեսաֆիլմեր և սահիկաշարեր, միևնույն ժամանակ նրանցից 47.9%-ը նախընտրում է ունենալ գրականություն, հատկապես խնդրահարույց այնպիսի հարցերի ուսումնասիրության դեպքում, որոնք որոշակի բարդություններ են ներկայացնում դասավանդման ընթացքում (սեռական հիգիենան, վերարտադրողական սեռական առողջություն, հղիություն ու ծննդաբերություն, սեռավարակներ և թրաֆիքինգ):

Նույնանման առաջարկներ արձանագրվել են նաև ուսուցիչների կողմից: Նրանց 57.1%–ը ցանկություն է հայտնել դասերն անցկացնել ժամանակակից տեխնոլոգիաներով, սակայն նրանցից միայն 7.5%–է տիրապետում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկություններին (սահիկաշարերի, տեսաֆիլմերի պատրաստում, ժամանակակից տեխնոլոգիաներով խաղերի կազմակերպում և այլն), ընդ որում՝ միայն երիտասարդները: Նրանց 64.7%–ը գտնում էր, որ աշակերտներին անհրաժեշտ է գրականություն տրամադրել, 73.1%–ը կարծում էր, որ հարկավոր է որոշ դասեր անցկացնել տղաների և աղջիկների առանձին խմբերով, իսկ 63.8%–ը ցանկություն է հայտնել վերապատրաստվել ժամանակակից տեխնոլոգիաներով դասերն անցկացնելու վերաբերյալ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ հետազոտվող դպրոցներում և հարցված ուսուցիչների շրջանում «Առողջ ապրելակերպ» բաժնի դասավանդման գործընթացում գրեթե չեն կիրառվում ժամանակակից տեխնոլոգիաներ:

Գրական աղբյուրների, մանկավարժական դիտումների և սոցիոլոգիական հարցումների վերլուծության արդյունքում անհրաժեշտություն առաջացավ մշակել ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած առողջ ապրելակերպի ծրագիր և

գիտափորձով ստուգել դրա արդյունավետությունը (գիտափորձի տևողությունը՝ 4 ամիս):

Հետազոտության իրականացման համար ընտրվել են մեկական 8-րդ և 9-րդ փորձարարական և ստուգողական դասարաններ Դավիթ Հովսեփյանի անվան 191 հիմնական դպրոցում (8-րդ փորձարարական դասարանում 29 աշակերտ, ստուգողականում՝ 26 աշակերտ, 9-րդ փորձարականում՝ 27 աշակերտ, իսկ ստուգողականում՝ 29 աշակերտ) և նույնանման 10-րդ ու 11-րդ դասարաններ Գալուստ Գյուլբեկյանի անվան 190 ավագ դպրոցում (համապատասխանաբար՝ 25, 24 և 24, 27 աշակերտ):

Փորձարարական դասարաններում դասերը կազմակերպվել են մշակված ծրագրի ու նրա պայմաններին համապատասխան, իսկ ստուգողականներում դասերն ընթացել են ավանդական ձևով: Յուրաքանչյուր փորձարարական դասարանում մշակված ծրագրով անցկացվել է 14 դաս՝ դպրոցի դասացուցակի և ակադեմիական ժամերի համապատասխան: Դասերը հագեցած են եղել ցուցադրական նյութերով, տեսաֆիլմերով, սահիկաշարերով և ժամանակակից տեխնոլոգիաներով, ինտերակտիվ խաղերով: Բոլոր դասերին իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները, իսկ որոշ դասերին՝ նաև դասղեկները:

Յուրաքանչյուր դաս բաղկացած է եղել հետևյալ բաժիններից.

- նախորդ դասի ամփոփում (տնային առաջադրանքի գնահատականների ներկայացում),
- նոր նյութի ներկայացում (սահիկաշար, տեսաֆիլմ),
- իրավիճակային խաղ,
- ֆիզկուլտդադար,
- գիտելիքների ստուգում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով,
- տնային հանձնարարականի առաջադրում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հարկ է նշել, որ դասերի հիմնական պայմաններից է եղել ֆիզկուլտդադարների անցկացումը, ինչը ֆիզկուլտուրային առողջարարական անհրաժեշտ միջոց է մտավոր աշխատանքի կատարման ընթացքում:

Մշակված ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով գիտափորձից առաջ և հետո կատարվել է գիտելիքների թեստավորում, որը նույնպես իրականացվել է ժամանակակից տեխնոլոգիաներով: Թեստերում առաջադրվել է 20 հարց, որոնք ունեցել են երեք սխալ և մեկ ճիշտ պատասխան: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվել է «0.5» միավոր, առավելագույն հավաքած արդյունքը գնահատվել է «10» միավոր: Ան-

ցողիկ շեմը սկսվել է «4» միավորից, ինչպես, որ ընդունված է հանրակրթական դպրոցներում [5]: Հարցերը կազմվել են «Առողջ ապրելակերպ» բաժնի գործող ծրագրի թեմաների համապատասխան, որոնց մշակման գործընթացին մասնակցել են նաև ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները:

Գիտափորձից հետո գիտելիքների թեստավորման արդյունքում փորձարարական դասարաններում գրանցվեցին զգալի դրական տեղաշարժեր, ինչը չարձանագրվեց ստուգողական դասարաններում (տր. 1):



Տրամագիր 1. ***Փորձարարական և ստուգողական խմբերի գիտափորձից առաջ և հետո թեստավորման միավորների միջին գնահատականը***

Գիտափորձից առաջ միայն 8-րդ դասարաններում աշակերտների գիտելիքների միջին գնահատականը չի եղել անցողիկ: Սակայն, հաշվի առնելով գնահատման պարզ օրինաչափությունը, եթե գնահատականը հասել է 3.5 միավորի, այն հաշվում է հոգուտ աշակերտի, հետևաբար տրամաբանական է, որ բոլոր դասարաններում մինչ գիտափորձը գիտելիքների թեստավորման միջին գնահատականը համարվել է բավարար:

Ինչ վերաբերում է գիտափորձից հետո թեստավորման արդյունքներին, ապա, փորձարարական 8-րդ դասարանում միջին գնահատականը բարելավվել է 3.5, 9-րդում՝ 4.2, 10-րդում՝ 4.2, իսկ 11-րդում՝ 4 միավորով, իսկ ստուգողական դասարաններում համապատասխանաբար՝ 1.6, 1.8, 1.8 և 1.9 միավորներով: Արձանագրված արդյունքները բնութագրում են մշակված ծրագրի արդյունավետությունը գործող ծրագրի համեմատ:

Եզրակացություն: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ «Առողջ ապրելակերպ» բաժնի գործընթացում գրեթե չեն կիրառվում ժամանակակից տեխնոլոգիաներ, որի հիմնական պատճառներից է ուսուցիչների գիտելիքների ու կարողությունների մակարդակը (7.5%): Ուսումնասիրության ընթացքում առանձնացվեցին ժամանակակից տեխնոլոգիաներով դասերը վարելու մանկավարժական արդյունավետ պայմաններ և մշակվեց ծրագիր՝ 8-11-րդ դասարանների համար: Գիտափորձով հաստատվեց մշակված ծրագրի արդյունավետությունն աշակերտների առողջ ապրելակերպի գիտելիքների ձևավորման վերաբերյալ՝ հիմք ընդունելով փորձարարական դասարաններում գիտելիքների թեստավորման արդյունքների դրական տեղաշարժերը (բարելավվեցին համապատասխանաբար՝ 3.5, 4.2, 4.2 և 4 միավորներով):

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Գ.Վ., Կարապետյան Վ.Տ, Առողջ ապրելակերպի դերն ու նշանակությունը հանրակրթական դպրոցում, Մանկավարժություն, Պրակ Բ, N 1, 2017, էջ 95-100:
2. Ալեքսանյան Լ. և համահեղ., Առողջ ապրելակերպ, Ուսուցչի ձեռնարկ (8-9-րդ դասարանների համար), Երկրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2018, 160 էջ:
3. Ալեքսանյան Լ. և համահեղ., Առողջ ապրելակերպ, Ուսուցչի ձեռնարկ (10-11-րդ դասարանների համար), Երկրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2018, 158 էջ:
4. Խաչատրյան Ս.Գ, Կյանքի արժեքների գնահատումը ավագ դպրոցականների շրջանում, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Բ, 2018, էջ 88-93:

5. Մինասյան Հ.Ս, Գաբրիելյան Հ.Հ., «Ֆիզիկական կուլտուրա» գնահատումը հանրակրթական դպրոցում. 2-12-րդ դասարան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2012, 96 էջ:
6. Մելքումովա Մ., Մովսեսյան Ե., Մաշուրյան Ժ., Ուսուցողական թեմատիկ տեսահոլովակների ցուցադրումը «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացքում, Ուսուցչի ուսումնամեթոդական ձեռնարկ, ՀՀ ԿԳ նախարարի 12.06.2018թ. 24 էջ:
7. Ստեփանյան Ա.Գ., Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության բովանդակությունը, Մանկավարժական միտք, N 3-4, Երևան, 2017, էջ 212-218:
8. Луцкая Е.Н., Добрикова С.А.,Формирование здорового образа жизни у старшеклассников // Физическая культура в школе.-2017.-2017.-N1.- С. 25-30.
9. Степанян А.Г., Современные образовательные технологии как залог модернизации процесса преподавания предмета “Физическая культура” International journal of innovative technologies in social science.8 (20), November 2019р.9-15
10. Хорошева Т.А. с соавт., Физическая культура как фактор формирования и укрепления здоровья современных школьников // Физическая культура в школе.-2017.-N 3.с. 16-20
11. Чедов К.В., Обеспечение преемственности в формировании культуры здоровья старшеклассников и студентов //Теория и практика ФК.-2018.-N10.-С. 36-38.

FEATURES OF THE USE OF MODERN TECHNOLOGIES IN THE SECTION "HEALTHY LIFESTYLE" IN PUBLIC SCHOOLS AT "PHYSICAL CULTURE"

S. G. Khachatryan, A. G. Stepanyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Healthy lifestyle, modern technologies, program, students, teachers.

Research relevance: Recently, it has become increasingly difficult to manage and control the issues of health and healthy lifestyle of the population, which requires more coordinated and targeted activities not only by medical workers, but also by educators.

As evidenced by the experts, the penetration of modern information technologies into the field of education gives pedagogues the opportunity to change the content, methods and forms of organizing teaching significantly.

Therefore, there is a need to conduct research in the RA schools within the scope of the "Physical Culture" in order to improve the process of the "Healthy Lifestyle" and increase its efficiency.

Research aim: To determine the effectiveness of using modern technologies in the process of students' healthy lifestyle formation.

Research methods and organization: Analysis of scientific-methodical literature, pedagogical observation, sociological survey, pedagogical scientific experiment, pedagogical testing, mathematical statistics.

The research was carried out from November to March of the 2021-22 academic year in the schools of Yerevan and Armenia State Institute of Physical Culture and Sport among trainee physical education teachers, and several hundred students and teachers.

Research results and analysis: It was revealed that only 7.5% of the surveyed teachers use modern technologies for healthy lifestyle classes. As a result of the testing of the program developed with modern technologies (slides, demonstration materials, video films, interactive games with technologies), in the experimental 8-11th grades, the students' knowledge about healthy lifestyle improved.

Conclusion: According to the research, it became clear that almost no modern technologies are used in the process of the healthy lifestyle department. The scientific experiment confirmed the effectiveness of the healthy lifestyle program has developed with the help of modern technologies in 8-11th grades.

ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ СОВРЕМЕННЫХ ТЕХНОЛОГИЙ В РАЗДЕЛЕ «ЗДОРОВЫЙ ОБРАЗ ЖИЗНИ» ПО ПРЕДМЕТУ «ФИЗИЧЕСКАЯ КУЛЬТУРА»

С. Г. Хачатрян, А. Г. Степанян
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: здоровый образ жизни, современные технологии, программа, учащиеся, учителя.

Актуальность исследования. Со временем все более затрудняются вопросы управления и контролирования процесса обеспечения «здорового образа жизни», что касается не только специалистов органов здравоохранения, но и преподавателей. Исследования свидетельствуют о том, что внедрение современных технологий в систему образования позволяет преподавателям качественно перестраивать методы и содержание обучения. Следовательно, диктуется необходимость изучить вопросы совершенствования раздела «здорового образа жизни» государственной школьной программы по предмету «Физическая культура».

Цель исследования. Выявить особенности использования современных технологий в процессе организации и формирования «здорового образа жизни» школьников.

Методы и организация исследования. В работе использованы методы обобщения литературных источников по проблеме, социологического опроса, педагогического тестирования и эксперимента. Результаты обработаны статистически. Исследования проведены в 2021-2022 гг. в школах Еревана и на курсах повышения квалификации учителей физической культуры. Во всех сериях исследований приняли участие несколько сот респондентов и школьников.

Анализ полученных результатов. В итоге исследований установлено, что в процессе преподавания раздела «здоровый образ жизни» лишь 7.5% учителей используют современные технологии, что не соответствует современным требованиям. Апробация разработанной программы с использованием педагогических технологий (презентации, видеоролики, интерактивные компютерные игры) в 8-11 классах способствовала достоверному улучшению знаний и формированию практических навыков по «здоровому образу жизни» учащихся.

Краткие выводы: установлено, что в процессе преподавания курса «здоровый образ жизни» практически не используются современные технологии. Показана целесообразность и эффективность разработанной программы по «здоровому образу жизни» и необходимость ее дальнейшего использования в соответствующих классах общеобразовательной школы.

Տեղեկություններ հեղինակների մասին

Խաչատրյան Սաթենիկ Գառնիկի՝ Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: satenik.khachatryan@sportedu.am

Ստեփանյան Արտակ Գառնիկի՝ մ.գ.թ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: artak.stepanya@sportedu.am

Information about the authors

Satenik Garnik Khachatryan, Lecturer of the Chair of Theory of Physical Education, Methodology and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: satenik.khachatryan@sportedu.am

Artak Garnik Stepanyan, PhD, Associate Professor, Head of the Chair of Theory of Physical Education, Methodology and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: artak.stepanya@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 11.09.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 13.09.2023–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 796.332 DOI: 10.53068/25792997-2023.3.10-153

ՖՈՒՏԲՈԼ ՄԱՐԶԱՁԵՎՈՒՄ GPS ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Լ. Ա. Մեծոյան, Մ. Ս. Պողոսյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Ֆուտբոլ, տեղեկատվական տեխնոլոգիա, գլոբալ տեղորոշման տեխնոլոգիա (GPS համակարգ), արհեստական արբանյակ, մոնիտորինգ:

Հետազոտության արդիականություն*:* Ֆուտբոլը դինամիկ սպորտաձև է, որը խաղացողներից պահանջում է ֆիզիկական և մտավոր բեռնվածության բարձր մակարդակ: Հաղթանակի և պարտության միջև տարբերությունը կարող է լինել դյույմների կամ վայրկյանների խնդիր, ինչն արդյունավետության օպտիմալացումը դարձնում է խաղի կարևոր ասպեկտը: Վերջին տարիներին տեխնոլոգիական առաջընթացը թիմերին տվել է նորարարական գործիքներ՝ սեփական արդյունավետությունը բարձրացնելու համար: Տեխնոլոգիական այս գործիքների շարքում ֆուտբոլային ինդուստրիայում տարածում է գտել գլոբալ տեղորոշման տեխնոլոգիան (GPS):

Ֆուտբոլում GPS տեխնոլոգիայի կիրառումը փոխել է թիմերի մոտեցումը մարզումների և արդյունավետության վերլուծության նկատմամբ: GPS տեխնոլոգիան մարզիչներին իրական ժամանակի ռեժիմում տրամադրում է տվյալներ խաղացողների շարժման և կատարողականության այնպիսի ցուցանիշների վերաբերյալ, ինչպիսիք են անցած հեռավորությունը, արագությունը, արագացումը, դանդաղումը և սրտի զարկերը: Այս տվյալները կարող են օգտագործվել մարզումների ծրագրերի օպտիմալացման և խաղացողի կատարողականությունը բարելավելու համար՝ բարելավման ենթակա ոլորտները բացահայտելու շնորհիվ:

Արդյունավետության վերլուծության ավանդական այնպիսի մեթոդների համեմատ, ինչպիսիք են տեսավերլուծությունը կամ սուբյեկտիվ դիտարկումը, GPS տեխնոլոգիան ապահովում է օբյեկտիվ տվյալներ, որոնք հնարավոր է ավելի արդյունավետ վերլուծել: Սա մարզիչներին թույլ է տալիս ավելի տեղեկացված որոշումներ կայացնել խաղացողների ընտրության և մարզումների ծրագրերի վերաբերյալ:

Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ GPS տեխնոլոգիան կարևոր գործիք է

դարձել ֆուտբոլային թիմերի համար, որոնք ցանկանում են օպտիմալացնել իրենց արդյունավետությունը: Խաղացողների շարժման և կատարողականության ցուցանիշների վերաբերյալ իրական ժամանակի տվյալներ տրամադրելով՝ GPS տեխնոլոգիան փոխել է թիմերի մարզումների և արդյունավետության վերլուծության ձևը: Այս ամենը, վերջին հաշվով, բարձրացնում է դաշտում նրանց հաջողության հնարավորությունները:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ֆուտբոլային մարզիչների գործունեության մեջ **GPS** տեխնոլոգիայի օգտագործման հիմնական դերն ու առանձնահատկությունները և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում **GPS** տեխնոլոգիայի ներդրման առավելությունները, դրա համեմատությունը ավանդական մեթոդների հետ, ինչպես նաև հնարավոր խնդիրները, որոնք կարող են կապված լինել **GPS** տեխնոլոգիայի ներդրման հետ:

Հետազոտության մեթոդները: Սահմանված խնդիրները լուծելու համար օգտագործվել է համապարփակ և հատուկ պատմական մոտեցում, ինչպես նաև ընդհանուր տեսական հետազոտության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ համակարգային և կառուցվածքային-ֆունկցիոնալ մեթոդները, գրական աղբյուրների համեմատական վերլուծության եղանակը, ինչպես նաև փաստաթղթերն ու համացանցային կայքերը վերլուծելու էմպիրիկ մեթոդը և այլն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Տեղեկատվական տեխնոլոգիաները բառացիորեն շոշափել են մեր կյանքի բոլոր ոլորտները: Նորարարությունը չի խնայել անգամ սպորտի աշխարհը, որտեղ տվյալների մշակումը այսօր առաջնային դեր է խաղում: ՏՏ տեխնոլոգիաների շնորհիվ այսօր ֆուտբոլը դարձել է ավելի վերահսկվող խաղ, և արդյունքի վրա մարդկային գործոնի ազդեցությունը դառնում է նվազագույն [4, 22]: Տեխնիկական նորարարությունների ներդրումն իրականացվում է բոլոր ճակատներում, ինչպես պաշտոնական ներկայացման կամ հեռարձակման մակարդակում, այնպես էլ վերապատրաստման գործընթացում:

GPS-ը («Global Positioning System», «Գլոբալ տեղորոշման համակարգ») արբանյակային նավիգացիոն համակարգ է, որն ապահովում է հեռավորության, ժամանակի և գտնվելու վայրի չափումներ WGS 84 համաշխարհային կոորդինատային համակարգում: Տվյալ համակարգը թույլ է տալիս որոշել օբյեկտների գտնվելու վայրը և արագությունը աշխարհի գրեթե ցանկացած կետում (բացառությամբ մերձբևեռային շրջանների):

GPS-ի մշակումը սկսվել է 1950-ական թվականներին ԱՄՆ պաշտպանության նախարարության համար, սակայն այժմ

այս տեխնոլոգիան գործածվում է ոչ միայն զինվորականների կողմից, այլև առօրյա կյանքում: Այդ ժամանակ ԽՍՀՄ-ն արձակել էր Երկրի առաջին արհեստական արբանյակը, և այս իրադարձությանը հետևող ամերիկացի գիտնականները նկատեցին, որ Դոպլերի էֆեկտի շնորհիվ ընդունվող ազդանշանի հաճախականությունը մեծանում է արբանյակի մոտենալուն զուգընթաց և նվազում դրա հեռավորության ավելացման հետ մեկտեղ: Նրանք եկան այն եզրակացության, որ Երկրի վրա սեփական ճշգրիտ կոորդինատների մասին տեղեկատվություն ունենալու դեպքում, հնարավոր է չափել արբանյակի դիրքն ու արագությունը, իսկ իմանալով, թե որտեղ է գտնվում արբանյակը, կարելի է հաշվարկել սեփական արագությունն ու կոորդինատները:

GPS համակարգը բաղկացած է արհեստական արբանյակներից, որոնք պտտվում են Երկրի միջին ուղեծրում (NAVSTAR արբանյակային համակարգ, որը մշակված է ԱՄՆ-ում) և վերգետնյա մոնիտորինգի կայաններից, որոնք միավորված են ընդհանուր ցանցում: Արբանյակները շարունակաբար Երկիր են փոխանցում նավիգացիոն ազդանշան, որը ներառում է «կեղծ պատահական ծածկագիր», էֆեմերի տվյալներ (արբանյակի կանխատեսելի կոորդինատները և շարժման պարամետրերը ժամանակի որոշակի կետում) և ալմանախը (արբանյակի մոտավոր գտնվելու վայրը հաշվարկելու տվյալներ): Այս ազդանշանն ընդունում են բաժանորդային GPS սարքերը, որոնք ստացված տեղեկատվության հիման վրա հաշվարկում են սեփական աշխարհագրական դիրքը:

Ինչպե՞ս է այն աշխատում: Ֆուտբոլիստների թիկունքին տեղադրվում է փոքրիկ սենսոր, որն ամրացված է կանացի սպորտային կրծկալ հիշեցնող շապիկով: Թրեքերներն օգնում են հետևել վազքի արագությանը, ինտենսիվությանը, դինամիկ բեռներին, միջին և առավելագույն արագությանը, սպրինտների քանակին և այլն. կարելի է նույնիսկ ուսումնասիրել խաղացողի ջերմային քարտեզը նրա գործունեության ավարտին: Ստացված տվյալներն անհրաժեշտ են, որպեսզի մարզչական շտաբը վերլուծի մարզիկի վիճակը և բացահայտի նրա թույլ կողմերը, ուստի այս սարքը հաճախ կարելի է տեսնել ֆուտբոլիստների վրա մարզումների ժամանակ: Արդյունքները, իրական ժամանակի ռեժիմում, կարելի է ուսումնասիրել հատուկ հավելվածի օգնությամբ սմարթֆոնի, պլանշետի կամ համակարգչի վրա:

Գլոբալ տեղորոշման համակարգն (GPS) օգտագործում է արբանյակների ցանց՝ օբյեկտի կամ անձի ճշգրիտ գտնվելու վայրը որոշելու համար: Ֆուտբոլի

համատեքստում GPS սարքերը դարձել են խաղացողների շարժումներին հետևելու և արդյունավետության տվյալների հավաքագրման արժեքավոր գործիք: GPS սարքերը փոքր են, թեթև և կարող են հեշտությամբ կցվել խաղացողի մարզաշապիկին մարզումների կամ խաղերի ժամանակ՝ չխանգարելով խաղացողի շարժումներին: Սարքերը հագեցած են աքսելերոմետրերով, գիրոսկոպերով և բարոմետրերով, որոնք թույլ են տալիս հայտնաբերել արագության, ուղղության և բարձրության փոփոխությունները: Դաշտում խաղացողների տեղաշարժվելու ընթացքում, GPS սարքերը տվյալներ են հավաքում նրանց կատարողականի տարբեր ասպեկտների վերաբերյալ, ներառյալ անցած հեռավորությունը, արագությունը, արագացումը, դանդաղումը և ուղղության փոփոխությունները:

Այս տվյալներն այնուհետև վերլուծվում են մարզիչների կողմից՝ խաղացողների արդյունավետության վերաբերյալ պատկերացում կազմելու, բարելավման ոլորտները բացահայտելու և մարզումների ռեժիմներն օպտիմալացնելու համար, թիմի ընդհանուր արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Ընդհանուր առմամբ, GPS տեխնոլոգիան ապահովում է արդյունավետ և անխոչընդոտ մեթոդ արդյունավետության այնպիսի տվյալներ հավաքելու համար, որոնք նախկինում հասանելի չէին ավանդական մեթոդներով:

Catapultsports.com կայքը մանրամասն ներկայացրել է 6 պատճառ, որոնց համար մարզիչներն օգտագործում են GPS տեխնոլոգիան ֆուտբոլում: Ստորև կներկայացնենք այդ պատճառները՝

1. Նվազեցնել վնասվածքներ ստանալու ռիսկերը: Կիրառելով արդյունավետության GPS մոնիտորինգի սեփական համակարգի ցուցանիշները, մարզիչները կարող են կիրառել իրենց կողմից սահմանված ստուգիչ ցուցանիշները՝ կանխորոշելու համար, թե երբ են մարզիկները ենթարկվում վնասվածքի առավել մեծ ռիսկի: Այնուհետև նրանք կարող են հարմարեցնել մարզումը կամ հանգիստը՝ կախված մարզիկի կոնկրետ պահանջմունքներից և, նույնիսկ կանխել վնասվածքները՝ մինչ դրանց առաջանալը:

2 Մարզիկի GPS մոնիտորինգը մրցակցային առավելություն է ապահովում դաշտում: Մարզիչների ամենից տարածված մեկնաբանություններից մեկն այն է, որ մարզիկների մոնիտորինգի GPS համակարգը մրցաշարերի ընթացքում առավելություն է ապահովում իրենց համար, որը հնարավորություն է տալիս.

- կենտրոնանալ կոնկրետ մարզիկների պահանջմունքների վրա և ապահովել լավագույն անհատական զարգացումը,

- ձևավորել մարզումների ավելի արդյունավետ համակարգ, որպեսզի մարզիկները լինեն առավել առույգ և ներգրավված,
- սեզոնից դուրս մարզումների առավել տեղեկացված ծրագրեր մշակել,
- կիրառել արդյունավետության մասին տվյալները՝ խաղի ընթացքում մարզչական առավել հիմնավորված որոշումներ ընդունելու համար:

3. Մարզիկներին լավագույն մարզավիճակում պահել ողջ մրցաշրջանի ընթացքում: Մարզիչները բոլոր մակարդակներում բախվում են խաղային օրվա համապատասխան ժամին իրենց մարզիկներին լավագույն մարզավիճակում պահելու խնդրին: Մարզիչները երկար ժամանակ ինտուիտիվ որոշումներ էին ընդունում սեզոնի ընթացքում մարզումների ժամանակ իրենց մարզիկների պահանջմունքները սահմանելու հարցում: Այժմ մարզչական շտաբը կարող է հետևել խաղերի և մարզումների ժամանակ մարզիկների ծանրաբեռնվածությանը՝ մարզումների ժամանակացույցը փոփոխելու համար:

4 Խաղացողներին օբյեկտիվ տեղեկավություն տրամադրել արդյունավետության մասին: Մարզչի համար ամենից բարդ իրավիճակներից մեկը խաղացողի խաղը քննարկելն է այն դեպքում, երբ մազիկը չի տեսնում այն, ինչ մարզչական շտաբը: Ահա այստեղ է, որ օգնության է գալիս խաղացողին հետևելու GPS համակարգը:

Թվերը չեն խաբում: Սա այն է, ինչ մշտապես լսում ենք մարզիչներից: Խաղացողի հետ զրուցելն առավել հեշտ է, երբ կարող եք ասել. «Ահա խաղացողների ծանրաբեռնվածության ցուցանիշները վերջին 3 խաղերի համար, եկեք քննարկենք որոշակի տարբերություններ առաջացնող գործոնները»: Տվյալները տրամադրում են ինչպես մարզիկներին, այնպես էլ մարզչական շտաբին, ներկայացվում է նաև քանակական տեղեկատվություն, որպեսզի վերջիններս կարողանան ավելի կատարելագործվել:

5. Ուղենիշեր սահմանել թիմի և ծրագրի համար: Մարզիչները հաճախ սեզոնի սկզբում և վերջում թեստեր են կատարում իրենց մարզիկների հետ: Մարզիկների մոնիտորինգը մարզիչներին թույլ է տալիս ևս մեկ քայլ կատարել առաջ: Այժմ նրանք կարող են ստուգիչ ցուցանիշներ սահմանել՝ միջսեզոնային շրջանում՝ կոնկրետ տվյալներ կիրառելու միջոցով, և այդ ցուցանիշներին հետևել ողջ տարվա ընթացքում: Արդյունքը սեզոնի ընթացքում և տարեցտարի զարգացման առավել հստակ չափման միջոցն է:

6. Առավելություններն աշխատանքի ընդունելիս: Լավ խաղացողների առկայություն, անկասկած, փոքր-ինչ հեշտացնում է մարզչի աշխատանքը: Սակայն, ինչպե՞ս հավաքել լավ խաղացողների:

Սա ճշմարիտ է սպորտի բոլոր տեսակների՝ դպրոցական ֆուտբոլի, ուսանողական լաքրոսի կամ ակումբային ֆուտբոլի համար: Խաղացողները խաղում են այնպիսի թիմերի համար, որոնք ունեն պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակ և ձգտում են օգնել դրանց՝ ավելի լավը դառնալու համար: Մենք մշտապես մարզիչներից լսում ենք, որ մարզիկները (ու նրանց ընտանիքները) տպավորված են GPS մոնիտորինգի նորագույն տեխնոլոգիայի կիրառությամբ, և որ այն մեծ դեր է ունեցել խաղացողների ներգրավման հարցում: Ահա և վերջ: Վեց, առավել տարածված պատճառները, ըստ որոնց, բոլոր մակարդակների մարզիչները ներդնում են մարզիկների GPS մոնիտորինգի համակարգերը:

Համեմատությունն ավանդական մեթոդների հետ: Երբ խոսքը վերաբերում է ֆուտբոլիստների խաղի արդյունավետությանը հետևելուն, ավանդական մեթոդները սովորաբար հիմնվում են մարզիչների կողմից արված սուբյեկտիվ դիտարկման կամ տեսավերլուծության կիրառման վրա: Թեև այս մեթոդները դեռևս օգտակար են, GPS տեխնոլոգիան ապահովում է օբյեկտիվ տվյալներ և մոնիտորինգ՝ իրական ժամանակում, որոնք կարող են անգնահատելի լինել ինչպես մարզիչների, այնպես էլ խաղացողների համար: Ավանդական մեթոդների նկատմամբ GPS տեխնոլոգիայի հիմնական առավելություններից մեկը հավաքագրված տվյալների օբյեկտիվությունն է: GPS սարքավորումները ապահովում են խաղացողի շարժման ճշգրիտ տվյալներ, որոնք կարող են օգտագործվել տեղեկացված որոշումներ կայացնելու համար՝ սուբյեկտիվ դիտարկումների փոխարեն հիմնվելով իրական փաստերի վրա: Սա կարող է հատկապես օգտակար լինել խաղը վերլուծելիս, ինչպես նաև մարտավարության և մարզումների վերաբերյալ որոշումներ կայացնելիս: GPS տեխնոլոգիայի մեկ այլ առավելություն է դրա կողմից իրական ժամանակի ռեժիմում ապահովվող մոնիտորինգը: Ի տարբերություն ավանդական մեթոդների, որոնք հաճախ պահանջում են տվյալների՝ ձեռքով հավաքագրում և վերլուծություն, GPS տեխնոլոգիան կարող է մարզիչներին ակնթարթորեն արձագանքներ տրամադրել՝ խաղացողների արդյունավետության վերաբերյալ:

GPS տեխնոլոգիան գնալով ավելի տարածված է դառնում ֆուտբոլի աշխարհում՝ մարզիչներին խաղացողների արդյունավետության վերաբերյալ բավականին շատ տվյալներ տրամադրելու

շնորհիվ: Այնուամենայնիվ, GPS տեխնոլոգիայի օգտագործումը զերծ չէ խնդիրներից: Ֆուտբոլում GPS-ի օգտագործման ամենամեծ խնդիրներից մեկն արժեքն է: GPS սարքերը կարող են թանկ լինել, և ոչ բոլոր թիմերն են, որ ունեն դրանք ձեռք բերելու բյուջե: Սա կարող է հատկապես դժվար լինել փոքր թիմերի կամ բավականաչափ ֆինանսական միջոցներ չունեցող թիմերի համար: Սարքերի արժեքից բացի, կարող են լինել նաև լրացուցիչ ծախսեր տվյալների վերլուծության և հարակից այլ ծառայությունների համար:

Ֆուտբոլում GPS-ի օգտագործման մեկ այլ խնդիր տվյալների հստակությունն է: GPS տվյալների վրա կարող են ազդել շրջակա միջավայրի մի շարք գործոններ, ներառյալ արբանյակային ազդանշանի վատ ընդունումը, շենքերը և այլ խոչընդոտները, որոնք կարող են ազդել ազդանշանի հզորության վրա: Բացի այդ, տարբեր GPS սարքեր կարող են մի փոքր տարբեր ցուցանիշներ տալ, ինչը կարող է դժվարացնել տարբեր խաղացողների կամ թիմերի տվյալների համեմատությունը:

Ճշգրտությունը կարող է կախված լինել նաև խաղացողի վրա սարքի գտնվելու վայրից և դիրքից: GPS սարքավորումները սովորաբար ամրացվում են խաղացողի մարզաշապիկին, կամ նրանք դա կրում են ժիլետով, ինչը կարող է հանգեցնել հավաքագրված տվյալների որոշակի տատանումների: Կարևոր է համոզվել, որ սարքը ճիշտ է տեղադրված և տվյալները հետևողականորեն հավաքվում են:

Ֆուտբոլում GPS տեխնոլոգիայի կիրառման մեկ այլ խնդիր է տվյալների վերլուծության համար փորձաքննության անհրաժեշտությունը: Տվյալների վերլուծությունը մասնագիտացված ոլորտ է և կարող է հասանելի չլինել բոլոր թիմերին, հատկապես փոքր թիմերին: Առանց անհրաժեշտ փորձաքննության, կարող է դժվար լինել հասկանալ տվյալները և օգտագործել դրանք՝ արդյունավետությունը բարելավելու նպատակով:

Վերջապես, ֆուտբոլում GPS տեխնոլոգիայի կիրառումը մտահոգություններ է առաջացնում նաև գաղտնիության տեսանկյունից: GPS տվյալները կարող են կիրառվել առանձին խաղացողների տեղաշարժին հետևելու համար, ինչը կարող է համարվել գաղտնիության խախտում: Կարևոր է համոզվել, որ խաղացողները տեղյակ են հավաքվող տվյալների և դրանց օգտագործման ձևի մասին:

Ընդհանրացնելով՝ հարկ է նշել, որ, թեև GPS տեխնոլոգիան բազմաթիվ առավելություններ ունի ֆուտբոլում, ներառյալ խաղացողների շարժումների իրական ժամանակի մոնիտորինգը, վնասվածքնե-

րի կանխարգելումը և ավելի արդյունավետ մարզումները, այն ունի նաև մի շարք խնդիրներ. Դրանց թվում են սարքի արժեքը, տվյալների ճշգրտությունը, տվյալների վերլուծության մեջ մասնագիտացված փորձաքննության անհրաժեշտությունը և գաղտնիության հետ կապված խնդիրները: Թիմերը պետք է ուշադիր կշռադատեն այս գործոնները՝ GPS տեխնոլոգիայի մեջ ներդրում կատարելու և հավաքագրված տվյալները օգտագործելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

Եզրակացություն: GPS տեխնոլոգիան ապահովում է օբյեկտիվ տվյալներ և մոնիտորինգ իրական ժամանակի ռեժիմում, ինչը մարզիչներին թույլ է տալիս տեղեկացված որոշումներ կայացնել՝ սուբյեկտիվ դիտարկումների փոխարեն հիմնվելով իրական փաստերի վրա:

Այս տեխնոլոգիան կարող է օգնել կանխել վնասվածքները, բացահայտել այն ոլորտները, որտեղ խաղացողները պետք է կատարելագործվեն և ավելի արդյունավետ թիմ ստեղծեն: Այնուամենայնիվ, GPS-ի օգտագործումը ֆուտբոլում ունի նաև իր բարդությունները, ինչպիսիք են սարքավորումների արժեքը և տվյալների վերլուծության համար փորձաքննության անհրաժեշտությունը: Չնայած այս բարդություններին՝ ֆուտբոլում GPS տեխնոլոգիայի օգտագործման առավելությունները շատ ավելին են, քան ծախսերը, և այն ավելի արժեքավոր գործիք է դառնում թիմերի և մարզիչների համար: Քանի որ GPS տեխնոլոգիան շարունակում է զարգանալ, այն, անկասկած, կդառնա ֆուտբոլային մարզումների և խաղերի նախապատրաստման էլ ավելի անբաժանելի մասը:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Полишкис М.С., Выжгин В.А., Футбол, М., 1999.
2. Казаков П.Н., Футбол, М., 1978.
3. Барсук О.Л., Кудрейко А.И. Страницы футбольной летописи. Мн.: Полымя, 1987.
4. 6 պատճառ, որոնց համար մարզիչները օգտագործում են GPS տեխնոլոգիան ֆուտբոլում https://www.catapultsports.com/ru/blog/6-reasons-coaches-using-gps-athlete-monitoring
5. Ֆուտբոլային տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվել են Եվրո 2020-ում https://www.championat.com/football/article-4419335-kakie-sovremennye-tehnologii-est-v-futbole-var-gps-treking-tehnologiya-vzyatiya-vorot-i-drugie.html

6. GPS-ի աշխատանքը https://yablyk.com/171561-gps-i-glonass-chto-eto-kak-rabotaet-i-v-chem-raznica/

GLOBAL EXPERIENCE OF GPS SYSTEM APPLICATION EFFICIENCY IN FOOTBALL.

L. A. Metsoyan, M. S. Poghosyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Football, information technology, GPS system, artificial satellite, monitoring.

Research relevance: Football is a dynamic sport requiring a high level of physical and mental exertion from the players. The difference between victory and defeat can be a matter of inches or seconds, making performance optimization a critical aspect of the game. Technological advances in recent years have given teams innovative tools to increase their own performance. Among these technological tools, global positioning technology (GPS) has become popular in the football industry.

The use of GPS technology in football has changed the way teams approach training and performance analysis. GPS technology provides coaches with real-time data on player movement and performance metrics such as distance covered, speed, acceleration, deceleration and heart rate. This data can be used to optimize training programs and improve player performance by identifying areas for improvement.

Compared to traditional performance analysis methods such as video analysis or subjective observation, GPS technology provides objective data that can be analyzed more effectively. This allows coaches to make more reasonable decisions regarding player selection and training programs.

Research aim: The purpose of the research is to study the main role and features of using GPS technology in the football coach activities and the advantages of implementing GPS technology in the field of physical culture and sports, its comparison with traditional methods, as well as possible problems that may be associated with the implementation of GPS technology.

Research methods: To solve identified problems, a complex and specific historical approach was used, as well as general theoretical research methods, such as systemic and structural-functional methods, the method of comparative analysis of literary sources, as well as the empirical method of analyzing documents and websites, etc.

Research result analysis: GPS (Global Positioning System) is a satellite navigation system that provides distance, time and position measurements in the world coordinate system WGS 84. This system allows you to determine the location and speed of objects almost anywhere in the world (except for the circumpolar regions).

The GPS system consists of artificial satellites in the medium earth orbit (NAVSTAR satellite system developed in the USA) and ground monitoring stations, united in a common network. Satellites constantly transmit a navigation signal to Earth that includes a "pseudo-random code", ephemeris data (predicted satellite coordinates and movement parameters at a certain point in time) and an almanac (data for calculating the approximate position of the satellite). This signal is received by GPS device subscribers, who calculate their own geographical position based on the information received.

How does it work? A small sensor attached to a shirt that resembles a women's sports bra is placed on the player's back. Trackers help track running speed, intensity, dynamic loads, average and maximum speed, number of sprints, etc. You can even study the heat map of a player at the end of his career. The data obtained is necessary for the coaching staff to analyze the condition of the athlete and identify his weaknesses, so this device can often be seen on football players during training. Real-time results can be viewed using a special application on a smartphone, tablet or computer.

Conclusion: The use of GPS technology in football has become even more popular in recent years and offers many benefits to teams and coaches. GPS technology provides objective data and real-time monitoring, allowing coaches to make reasonable decisions based on real facts rather than subjective observations.

СИСТЕМА GPS В ФУТБОЛЕ

Л. А. Мецоян, М. С. Погосян

Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова. Футбол, информационные технологии, технология глобального позиционирования (система GPS), искусственный спутник, мониторинг.

Актуальность исследования. Футбол – динамичный вид спорта, требующий от игроков высокого уровня физических и умственных усилий. Разница между победой и поражением может составлять несколько дюймов или секунд, что делает оптимизацию производительности критическим аспектом игры. Технологические достижения последних лет предоставили командам инновационные инструменты для повышения собственной производительности. Среди этих технологических инструментов технология глобального позиционирования (GPS) стала популярной в футбольной индустрии.

Использование технологии GPS в футболе изменило подход команд к тренировкам и анализу результатов. Технология GPS предоставляет тренерам в режиме реального времени данные о передвижении игроков и показатели производительности, такие как пройденное расстояние, скорость, ускорение, замедление и частота сердечных сокращений. Эти данные можно использовать для оптимизации тренировочных программ и улучшения результатов игроков путем определения областей, требующих улучшения.

По сравнению с традиционными методами анализа производительности, такими как видеоанализ или субъективное наблюдение, технология GPS предоставляет объективные данные, которые можно анализировать более эффективно. Это позволяет тренерам принимать более обоснованные решения относительно выбора игроков и программ тренировок.

Цель исследования - изучение основной роли и особенностей использования GPS-технологии в деятельности футбольных тренеров и преимущества внедрения GPS-технологии в сфере физической культуры и спорта, ее сравнение с традиционными методами, а также возможные проблемы. что может быть связано с внедрением технологии GPS.

Методы исследования. Для решения обозначенных задач использовался комплексный и конкретно-исторический подход, а также общетеоретические методы исследования, такие как системный и структурно-функциональный методы, метод сравнительного анализа литературных источников, а также эмпирический метод анализа документов и веб-сайты и т. д.

Анализ результатов исследования. GPS (глобальная система позиционирования) — это спутниковая навигационная система, обеспечивающая измерения расстояния, времени и местоположения в мировой системе координат WGS 84. Эта система позволяет определять местоположение и скорость объектов практически в любой точке мира (кроме приполярных регионов).

Система GPS состоит из искусственных спутников на средней околоземной орбите (спутниковая система NAVSTAR, разработанная в США) и наземных станций мониторинга, объединенных в общую сеть. Спутники постоянно передают на Землю навигационный сигнал, который включает в себя «псевдослучайный код», эфемеридные данные (предсказуемые координаты спутника и параметры движения в определенный момент времени) и альманах (данные для расчета приблизительного местоположения спутника). Этот сигнал принимают абонентские GPS-устройства, которые вычисляют собственное географическое положение на основе полученной информации.

Как это работает? На спине игрока размещается небольшой датчик, который крепится к рубашке, напоминающей женский спортивный бюстгальтер. Трекеры помогают отслеживать скорость бега, интенсивность, динамические нагрузки, среднюю и максимальную скорость, количество спринтов и т. д. можно даже изучить тепловую карту игрока в конце его карьеры. Полученные данные необходимы тренерскому штабу для анализа состояния спортсмена и выявления его слабых сторон, поэтому этот прибор часто можно увидеть на футболистах во время тренировок. Результаты в режиме реального времени можно изучить с помощью специального приложения на смартфоне, планшете или компьютере.

Краткие выводы. Таким образом, использование технологии GPS в футболе в последние годы стало еще более популярным и дает много преимуществ командам и тренерам. Технология GPS предоставляет объективные данные и мониторинг в режиме реального времени, что позволяет тренерам принимать обоснованные решения, основанные на реальных фактах, а не на субъективных наблюдениях.

Տեղեկություններ հեղինակների մասին

Լիդա Ալբերտի Մեծոյան՝ Հասարակագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: lida.metsoyan@sportedu.am

Մանյա Սերոբի Պողոսյան՝ Հասարակագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: manya.poghosyan@sportedu.am

Information about the author

Lida Albert Metsoyan, Lecturer of the Chair of Social and humanitarian sciences, Armenia State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: lida.metsoyan@sportedu.am

Manya Poghosyan, Lecturer of the Chair of Social and humanitarian sciences, Armenia State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: manya.poghosyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 26.08.2023–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 27.08.2023–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյան

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

«Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» խորագրով պարբերականում հրատարակվում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների գիտական և գիտամեթոդական հոդվածներ:

Պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ–ի գիտական հրատարակությունների ցանկում:

Պարբերականի հիմնական բաժիններն են՝

1. Օլիմպիական սպորտ. օլիմպիզմը, օլիմպիական կրթությունը և ժառանգությունը ժամանակակից սպորտում
2. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժական հիմնախնդիրները
3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հոգեբանական հիմնախնդիրները
4. Սպորտային գործունեության և առողջ ապրելակերպի բժշկակենսաբանական հայեցակետերը
5. Ֆիզիկական վերականգնման հիմնախնդիրները սպորտում
6. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրան և ադապտիվ սպորտը ժամանակակից աշխարհում
7. Սպորտային տուրիզմի զարգացման հեռանկարները
8. Սպորտի կառավարման նորարարական տեխնոլոգիաները

Հոդվածներն ընդունվում են՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

Պարբերականի հոդվածների ընդունման և հրատարակման ժամկետները.

N	**Ընդունում**	**Հրատարակում**
1.	դեկտեմբերի 1 – մարտի 1	մայիս
2.	ապրիլի 1 – հուլիսի 1	սեպտեմբեր
3.	օգոստոսի 1– նոյեմբերի 1	դեկտեմբեր

Տեխնիկական պահանջներ

- Էջի վերևում՝ ձախ անկյունում, նշվում է հոդվածի ***համընդհանուր փաստոր-դական դասակարգման՝ ՀՏԴ (УДК) կոդը.***
- 1 ինտերվալ ներքև՝ էջի կենտրոնում, գլխատառերով գրվում է հոդվածի վերնագիրը՝ թավ (bold, տառաչափը՝ 12),
- 1 ինտերվալ ներքև՝ աջից՝ 1 տողով՝ հեղինակների (3-ից ոչ ավելի) անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ՝ թավ (bold, տառաչափը՝ 11),
- 1 ինտերվալ ներքև՝ աջից՝ կազմակերպության, քաղաքի, երկրի անվանումները՝ թավ (bold, տառաչափը՝ 11),
- 1 ինտերվալ ներքև՝ էջի լայնությամբ, նշվում են առանցքային բառերը և բառակապակցությունները (8–10 բառ),
- 1 ինտերվալ ներքև՝ առանձին պարբերությամբ ներկայացվում է բուն տեքստը:
- Հոդվածի ամբողջ ծավալը ***6–8 լրիվ էջ է (ներառյալ աղյուսակներ, գրամագրեր)***:
- Տեքստի ձևաչափը՝ A4 ֆորմատի թուղթ (210x297 մմ), MS Word 2007, տառատեսակը՝ GHEA Grapalat (հայերեն), Times New Roman (անգլերեն և ռուսերեն), տառաչափը՝ 12, տեքստը՝ էջի լայնությամբ հավասարեցված, առանց տողադարձերի:
- Միջտողային տարածությունը՝ 1, էջի յուրաքանչյուր կողմից 2 սմ լուսանցք, նոր պարբերությունը՝ 1 սմ:
- Հոդվածի բոլոր բաժինների անվանումները՝ առանցքային բառեր, արդիականություն, հետազոտության նպատակ, հետազոտության խնդիրներ և այլն, նշվում են՝ թավ (bold):

Տեքստի կառուցվածքը.

Առանցքային բառեր:

Հետազոտության արդիականություն: Ներառում է հիմնախնդրի ուսումնասի-րության կարևորությունը, վիճակը և արտացոլումը գրական աղբյուրներում:

Հետազոտության նպատակը, խնդիրները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Նշվում են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները՝ մեկ տողով՝ օգտագործված սարքեր, հետազոտվողների քանակակազմ, հետազոտության կազմակերպում (վայրը, տևողությունը, ժամանակահատվածը):

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ներկայացվում են և վերլուծվում հետազոտության արդյունքում ստացված տվյալները, փաստերը, տրվում աղյուսակներ և տրամագրեր (**ընդհանուր՝ 2–ից ոչ ավելի՝ սև–սպիտակ**): Աղյուսակի վանդակում թվի բացակայության դեպքում դրվում է գծիկ:

Եզրակացություն: Համառոտ ներկայացվում են հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կատարված եզրահանգումները՝ չկրկնելով հոդվածի այլ բաժիններում տրված ձևակերպումները (կարելի է ներկայացնել նաև առաջարկություններ):

Գրականություն: Ըստ այբբենական կարգի՝ համարակալված ներկայացվում է 5–10 գրական աղբյուր, որից 50%-ը՝ վերջին 10–ը տարվա հրատարակության:

Սկզբից տրվում են հոդվածի լեզվով աղբյուրները, որից հետո՝ օտարալեզու: Հղումները տեքստում կատարվում են քառակուսի փակագծերում՝ նշելով գրականության աղբյուրի հերթական համարը, օրինակ՝ [3] կամ [1,5,6]:

Ամփոփագիր: Բոլոր բաժինների տառաչափը՝ 12, թավ (bold),

- 1 ինտերվալ ներքև ներկայացվում են ամփոփագրերը՝ 2 լեզվով. հայերեն տեքստին՝ անգլերեն և ռուսերեն, ռուսերեն տեքստին՝ հայերեն և անգլերեն, անգլերենին՝ հայերեն և ռուսերեն:
- Էջի կենտրոնում՝ գլխատառերով գրվում է հոդվածի վերնագիրը՝ թավ (bold, տառաչափը՝ 12),
- 1 ինտերվալ ներքև՝ աջից՝ մեկ տողով հեղինակների (3-ից ոչ ավելի) անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ՝ թավ (bold, տառաչափը՝ 11),
- 1 ինտերվալ ներքև՝ կազմակերպության լրիվ անվանումը, քաղաքը, երկիրը՝ թավ (bold, տառաչափը՝ 11):
- 1 ինտերվալ ներքև տրվում է հոդվածի ամփոփագիրը (**ABSTRACT, АННОТАЦИЯ**)՝ ***230–250 բառ,***
- 1 ինտերվալ ներքև ներկայացվում են առանցքային բառերը կամ բառակապակցությունները **(8–10 բառ):**

Հոդվածի ամփոփագրում պետք է առանձնացվեն հետևյալ բաժինները՝

1. Առանցքային բառեր
2. Հետազոտության արդիականություն (3-4 նախադասություն)
2. Հետազոտության նպատակ
3. Հետազոտության մեթոդներ և կազմակերպում
4. Հետազոտության արդյունքների վերլուծություն
5. Համառոտ եզրակացություն

Ամփոփագրի ընդհանուր ծավալը՝ 230-250 բառ:

Օտար լեզուներով ամփոփագրերն ունեն կարևոր նշանակություն, քանզի տվյալ ոլորտի օտարերկրյա մասնագետի համար բովանդակում են հոդվածի վերաբերյալ հիմնական տեղեկատվություն: Ամփոփագրի հիման վրա մասնագետը կարող է հոդվածն ուսումնասիրել ամբողջությամբ և կատարել համապատասխան հղումներ:

Ամփոփագրից 1 ինտերվալ ներքև՝ 11 տառաչափով, նշվում են տեղեկություններ հեղինակի(ների) մասին՝ անուն, հայրանուն, ազգանուն՝ ամբողջությամբ, գիտական աստիճան, գիտական կոչում, զբաղեցրած պաշտոն (ամբիոն, ստորաբաժանում), կազմակերպության լրիվ անվանումը, քաղաքը, երկիրը, հեղինակի էլեկտրոնային հասցեն, ***ORCID–ը (եթե առկա է):***

Հեղինակների մասին տեղեկությունները ներկայացվում են ՝ 2 լեզվով. հայերեն տեքստին՝ հայերեն և անգլերեն, ռուսերեն տեքստին՝ ռուսերեն և անգլերեն, անգլերենին՝ անգլերեն և հայերեն:

Վերը նշված պահանջներին չհամապատասխանող հոդվածները չեն ընդունվում և չեն ուղարկվում խմբագրական հանձնախումբ՝ հետագա գրախոսման:

Հեղինակը 10–ն օրվա ընթացքում իր էլեկտրոնային հասցեով տեղեկացվում է հոդվածի ընդունման, անհրաժեշտ շտկումներ կատարելու կամ հոդվածի մերժման մասին:

Նյութերն անհրաժեշտ է ներկայացնել՝ էլեկտրոնային և 1 օրինակ տպագիր տարբերակով:

Հոդվածը նախկինում պետք է հրատարակված չլինի:

Հոդվածի բովանդակության պատասխանատուն հեղինակն է:

Յուրաքանչյուր հոդված ստուգվում է անտիպլագիատով:

Յուրաքանչյուր հեղինակ պարբերականի 1 համարում կարող է ներկայացնել 1 գիտական աշխատանք՝ առանց համահեղինակների կամ համահեղինակներով:

Յուրաքանչյուր հոդվածին տրվում է միջազգային թվային համարանիշ՝ DOI:

Ասպիրանտները և հայցորդները հոդվածի հետ (առանց համահեղինակի) պետք է ներկայացնեն կարծիք՝ ոլորտի գիտնականի կամ առաջատար մասնագետի կողմից:

Հոդվածները ներկայացնել հետևյալ հասցեով՝
Երևան 0070, Ալեք Մանուկյան 11, 2–րդ հարկ՝ Գիտամեթոդական բաժին,
հեռախոսներ՝ (010) 55–33-10/1-64, 055.36.89.19 Երանուհի Սիմոնյան, էլ. հասցե՝
eranuhi.simonyan@sportedu.am

Հոդվածի ձևակերպման օրինակ

ՀՏԴ 796.33

ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՍՊՈՐՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՆՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ա. Մ. Ոսկանյան[1], Կ. Ռ. Սերոբյան[2]
[1] Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,
[2] Շիրակի պետական համալսարան, Գյումրի, Հայաստան

Առանցքային բառեր: Սոցիալականացում, արդի հասարակություն, սպորտ, անձի զարգացման գործառույթ, առողջության ամրապնդում:

Գրականության ձևակերպման օրինակ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Յու.Գ., Չատինյան Ա.Ա., Կարապետյան Ի.Ք., Ֆիզիկական կուլտուրայի անհրաժեշտությունն ուսանողների տեսանկյունից, Հանրապետական 29-րդ գիտամեթոդական կոնֆերանսի թեզիսներ, Երևան, 2002, էջ 15:

2. Մանուկյան Ա.Լ., Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում, Ատենախոսության սեղմագիր ...., մանկ. գիտ. թեկ., Երևան, 2020, 22 էջ:

3. Ղազարյան Ֆ. Գ., Սպորտային պատրաստության հիմունքները, Դասագիրք, Երևան, Ջոքեր հրատ., 1993, 212 էջ:

4. Терехина Р.Н., Уровень специальной подготовленности лидеров гимнастического помоста в первый год олимпийского цикла / Р.Н. Терехина, С.В. Борсиенко, Н.Н. Коврижных // Ученые записки университета имени П. Ф. Лесгафта. – 2017. – № 10 (152). – С. 244-248.

5. Dowling M., Edwards J. & Washington M., Understanding the Concept of Professionalisation in Sport Management Research, Sport Management Review, 2014; 17(4)p. 520–529.

6. Романовская Н.Е., Понятие профессиональной компетенции [էլեկտրոնային ռեսուրս] http://media.miu.by/files/store/items/lifelong/11/11_life_long_learning_5_10.pdf [մուտք՝ 12.05.2023]

7. https://fkis.ru/page/1/161.html [մուտք՝ 12.05.2023]

Տեղեկություններ հեղինակների մասին *(ձևակերպման օրինակ)*

Արմեն Մայիսի Ոսկանյան՝ մ.գ.թ., Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: a.vosk@sportedu.am,
ORCID: 0000-0001-6608-6635
Կարեն Ռազմիկի Սերոբյան՝ մագիստրանտ, Շիրակի պետական համալսարան, Գյումրի, Հայաստան, E.mail: k.ser@ssy.am, ORCID: 0000-0002-5711-5784

Information about the authors *(Example of formulation)*

Armen Mayis Voskanyan, PhD Associate Professor of the Department of Sports Pedagogy and Psychology, Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia, E-mail: a.vosk@sportedu.am, ORCID: 0000-0001-6608-6635
Karen Razmik Serobyan, Student of Master's Degree, Shirak State University, Gyumri, Armenia, E-mail: k.ser@ssy.am, ORCID: 0000-0002-5711-5784

ԿԱՐԾԻՔ

«Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ»

պարբերականի հոդվածի

Հոդվածի վերնագիր.

Հոդվածի հեղինակի անուն, ազգանուն (գիտական աստիճան, կոչում).

Թեմայի արդիականության հիմնավորման աստիճան.

Հետազոտության նպատակի հստակ ձևակերպում.

Գիտական նորույթ

Հետազոտության տեսական ու գործնական նշանակություն.

_____
_____
_____
_____
_____

Ընտրված մեթոդների համապատասխանությունը հետազոտության խնդիրներին.
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հետազոտության արդյունքների վերլուծության աստիճան.
_____
_____
_____
_____
_____
_____

Եզրակացության համապատասխանությունը հետազոտության խնդիր-ներին._____
_____
_____
_____
_____
_____

Վերջին 10 տարում ուսումնասիրված գրականություն (տոկոս)._____
_____
_____

Դիտողությունները և առաջարկությունները (տվյալների մաթեմատիկական ոչ լիարժեք մշակում, չհիմնավորված դատողություններ, տեխնիկական բնույթի թերություններ, ամփոփագրի թերի ներկայացում և այլն).
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հոդվածը տպագրության երաշխավորելը._____
_____
_____
_____

Գրախոս՝ _____
(*գիտական աստիճան, կոչում, անուն, ազգանուն*)

.

_____
(ստորագրություն)

«_____» «_____» 202 թ.

<u>Հոդվածների կարծիքները ներկայացնել ստորագրված՝ սկանավորված PDF տարբերակով:</u>

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գիտամեթոդական պարբերական

SCIENCE IN SPORT: MODERN ISSUES

Scientific and methodical journal

НАУКА В СПОРТЕ: СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ

Научно-методический журнал

№ 3 (10)

Սրբագրիչ՝ Ե.Վ.Սիմոնյան

Համակարգչային ձևավորող՝ Լ.Ա.Մեծոյան